Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2967

533

88
Ц-22

2011

20 03



2082
88
Ե-22

ՍԱՍԿԻ

ԵԶԱՓՐՈՍԻ

ԹԱՐԳՄԱՆԵԱԼ

Ի ԳԱՂԴԻԱԿԱՆ ԼԵԶՈՒԷ

ՅԱԽԵԼՄԱՄԲ ՈՏՆԱԻՈՐ ԻՄԱՍՏԻՅ

ԵԻ ԲԱՐՈՑԱԿԱՆ ԽՐԱՏՈՒՑ

Ի Հ. ՄԽՆԱՍ Վ. ՔՅՇԿԵԱՆ

Ի ՄԽԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՁՌՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի ՎԻՆԵՑԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՑ ՂԱԶԱՐԱՑ

1860

8108-57
9
98301-042

ՎԱՐՔ

ԵՋՈՎԲՈՍԻ

ՇԱՐԱԳՐԵԱԼ ՀԵԼԼԵՆԵՐԷՆ

Ի ՄԱՔՍԻՄՈՍ ԲԼԱՆՈՒՏԷ (1)։

ԳԼ. Ա.

Մանկտանէ խաչասիրտ եղայր՝ ի հանդէս,
Եղբէր՝ ի լուրջ իւր դպրոց իւրէն ջիղէս.
Ու՛ր անբանի յուշէր ճառէն գիպնապէս,
Հրահանգել ըմմուդ չինաւորը պէտպէս։

Եաս պիտուն մարդիկ գեղեցիկ քննեալ մարդկային գործողութիւնները և ապրուստբուծանց պատճառները՝ չանացին աշխատեցան, որ էութի եկողները պէս պէս խրատներով կրթեն և բարեկարգեն։ Բայց Եղովբոս քան զամէնը գերազանցեց. որուն գործքին մէջ ամէնէն աւելի կը վայլէ

(1) Բլանուա Մաքսիմոս էր յոյն իրծնաւորը, որ հին բաներու փեղէաի ըլլալով էնչիսոֆաներուն պատասխանները ծողվէց ի գիրս ըրաւ։ յետոյ Եղով-

Խնամատարութիւնն ու բարոյական հանճարը. որ գրեթէ վերին զօրութիւնն շարժելով պարտաւորեալ սահմանել մարդկանց բարոյականութեան այսչափ գեղեցիկ և օգտակար կանոններ, որ շատ վեր են երևելի փիլիսոփաներուն տուած կանոններէն, որոնք որ մինչև ան տեղն աշխարհք էին եկեր: Իբր զի՝ Եղովբոս չկամեցաւ առաջ բերել բարակ տահմաններով պատճառներ, և երևելի պատմութիւններէ օրինակներ, որպէս զի կարենայ մարդուս միտքը համոզելով բռնադատել՝ որ առաքինութիւնը սիրէ ու մեղութիւնէ փախչի: Ուրիշ բանով չուզեց մարդկանց վարդապետել. բայց միայն առակով, որ կըսուի Ա-ասոպէ (1). որով իբր վախ մը կուտայ թէ թռչուններն և այլ կենդանիներն որ խելք ու միտք չունին, միայն բնական հասկացողութեամբ շարժելով շատ բաներ կը հեռու կեցան. իսկ մարդիկ որ ունին բանականութիւն, պէտք է ամբչնան երբոր չեն զգուշանար անանկ բաներէն, որ ա-

բոսին վարժն ալ հին գրեանց մէջէն և հինէրուն բերնէն լսելով շարադրեց, որ Փռանսըզներէն ընթերցանաց ըլլալով՝ ինձ ալ աշխարհաբառ դարձոնին: Կերևնայ ի՛նչ մէր մէջ ալ հին ապենը ընթերցանաց պիտի ըլլայ. վասն զի հին գրեանց մէջ Եզովբոսին բաները կը գտնուին:

(1) Ա-ասոպէ կըսուին անանկ առակները որ իրօք չեն եղած, այլ յօրինուած են. որպէս ի՛նչ կենդանին և անդուռնչ բանը կը խօսի: Անանկ առակները հին ժամանակը շատ կը գործածուէին ամեն ազգի մէջ, Հայոց՝ Յունաց՝ արաբացւոց՝ մանաւանդ Հրէից

պաեանելը և ուրիշ կենդանիները պատշաճ նալով ազատեցան մեծամեծ վտանգներէ իրենց ճարտարամիտ խորագիտութիւնը, և երբեմն շատ մեծ օգուտներ ալ շահեցան երբոր առիթը պատահեցաւ: Ոսոպի Եզովբոս իր վարքը նոր քաղաքավարութիւնե և իմաստասիրութիւնե պատկեր մը ձևացընելով դրաւ ամենուն առջին. և ատով փիլիսոփաներէն երևելի եղաւ, որ առաւել գործքով քան թէ խօսքով վարդապետեց:

Ծնաւ Եզովբոս Ամորիոն քաղաքը մեծին Փռիւգիոյ (1), եւ անաւ ծառայական վիճակի մէջ: Ասոր շատ յարմար կուգայ Պլատոն փիլիսոփային գեղեցիկ խօսքն որ կոչհաս ըսուած արամախոհութիւնը մէջը ճշմարտութիւնը կը խօսի, թէ || Բնութիւնն ու օրէնքը շատ անգամ իրարու հակառակ են || : Վասն

մէջ, ինչպես յայտնի է Աքիլլէին: Բայց գիտուն էրէտ պէտք կը բացինէն առաստելը. ա Բանական, որ մարդս բարւոք կը յայտնէ. ե ընդունայ բանն ընդունի պէս կը ցնծայնէ. ինչպես է հէ առաքը Եզովբոսին, ե անոր նմանները: Բ Բարկասկան, որ անբանները բարւոք բացատրելով իրապս կը հանէ. ինչպես է բ ե այլ առաքները Եզովբոսին: գ Խաղան. որ կը ցնծայնէ, ըն մարդը կը խօսի անբանին հէպ. ինչպես է ը առաքը, ևօ:

(1) Փռիւգիա է գաւառ Ասիոյ՝ գաղատիայեն ու հին Ասիոմպօլիին մէջ պէղը. որ շատ փաղփնեը ուներ պաքը. մէկն ալ է Ամորիոն քաղաքը, ուր ձնաւ Եզովբոս յամի աշխարհի 5400, էէր 600 պատրի առաջ Քրիստոսի ըսուածին. որ հին ապէնէն է վեր շատ երևելի եղաւ էրեն առաքներուը. ըն-

զի բնութիւնը տուաւ Եղովբոսին մեծութիւն ազատ հոգի մը, բայց մարդկային օրէնքը դրաւ զայն ծառայական վիճակի մէջ. սակայն այս օրէնքը չկրցաւ այլայլել անոր հոգւոյն ազատութիւնը, երբոր իր գերի վիճակը գինքը մէկ դիէն մէկալ դին նետելով կը չարչարէր. և զանազան վիշտ նեղութիւնները՝ ոչ երբէք կրցան զայն իր բնական կարգէն փոփոխել:

Բաւական չեղաւ Եղովբոսին գերի վիճակը, այլ և դէմքը խիստ դարշատեսիլ էր. անանկ որ աշխարհք չէ եկած այնպիսի տգեղ մարդ. վե՛ր զի գլուխն էր սրածայր երկայն, քիթը տափակ, վիզը հաստ ու կարճ, պըտկունքը թանձր, գոյնը սև, կապուտ. և սա պատճառաւ կըսուի Եղովբոս, այսինքն էթիոբա, որ կը նշանակէ Եթովպացի (1): Ակէ՛ն զատ վարը չափազանց դուրս էր, կռնակը

պէտ գերի ծնաւ, բայց ճար ըրաւ Ամիսոփ գնոյ բարոյական ֆիլիսոփայութիւնն սորվելոյս, որ շատ յարգելի ուսում էր. բայց պետաւ որ ան վիճակին մէջ այնոց բան լի կրնար սորվելու, ուխտաւ կենդանիներուն բերնեն խօսելով աս առակները գրել, որ գերի ատով կարենայ բարի վարք սորվելու. որ շատ մեծ յարգութիւն ունեցաւ նախ Յունաց մէջ, որ Սոկրատ ֆիլիսոփան ան ատենն ոտանաւոր դարձուց բոլոր առակները, և յետոյ ամեն ազգ ըստգմանելոց ախորժելի ընելուն համար:

(1) Եղովբոսին ծնողքը Եթովպիայեն, կամ Հապեշեն կողմերեն էկած ծախուած էին Փռիգիոյ մէջ. ուստի իրենց որուն որ գերին էին, Եղովբոս ալ նախ անոնն էր. յետոյ ծախուելոյս ուրիշներուն:

ծուռ սապատոն (խաչ) · այնչափ որ ա-
ստր տգեղութիւնը աւելի էր քան գԹերսիաե-
սին (1), որ ծիծաղելով կը նկարագրէ Հո-
մերոս: Ամէն բանէն աւելի մեծ պակասու-
թիւնն էր դժուարախօսութիւնը · որուն
խօսքն էր անհշան և ձայնն անորոշ (2):

Ահա այս ամէն պակասութիւններս յարմա-
րեցան Եղովբոսի ծառայական վիճակին, որ
այնպիսի արտառոց բաներու մէջ գտնուե-
լով ասանկ տգեղ և անյարմար մարմնոյն ինչ-
պէս կրցաւ իր ծառայական կեանքը վարել:
Թէպէտ ասանկ անշնորհք էր դրսի տեսքը և
մարմինն այլանդակ, բայց հոգին Եղովբոսի
ազնիւ էր, արամիտ եւ քաղաքավար · որ զա-
նազան գիւտերով և խելքով լեցուած՝ շու-
տով կը գտնէր ամէն բանին հնարքը, որչափ
խրթին և նուրբ բան ըլլար (3):

(1) Թերսիտէս յոյնը անանկ գարշապետիլ էր՝
հաղա, անշնորհք, որ պապհիներն առաջ էին ըրեր ·
ինչպէս Հոմերոս բանաստեղծն ալ ծաղր ընելո-
համար անոր հերպարանքը կը նկարագրէ: Ան փգեղ
և անապարձ մարդն օր մը գնաց հերթիւլէս փալին
փոխ, ան ալ մեյ մը յետ փոխ պէս՝ ընկա-
ռաւ, երբ 1200 փարի քով նաւականէն առաջ:

(2) Բլանոպ այսպէս փգեղ կը նկարագրէ · բայց
կան որ կըսեն Ին Եղովբոսին ինչպէս որ խեժը գե-
ղեցիկ էր, անանկ ալ մարդին, և խիստ յարմար
փաղցրախօսին երաժիշտ էր ամենեն վեր:

(3) Շատ առակներ խառնուեցան Եղովբոսին
առակներուն հետ, անանկ որ Եղովբոսեն առաջ և
յետոյ շինուած առակներուն շատը Եղովբոսին
գործին մէջ խառնեցին: Ան պատճառաւ որչափ

ԳԼՈՒԽ Բ.

ՀՐԱՊԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒԱՆԳԵԼԻՈՅ։

Եղեմտացին առջի տեղն որ վինջը գներ էր, տասնիկ կոչտ և անշնորհք տեսնելով զայն՝ միտքը դրաւ Թէ տանը ծառայութիւնը չտալուն կրնայ ընել, ուստի որոշ խրկեց որ հոն երթայ վարձելով աշխատի. քայց Եղեմտա հոն գացածին պէս սկսաւ տնտնիկ լաւ աշխատիլ պատմեց որ չի կրնար ըլլալ։ Օր մը տէրը պէտք ունեցաւ գնաց տեսնի գործքերը նայելու համար. մէկ պատրոհզպան մը տեսնելով ա՜նոր գալը՝ ընծայ բերաւ նրան տանն մը խոտաձիւնէ և պատուական Թռուչ, որ սկսաւ ա՜նոր հոտիլ, ու տուաւ պահելու իր մէկ ընտանի ծառայեն, որ կըսուէր Ագամօրտս (1), որպէս զի երբոր բաղնիքէն գայ՝ տայ ին բերէ։ Ան միջոցիս մէջ պէտք եղաւ որ բաղնի մը հանար Եղեմտա տունը մնաց։ Ագամօրտս ա՜ն բանն երբեք տեսի ընելով, գնաց

էջին մէջ որ Խարգմանած կայ, հետևեր է. որուն մէջ ասելի է, որուն մէջ պակաս։

(1) Ագամօրտս կը Խարգմանի բարեկամն պաշտպանեալ. որ կերևայ Թէ արտգաշարժ ազգայի մարդ ըլլալով ա՜ն անուամբ կը կոչուեր. և անով սերեալի եղած էր փերսէն որ հայաբնակեցաւ ա՜ն շրջարտուհիան ընելու Եղեմտային վրայ։

լը ընկերնեբուն մէկին ըսաց Թէ ևկո ա
Թզիրը մինք ուտինք. երբոր մը ուբին ու
զէ, Եղուկասին վրայ կը ձգինք Թէ ուշը
մոռնալու առնը կերուս ծածուկ: Ա բա
նիս վրայ մինք կրնանք շատ ատեր չինելու՝
որ Հշմարիտ երևնայ, անանկ որ Եղուկաս
չիկարենայ ա զատարուԹիւն զինքն արդա
րացընել. որովհետև անոր վիպասուԹիւնը չի
կրնար դէմ կենալ մեր մէկ խօսքին երբոր
լաւ հատատանինք, հապա ինչպէս պիտի կա
րենայ մեզի սուտ յայտնել. մանաւանդ մեզի
պատմուԹան ատեն մէկ պատճառ մը ցուց
մունք մը չունի:

Ասանկ խորհուրդ ընելէն ետև՝ ա ըրած
միաբանուԹիւնէ չար խորհուրդը կատարելին,
և ամէն մէկ Թուզն ուտելու առնը բարձր
Հայնով կը ծիծաղէին ըսելով. || Վայ քեզ
ոզորմելի Եղուկաս ||:

Եւս ատեր բաղնիքէն և ուզեց որ Թուզը
բերին. երբոր ըսեց Թէ Եղուկասը կերաւ,
անանկ բարկացաւ, որ մէկէն հրամեց պի
տոցը հաներ. որ տեսածին ալս կանչեց.
այ Թշուառական, ինչպես յանդգնեցար մատը
սեղանատունն ու կերար Թզերն որ ինձի
համար պահուած էր:

Եղուկաս լսելով ա յանդիմանուԹիւնը՝ լաւ
հասկըցաւ բանը. բայց գժուարուԹիւն հան
էր որ չէր կրնար իսկ արտաբերել ու պա
տասխան տալ: Ա պատճառաւ շուտով
յայտնեցաւ սուտ վկանէրուն խօսքերը. և
տեսաւ Թէ չարաչար ծեծ պիտի ուտէ, ըն
կաւ տիրոջ ոտքը, ձեռ ապաչանքով խնդրեց
որ չինչ մը տան ոյ երին: Ոտաւ վազեց

կերակուր եփելու տալն ու քիչ մը տաք ջուր բերաւ հան խմեց. յետոյ մնաց խօթեց բերանին մէջ սիրտը եւ բերաւ: Նայիս բերնէն պարզ ջուր եկաւ, մի ղև բոլոր օրը բան չէր կերած: Եաքը ապաչեց տիրոջն որ հրամայէ ամբաստանող Թշնամիներուն, որ անոնք ալ անանկ ընեն. որպէս զի յայտնի լլայ Թէ ով է կերեր զանոնք, և ուրիշն խօսքով չնեղաբուի:

Իսկ տէրը զարմանալով անոր սրամիտ ուշիմութիւնը վրայ, պատուիրեց որ տուտ վկաներն ալ խմեն ան ջրէն որուն առջին: Անոնք ալ խմեցին, բայց վոհանակ որկորը (պօղպոզը) տանելու մնաց, պէտ 'ի ընտերքը տարին, որ չխփանեն: Սակայն հազիւ Թէ խմելը լմընցուցին, ներսերնին աւրուելով գանկ մը եկաւ բերնոց, և ահա բոլոր կերած Թզերը դուրս եկան. որոնց յանցանքն և անօրէնն զբոլոր պարտուելը յայտնի եղաւ ամենուն: Իսկ տէրը հրամայեց մեկալ ծառաներուն, որ զանոնք մերկացընեն, և լաւ մը ծեծեն: Որոնք ան տանելը բերնոց վրայ փորձելով լաւ հասկցան աս առակին ճշմարտութիւնն որ կըսէ. || Ով որ նենգութիւն չարութիւն կը պատրաստէ ընկերին, բոլոր իր գլխուն կը բերէ ուրիշին համար ուզած չարիքը || (1):

(1) Եղբ֊ոն աս առջի փերը կերևայ ըէ փոխ֊գիա գիներ էր Եղբ֊ոը Ամէնոքէն պատանէնքէպա. իսկ Ամէնոք երևալը՝ ծնողքին փերոջ հրամանովը պիտի ըլլայ, որ ջեռնէլքէն եպա առը ծախուած կերևայ. իսկ աս մարդն երբա ջեծապուան էր, բայց անխոպ ըլլալով Եղբ֊ոին յորգը էնչպէր:

Գլ. Գ.

Հերասթրատեան Եղեռնը։

Միւս օրը առտը քալաք գարձաւ, և Եզով
բոս երկիր փորելով կաշխատեր ինչպէս որ
պատուիրած էր իրեն։ Եվաս որ Աբսեմի-
սին (1) քուրմերն ուրիշ մարդկանց հետ
դիպուածով Ճամբային մոլորեցան և ժուռ
գալով եկան Եզովբոսին հանդիպեցան,
երդուսով ապաչեցին թէ վանատուր Դիո-
սին (2) համար ըլլայ՝ քալաքին Ճամբան ի-
րենց ցցընէ։ Ան ալ ժուռ մը զանոնք նաւե-
ցուց ծառին տակը շուք տեղ մը, և իրենց
քիչ մը ուտելու բան հանեց լաւ մը մեծարե-
լեաց պատուելով զանոնք առաջնորդու-

(1) Աբսեմիս լեռնահին մը կը Անտիվան կը-
ոտէը, որ Հայոց ազգին գլխաւոր հատոփն էր. Ո-
հէհատ վարդապատն երբեմ էին անուանը։ Կա-
պադովկիները կըսէին որ աս լեռնահին Դիոսին ազ-
գին էր և Ապոզոնին փոյրը. որ Բոլոր Ասիոյին
պաշտպանը երբեմ էին. անոր համար ասոր փոր-
ձէրն ալ (Հէյմսերը) ասանկ պապուէցան Եղեռ-
ոէն։ Տես որ ձ'էմարտանին 631 համարը։

(2) Դիոս կամ Արամազդ՝ կոռնոս ծէր լեռնին
որդին ըլլալով. Բոլոր լեռնէրուն հայրը կը կո-
չոէր և ամէնուն գլուխը. որ հին հռապագներըմ
անանկ ձէ կը դնէին, որ անոր անուանը բնչ կո-

Թէ ըրաւ մինչև հիսուկ Համբան հանեց : Իսկ Համբարդնեբն ուրախանալով Եզովբոսին մեծարանացը վայ, և անոր երախտիքը ճանչնալով չերմեռանդ սրտով Թևեբնին վերցուցին երկինք ու աղօթք ըրին պաղատանքով իրենց բարերար Եզովբոսին համար : Եզովբոս դարձաւ իր տեղը, բայց Համբոն աշխատանքէն և տաքէն յոգնած ըլլալով պառկեցաւ քնացաւ : Բայց քունին մէջ երազ մը տեսաւ Թէ Բաղդը (1) մօտեցաւ իրեն, ու լեզուն բացաւ և իրեն տուաւ զօրութիւն խօսելու, և առակներ չինելու : Ո՛հ ըսաւ արթննալով, ինչ անուշ քնացեր եմ, և ինչ բարի երազ տեսայ. ահա ինչպէս զարմանալի գիւրութիւբ կը խօսիմ. ահա առանց դժուարութեբ կրնամ ամէն բանին անունները բերբ ու արձանագրուբին պայ. բայց ատոբնի համար մի ուրախանար, ասոբնի համար մի պարծենար, ասոբնի համար մի յուսար, ասոբնի համար մի վստահիր, ասոբնի համար մի ապաւինիր, ասոբնի համար մի յենուր, ասոբնի համար մի ապաստանիր, ասոբնի համար մի յոյս դնէր, ասոբնի համար մի հաւատար, ասոբնի համար մի հաւանիր, ասոբնի համար մի համոզուիր, ասոբնի համար մի համարձակիր, աս

խարէն, որ մոլորած օտարականներուն ըրեր։ Ուրեմն երբոր մէկը բարեբարութիւն կընէ, պիտի յուսայ թէ հարկաւ իրեն ալ բարի կըլլայ։ Եղովբոս տեսնելով թէ ատ մեծ բարիքն իրեն հանդիպեցաւ՝ ուրախութիւն լեցուած սկսաւ ալ աւելի հոգ տանելով աշխատիլ տնտնկ սրտանց որ չէ եղած։

ԳԼ. Դ.

Վաճառուն Եղովբոսի։

Չէնաս տնտնալ մէկը վերսկացու էր գնելն տանը, ուր կաշխատեր Եղովբոս։ Ատ մարդն էլաւ սրտը գնաց որ տեսնէ թէ ծառաները հաւատարիմ կաշխատի՞ն ինչ որ իրենց հրամայած է։ Տեսաւ որ աշխատողներուն մէկը անհոգութիւն իր գործքը թողուցեր էր աշխատեր, մէկէն վրան վազեց սկսաւ ատտիկ ծեծել խեղճը։ Ատ անպիտութիւնը չդիմացաւ Եղովբոս. սիրտը ցաւելով մօտեցաւ ըսաւ, ինչո՞ւ համար ատանկ չարաչար կը զարնես խեղճ մարդուն, որ քեզի պէտութիւն մը չէ ըրած. դուն ան մարդը չէս որ ամէն օր բոլոր տանը մարդկանց նեղութիւն և չարչարանք կուտաս առանց պատճառի. իրաւ որ ըրածներդ կըսեմ մեր սիրտը։ Չէնաս լսելով Եղովբոսին զուրցած խօսքերը շատ զարմացաւ անոր համարձակութիւնը վրայ. ուստի մէկէնմէկ ինքնիրեն

մոմլուսալով կըսէր Թէ ահա Եղովբոս խօսիլ սկսաւ, սակէ եւս իմ բանս խնամ պէշ է. մանաւանդ երբոր տէրս հասկընայ իմ ըրած նեղս: Ուրեմն պէտք է որ ես Եղովբոսէն առաջ խօսիմ, և ամբաստանութեն ընեմ անոր վրայ. վը զի տէրս իմ գործքերս խնայացածին պէս զիս կը վարձատրէ պարտօնէս:

Սակայն մոտածելէն ետև Հարկայ եղաւ քալլաք դնաց տէրը գտաւ. և մօտենալով քովը խոռված երեսով մը բարևեց: Տէրն երեսը նայելով հարցուց՝ Թէ ինչ պատճառէ եկած է քեզի աս խռովութեն որ կերպարանքէդ կերևնայ: Պատասխանեց Զենաս Թէ զի տունդ մեկ արուաքոյ կարգի հրէշ մը եղաւ: Ինչ է ըսաւ տէրը, ծառերուս մեկը առեր դուրս պոռըղ տուաւ, Թէ չիերս ցուցանէ ծնան: Ըհ ըսայ Զենաս, հապա Եղովբոս որ միշտ համր էր չէր կրնար խօսիլ, հիմա խիստ լաւ կը խօսի: Զայնդ վար քաշէ ըսաւ տէրը. հրէշն տեղ ես դրեր աս պատուածը:

Կրկնեց Զենաս. տէր իմ ձշմարիտ կըսեմ, որ ես լռութեամբ անցայ, և չեմ պատմեր Եղովբոսին ինծի տուած նախատինքները. բայց տէրուհեդ և ազնուտուն դէմ ըրած հայհոյանքներուն և յանդգնական խօսքերուն չեմ դիմանար. ահա կը պատմեմ: Ան խօսքերս որ լսեց տէրը անանկ բարկացաւ Եղովբոսին վրայ, որ մեկէն ըսաւ Թէ ահա անիծուածականը. քեզի յանձնեցի, ինչ որ կուզես ըրէ անոր. կուզես ծախէ, կուզես մեկինտուր, ինչպէս սիրտդ կուզէ անանկ ըրէ. վը զի ես քու կամացդ կը յանձնեմ զայն:

Ջենաս երբոր բացատրձակ տէր եղաւ Եզովբոս
բանին հասկըցուց անոր, թէ իր ազատու-
թիւը բոլորովին անկէ կը կախուի: Եզովբոս
ալ պատասխան տուաւ, թէ ինչ որ ձեռ-
քէդ կուգայ ըրէ ինձի. և ա՛ր բանն որ հա-
ճոյ է քեզի, իմ անձիս հրամէ: Ա՛ս խո-
սակցութենս վրայ յանկարծ վաճառական մը
եկաւ հոն անասուն գնելու համար. հար-
ցուց Ջենասին թէ ունի՞ս ծախու անա-
սուն: Ան ալ չէ ըսաւ. բայց մէկ գերի մը
ունիմ ծախու, որ հոս մօտ է, ուզես կրնաս
գնել: Ձայն ըսելով կանչեց Եզովբոսը աւ-
ջին: Իսկ վաճառականը երբոր տեսաւ անոր
կերպարանքն՝ սկսաւ ծիծաղիլ. Ուստի գը-
տեր ես ըսաւ աս ցուցանքը, որ պառաւկի
նման է: Մարդ է, թէ ծառի կոճ. թէ որ
ձայն ալ չունենար՝ պիտի կարծէի թէ տիկ է
հոլով լեցուն. ինչո՞ւ համբայէս արդեօք,
սանկ մէկ այլանդակ մը ինծի ցցընելո՞ւ
համար: Ա՛յսպէս խօսելով սկսաւ երթալ.
իսկ Եզովբոս եանէն վազեց, կաղալէր որ
քիչ մը կեննայ. վաճառականը բարկանալով
կըսէր, գնա կորիր գարշելի: Պատասխա-
նեց Եզովբոս թէ հապա ինչո՞ւ համար աս
գեղս եկար: Եկայ որ ըսաց վաճառականը՝
լաւ բան մը գնեմ. բայց ինծի հարկաւոր չէ
սանկ տգեղ, անպիտան մարդը, ինչպէս որ
դուն ես: Ձի՛ս գնէ ըսաց Եզովբոս. եթէ
ինծի կաւասա, քեզի նեղուի մը չեմ բերեր,
և անանկ լաւ ծառայութիւն մը կընեմ, որ
մոքէդ ալ չէ անցած: Հարցուց վաճառա-
կանը թէ ինչ օգուտ կրնամ յուսալ քեզ-
մէ, որովհետև սանկ կերպարանքի մէջ ես,

ամենուն առեղն և գարշելի կըլլաս : Պատասխանեց Եզովբոս թէ չունիս տանդ մէջ անհանդարտ կանչուըռտող լալկան տղաք, զոր անոնց վրայ դիր, որոնք զիս տեսնելով երբ մէկ զարմուրելի բանէ մը կը վախնան : Ինոտաց առ խօսքիս վրայ վաճառականը. եւ դարձաւ Զէնոսին հարցուց թէ ինչ տամ որ ինծի առաքինութիւն սորվեցնին : Ան ալ ըսաց երթէք դրամ (1) : Վաճառականը հասկցաւ ըսել կը ուզեր թէ ոչինչ առնուլ, ոչինչ գնեցի : Ուստի երկուքը միասեղ սկսան գնալ, և երբոր հասան վաճառականին տունը, երկու տղաք կային հոն, որ դեռ կաթ կուտէին, տեսածնուն պէս սկսան պոռալ : Տես ըսաւ տիրոջը ինչպէս խռտմունքս կատարուեցաւ, հիմակուց վախցան տղաքը : Վաճառականը խնամալով պատուիրեց որ մէկալ ծառաները բարևէ. որոնք տեսնելով զայն կը զարմանային իրարու ըսելով, երանի որ աս մէկ մեծ դժբաղդութիւն մը կը նշանակէ մեր տիրոջն որ սանկ անշնորհք մարդ գնեց. երևութը կը ցցընէ թէ տանը մէկ դէշ ձախորդութիւն մը պիտի բերէ (2) :

(1) Գաղղիացին կըսէ (օպօլ). Իսկ յոյնը (օվօլօս). որ կը նշանակէ՝ գրամ, դանկ, նափտա-կէպ. որ հին յոյներըը կը գործածէին աս սպաիը. Բայց յայտնի չէ ըէ թանկ գահկեան կարծեր մէկ օպօլը, ըէպէս կերևնայ ըէ ցած էր գինը :

(2) Որովհետև հնդեանոսներն ամեն բան խախտերնէ-մէ կը մեկնէին, ինչպէս բնական բաներն ալ ան տպտով կառնէին. զոր օրինակ ալէքն խաղալը, աստղագիտին գիմացնին ելած մարդը, լաց. որ ինչպէս

8108-57

3529

ԳԼ. Ե.

ՃարպարՄարդուԹեան Եղելութիւն:

Վանի մը օրէն եաւ վաճառականը կա-
մեցաւ Ասիա երթալ. ուստի ծառաներուն
պատուիրեց որ բեռները կապեն պատրաստ
ըլլան որ մեկալ օրը ճամբայ ելլէն: Անոնք
ալ ամէն բան կարգաւորեցին մինչպէս որ տե-
րը պատուիրեր էր, և բաժնեցին իրենց մէջ
բեռները մինչ որ ամէն մարդ պիտի տանէր:
Եղովբոս կաղաչէր որ իրեն թեթև բեռ տան.
որովհետև ամէնէն եաքը նոր եկած ըլլալով
տանկ բաներու սորված չէր: Անոնք ալ
ղինքը պարտաւորեցին որ բան մը չառնէ,
և աշխատանք չընդունի: Պատասխանեց անոնց
Թէ արդարութիւն չէ առանց աշխատանքի
ճնալ, ամէն մարդ պէտք է իրեն բեռը տա-
նել: Ընկերներն ալ իրեն կամացը ձգեցին,
մինչ բեռ որ ուզէ, զայն Թող տանի իրեն
յարմար: Եղովբոս ապին անդին նայելով
կը դիտէր բեռները, ամաններն և տոպրակ-
ները. ազաչէց որ հացին տոպրակն իրեն կըռ-
նակը տան, որ երկու հոգւոյ բեռ էր. ուս-
տի սկսան ամէնքը խնամալ վրան ըսելով,

հինա ձեռքերը կը պահէն: Ահա Եղովբոսին հետ-
պարանքին նայելով աղէկ էիսպիտին, կարծելով
Թանը յախորդուն պիտի բերէ:

Թէ աս խեղճ պէրլին պէս անխելք մարդ
կայ արդեօք աշխարհքիս մէջ. որ իր յիմա-
րութիւնը ահա ամենուն յայտնի ըրաւ. վասն
զի խնդրեց Թեթև բեռն ու ընտրեց առաւ
խիստ ծանր բեռը: Սակայն պէտք եղաւ ա-
նոր կամքը կատարել. ուստի բեռցուցին
վրան բեռը, որ ան ծանրութեան տակին
աշխատելով ատկին անդին կը գլորէր: Իսկ
վաճառականն այնչափ բեռն անոր կռնակը
տեսնելով կը զարմանար Թէ աս ինչ ջան-
քով կաշխատի Եզովբոս. իրաւ որ, կըսէր,
ահա իր գինը հանեց, զի ձիու մը բեռ մի-
նակ կը տանի:

Երբոր հասան պանդոկ (խօնախ) մը, պէտք
եղաւ բան ուտել. Եզովբոսին հրաման եղաւ
որ ամէն ծառաներուն հաց բաժնէ. ան ալ
որ բաժնեց՝ առանին կէսը հատաւ կերակ-
րին տոքը, և բեռին կէսը Թեթևցաւ անանկ
որ շատ դիւրութիւ կերթար ճամբան: Իրի-
կունն ալ նորէն բաժնեց ծառաներուն հաց.
ուստի մնալ օրը Եզովբոսին ամանը պար-
պեցաւ, որ կռնակը զարկած առանց աշխա-
տանքի կերթար ամենէն առաջ. որոնք չէի-
սէին ինչ ըսեն, մինչև կը տարակուսէին, Թէ
իրենցմէ առաջ գացողը Եզովբոն էր Թէ
ուրիշ մարդ. բայց երբ գիտցան Թէ ան է՝
շատ կը զարմանային իրեն ճարտարմտու-
թիւը վրայ, որ անանկ տգեղ՝ անշնորհք մարդ ըլ-
լալով ծաղր էր եղեր իրենց, ու այնպիսի
խելք բանեցուց հացին ամանն առնելով. զի
լաւ գիտէր Թէ ան բեռը շատ չկրնար մնայ
իրեն վրան: Իսկ ընկերներն ուրիշ բեռ տա-
նելով չկրցան յոյս մը ունենալ, որ բեռէն

Թեթևնան ձամբորդութեան մէջ, որովհետև ծախուելու բաներ էին՝ չէին կրնար պահել ուտելու բանի պէս :

ԳԼ. Զ.

Երէց վաճառականի Եզովբոսի :

Վաճառականին Ախաս հասաւ, և հոն իր գերիներուն շատը ծախեց աղէկ գնով. միայն երեք հոգի մնացին քովը. մէկը նօտար (եպիսքոպոս), մէկը երգիչ (հանէնոպէ), մէկալն ալ Եզովբոս : Վաճառականին մէկ բարեկամն էրեն խորհուրդ կուտայ Թէ սա երեք գերին ծանր գնով ծախելու համար Սամոս կղզին (1) երթայ հոն ծախէ : Երբոր հասաւ հոն, աղէկ լաթեր հագցուց նօտարին ու երդիչին, վաճառականոցը (ֆոլտը) հանեց որ ծախէ : Բայց Եզովբոսին յարմար բան մը չէ գտաւ հագցընելու, որ քիչ մը զարդարուած. որովհետև անանկ անճոռնի էր մարմինն որ միայն մէկ քուրձ մազէ հագուստ մը կրցաւ

(1) Սամոս կղզի ըսպ պճ. (*տուսամ ատասը*) է Եփեսոսին դիմացը Միփիլէնէն անդին, որ հին ապեռը չէն ըլլալով վաճառականութեան պէտք էր՝ բնակիչն անոնանի էին. որ հաւէ ատեն չինէլը ասոնց գլխէն պէնիոս. ասոր կղզիէն էր Պիւթագորաս փիլիսոփան :

հագցընել, և անանկ այլակերպ դրաւ ընկերներուն մէջ. որոնք որ կը տեսանէին՝ զարմանալով կըսէին Թէ աս հրեշտ ուրկէ բան նի էլ գար, հապա մեկալնիք ալ կաւրէ: Եղովբոս Թէպէտ միշտ սանկ ծաղր կըլլար անարգուելով ամէն տեսնողներէն, սակայն ամենևին չէր այլայլեր, և ամենուն ուշ դնելով միակերպ կընայէր: Քանթոս (1) փիլիսոփան ան տեղը Սամոս կղզին կը բնակէր. օր մը եկաւ վաճառանոցը գնաց, երբոր տեսաւ Թէ ան երկու ծառաները լաւ հագուած էին, և Եզովբոս անոնց մէջ անանկ անշնորհք հագուստով շատ զարմացաւ վաճառականին հնարքին վրայ Թէ ան այլակերպ մարդը դրեր է մեկալնց մէջն որ առնու անշնորհք երևնալովը մեկալնիք աւելի գեղեցիկ երևնան:

Ասոնէ աս փիլիսոփան մօտենալովն անոնց՝ հարցուց երկնչին Թէ ինչ տեղէ եա: Ան ալ պատասխան տուաւ Թէ կապադովկացի (2) եմ: Հարցուց Թէ ինչ գիտուս ընել: Ան ալ

(1) Այս փիլիսոփան Ընպէտ շատ երեւելի չէր, բայց ան կղզիին մէջ մեծ անուն ունէր. վասն զի փաղաքին դպրապանը գլուխն էր, ու շատ աշակերտներ ունէր և շատ մեծարուի. հինգ տարուան աշխին յարգելի էր:

(2) Կապադովկիա կըսուի (*զայսէրլի*). որուն բնակիչները գոմեր կը կոլուէին: Կերևնայ Ընէ աս գերին արևելեան կողմերէն էկած կապադովկիա երկար հասլով բան ատրվեր է, կամ ծնողքը հոն էկած ծախուած են, և երբնց պատճին ալ գերի ըլլալով վաճառականը գներ է:

ըսաւ, ամէն բան գիտեմ: Ա պատասխանին վրայ Թանտաց Եղովբոս ակռաները բանալով: Քանթոսին աշակերտներն իրեն հետ ըլլալով Եղովբոսին երեան որ տեսան անանկ ակռաները բաց, կարծեցին Թէ մէկ ցուցանք մըն է. ոմանցմէ մէկը կըսէր Թէ անտարակոյս աս մէկ կատղած կենդանի մը պիտի ըլլայ, որ ակռաները բացաւ: Մէկ կալն ալ կըսէր Թէ արդեօք ինչ բանի համար ծնծաղեցաւ: Մէկ ուրիշն ալ կըսէր Թէ տոկալով խոժռուեցաւ ու դէմքը ծռուեց, չէ Թէ ծնծաղեցաւ: Ուսոն ամէնքն ալ ուզեցին հասկընալ անոր ծնծաղին պատճառը, մինչև մէկը մօտեցաւ Եղովբոսին հարցուց, Թէ ինչո՞ւ համար անանկ խնոացիր: Ան ալ ըսաց. գնա քովէս ծուռու ոչխար: Ա պատասխանս անանկ ամբոցուց զայն, որ տաքնալով մէկէն փախաւ:

Իսկ Քանթոս հարցուց վաճառականին, Թէ երգիչէն գինը որչափ է: Ան ալ ըսաց հազար դահեկան: Քանթոս տեսաւ որ չափազանց է գինը, գնաց մէկալ գերին հարցուց. որ քաղաքէն էս: Պատասխանեց Թէ լիւգացի (1) եմ: Ի՞նչ բան գիտես հարցուց: Ան ալ ըսաւ, ամէն բան գիտեմ: Եղովբոս լսելով, նորէն սկսաւ խնոալ: Ա փիլիսոփային մէկ աշակերտը չկրցաւ Թէ ինչ պատճառաւ կը խնոայ, ուզեց հարցընել. բայց իր ընկերներէն մէկը զինքն արգիլեց ըսելով Թէ որ դուն ալ կուզես ծուռու նո-

(1) Լիւգացի հին ապենը ազգ էին Ափրիկէի գաւառին մէջ, որմանցմէ գերի էկած է նօպարը:

խաղ կոչուիլ նէ հարցուր: Ան առնել Քանանթոս մօտեցաւ վաճառականին հարցուց թէ քանի է նօտարին գինը: Պատասխան ըսաւ թէ երեք հազար դահեկան:

Ա՛ս չափազանց գինը Քանանթոսին սիրտը նեղացուց, ուստի սկսաւ եռ դառնալ: Բայց աշակերտները հարցուցին թէ չհաճեցա՞ր գերնեերուն. հաճեցայ ըսաց, իմ ուզածս էն. սակայն օրէնք դրած է, որ մէկ գերիի համար այնչափ առակ չխորուի: Եթէ այդպէս է ըսին, օրէնքի դէմ չըլլար՝ թէ որ ըսպեղ գերին գնես, որ անոնց չափ քեզի ծառայութիւն կրնայ ընել. և մենք կը վճարենք անոր գինը ինչ որ կարժէ: Պատասխանեց Քանանթոս, թէ խելքի դէմ բան է, որ դուք գնէք՝ ես ծառայի տէր ըլլամ: Ո՞ւր թողունք որ իմ ընկերս աւելի զարդարանք և մաքրութիւն կը սիրէ, նայինք կուզէ առանկ ալոտոտ և այլանդակ ծառայ: Անոնք ալ ըսին թէ առաջարը չի կրնար խափանել որ չկրնես ան գերին, որովհետև առակ մը կայ կըսէ որ՝ սէրը չէ հնազանդիլ ինկան խօսքին, և անոնց շատ մտիկ ընել:

Քանանթոս ըսաւ թէ քանի որ չենք գնած՝ երթանք նայինք բան մը գիտէ, չըլլայ թէ ծուլը նեռենք առած առակնիս: Ուստի մօտեցաւ Եղուկեոսին ըսաց. ուրախ կեցիր: Ինչու համար՝ հարցուց Եղուկեոս. միթէ ես սրտմտած եմ: Քեզի կը բարեւեմ ըսաւ Քանանթոս. ան ալ ըսաց և ես քեզ կը բարեւեմ: Ամենքը զարմացան աս շնորհքով պատասխանիս վրայ: Հարցուց Քանանթոս, թէ դուն ուստի ես: Ես ըսաց՝ ան եմ: Ան չէ հար-

յուցած ըսաց · ես կուզեմ իմանալ թէ ո՛ր քաղաքէն ես , և ո՛ւր սեղէն : Ես մօրմէս ե՛ղեր եմ, ըսաց Եզովբոս :

Ան չեմ ուզեր գիտնալ ըսաց , հապա ո՛ւր սեղ ծնած ես : Պատասխանեց Եզովբոս , թէ իմ մայրս չէ պատմած ինծի , թէ ու՛ր ծնած եմ , տանը վրէրը , թէ բակը (1) :

Ի՞նչ բան գիտես՝ հարցուց Քսանթոս : Ան ալ ըսաց՝ բան մը չեմ գիտեր : Ի՞նչ ըսել կուզես՝ հարցուց : Պատասխան տուաւ Եզովբոս · որովհետև աս գերիներն ըսին թէ ամէն բան գիտենք , ինծի բան մը չմնաց գիտնալու : Ա՛ս խօսքերուս վրայ խիստ շատ զարմացան փիլիսոփային աշակերտները : Իրաւ որ , կըսէին զարմանալով , աս մարդը յայտնի ըրաւ երեն խելքն ու միտքը աս խօսքերուվ · ո՛վ կրնայ պարծենալ թէ ամէն բան գիտեմ · ահա աս է եղեր պատճառն որ կը ինամար և ծալը կընէր ասոնց տուած պատասխանը :

Ետքէն հարցուց Քսանթոս , կուզես որ քեզ գնեմ · ան ալ ըսաց թէ աս խօսքդ աւելնալին ինծի հարցընելու բան չէ · կուզես գնէ , կուզես մի գներ · քու միտքդ ինչ որ կը վկայէ , ան ըրէ · պէտքը չէ որ մարդս բանի մը համար բան ընէ · աս գործքս բոլորովին քու կամքէդ կը կախուի : Թէ որ կուզես զիս գնել , բայց քսակդ ու ստակ

(1) Հին ապէնի իմաստասիրեր ալ սովորութիւն եր այսպիսի հարցմունք պատասխան ընել : Եզովբոս ալ անոնց սովորութիւնը նայելով աս ձը բռնեց · ինչպէս վարմայոց իմաստասիրերը :

համբէ. և ևթէ չես ուզեր գնել, հանգիստ կեցիր, ալ մի խնամար վրաս: Աշկերտներն իրարու կըսէին թէ Հլմարիա որ մեր վարպետն յաղթեց: Թէ քեզ գնեմ, ըսաց Քանանեան, սիտի չանաս փախչելու: Եղովբոս ծիծաղելով ըսաց. ևթէ ուզենամ փախչել, քեզի չեմ հարցներ, ինչպէս որ քեզ ալ պէտք չէ ինծի հարցնել: Լաւ կը խօսիս ըսաց Քանանեան. բայց խիստ այլանդակ ես: Պատասխանեց Եղովբոս թէ փիլիսոփային կը վայլէ որ մարդուս խելքին ու հոգւոյն նայի, չէ թէ դէմքին:

Ան առեն Քանանեան գնաց վաճառականին հարցուց, թէ աս գիրքին գինն ինչ է: Ան ալ ըսաց թէ եկեր ես որ իմ գիրքներս վաճառես. լաւ և գեղեցիկ գիրքներս չուզեցիր գնելու, հիմա եկեր ապել մարդուն աչքը կ'ելլես. կուզես մեկալ երկուսին մեկը գնէ, աս ալ անոնց վրայ աւա առանց ապրկի: Ձէ, ըսաց Քանանեան, ես պիտի աս գնեմ: Ուրեմն տուր, ըսաց, վաճառն գահեկան: Քանանեանին աշկերտները շուտով համ ըրին առակը, և գնեցին Եղովբոս: Մաքսաւորները (դիղպապաններըը) եկան քննելու, թէ ո՞վ է ծախողը, և ո՞վ է գնողը. բայց երբոր հասկըցան թէ ոչինչ գնով է ծախուածը, ամչցան: Իսկ Եղովբոս ոտքի վրայ ելաւ կանչեց թէ ահա ես եմ ծախուողը, ահա վիս ծախողը և գնողը. թէ որ ասոնք ձայն չհանեն, ես ազատ կը ձգամ: Մաքսաւորները ծիծաղելով մեքս չառած ելան գացին:

Գ.Լ. Է.

Եղբօր երթայ՝ է գոռալ:

Երբոր Քանթեռս տուն դարձաւ, պատուիրեց Եզովբոսին որ դռանը քով սպասէ, որովհետեւ գիտեր որ կնիկը բանի մը չէր հասներ, ան այլանդակն որ տեսնէ՝ չըլլայ թէ բարկանայ. ուզեց նախ անուշ քաղաքավար խօսքերով սիրտը շահել, ու յետոյ ներս բերել հոշտ Եզովբոսը: Քանթեռս ներս մտաւ, մօտեցաւ կնկանն ըսաց, թէ Տիրուհի, ասկէց ետև ալ երեսս չես զարներ ալախինիներուդ աշխատանքը. ահա քեզի ծառայ մը պնեցի, որ իմ առջիս անանկ աղուոր ընտրհքով է, որ այնպիսի սիրուն մարդ չես տեսած. ահա դռանը քով կեցեր է: Երբոր սանիկ կը խօսէր՝ ալախիններըը վազեցին որ տեսնեն, և կը մտմըտային, թէ որերնուն հետ պիտի բարեկամ ըլլայ: Իսկ Տիրուհին հրամեց որ ներս գայ նոր գերին: Ալախիններուն մէկը վազեց կանչելու համար, երբոր տեսաւ, գոնէ ես ըսաւ Եզովբոս ծառան. թէ որ դուն ես՝ ներս մի մտներ, վըզդ քեզ տեսածնուն պէս՝ ամէնքը պիտի փախչին: Մէկ ուրիշն ալ դուրս ելաւ ծաղը ընելով կըսէր թէ դէմքդ փոխէ անանկ ներս մտնէր:

Եզովբոս ներս մտաւ գնաց Տիրուհիին

առջին, որ սեսած ին պէս՝ աչքը դարձուց էրկանն ըսաց, ոնր սեղէն վինտըռեցիր գոար աս ցուցանէքս. վերցուր առջևէս վերցուր: Կալաչէր Քանթոս թէ մի խռովիր, մի անարգեր նոր գերիս: Ես ինչպէս կրնամ համբերել կըսէր կինը. ահա սասվ հասկըցայ որ դուն զիս քամահրել կուզես, ու կասես. կերևնայ թէ ուրիշ մը կուզես բերել, անոր համար աս գերին բերիր, որ ես իմմէ երթամ անէն. ուրեմն տուր իմ բաներս, ես կերթամ:

Քանթոս սեսաւ որ չըլլար, սկսաւ անարգելով ըսել Եզովբոսին՝ թէ ամէն բանի պատասխան կուտայիր, հիմա ինչո՞ւ կնկան բան մը չես զուրցեր: Պատասխանեց Եզովբոս թէ մէկ վոսկ մը ձգէ կնիկդ: Կարէ ձայնդ ըսաց, շատ մի խօսիր սիրելի ընկերոջս դէմ: Եզովբոս ոտքը գետինը զարնելով կըսէր թէ ահա սէրս գերի բռնուած է կնոջմէն. Ո՛վ մեծդ Եւրիպիդես (1), չուներ քու ձարտասանութիդ որ քեզի պէս խօսիմ. խնատ լաւ կըսէիր թէ || ծուխն կա-

(1) Եւրիպիդես էր յոյն բանասպեղծ էրևելի, Սաղամինա կղզիէն, ուր ծնաւ շուք պարէ առաջ Քրի ևռասականէն. որ մէկ ֆորաձ ծայռէ (խայալէ) մը մէջ փալռաձ կը գրէր իր բանասպեղծութիւնները, որոնք շատ մեծ յարգութիւն ունէցան Յունաց մէջ. աս գրռաձփներէն հինլե հիմա կը գտնուին: Եւրիպիդես շատ անգամ կանանց գործերը դիպելով անոնց դէմ շատ ատակառոր խօսքեր ևս վճիռներ կըսէր, այնչափ որ անոնք զրկին կանանց թշնամի. ահա աս բաներէն բերաձ է Եզովբոս աս խօսքս:

տալութիւնը տոկալի է, գեաեղրուն առատա-
նալը տարտափելի է, կրակին բռնութիւնն ա-
ղետալի է, և աղքատութիւնն անտանելի
խեղճութիւն է. հազար կերպ պատահմունք-
ներ կան, որ տրտմութիւն և վիշտ կը բերեն.
տակայն անզգամ կինիկը ամէն չարութիւննե-
րէն աւելի է ||: Ա՛ս գիտնական բանիս վրայ
մտածելով, ով Տիրուհի, քեզի շատ մեծ բան
է որ առանկ փիլիսոփայի կինիկ ես եղեր.
խելքդ գլուխդ ժողվէ, ջլլայ թէ աղուոր
մանուկ ծառայ առնես քեզի, որ անպա-
տութիւն մը չիբերես ընկերոջդ:

Ա՛ս խօսքս կինկանը խելքը տարաւ, ա-
նանկ որ չէր գիտեր ինչ պատասխան տայ.
մինչև գարձաւ էրկանն ըսաց թէ ուստի գը-
տար աս չնորհքով գերին. երբա՛ կըսեմ, որ-
չափ տգեղ և սլանդակ է, այնչափ սիրելի և
անուշ է. ուրեմն ես հետը կը վարուիմ կու-
զեմ: Գառանթուս գարձաւ Եզովբոսին ըսաց,
թէ ահա Տիրուհիդ քեզի հետ հաշտուեցաւ:
Պատասխանեց Եզովբոս թէ ուրեմն այնչափ
խեղճ մարդ չեմ եղեր ես. որովհետև մէկ
կին մը հաշտեցընելը սզտիկ բան չէ: Զայնդ
վար քաշէ ըսաց տէրը. ես քեզ գնեցի, որ
ինծի ծառայութիւն ընես, չէ թէ դիմադար-
ձութիւն:

ԳԼ. Ը.

Պատահանափառութիւն Եղուքեան:

Քանթոս մեկալ օրը հետն առաւ Եղուքեան ու դնաց պարտէզ մը բանջարեղէն քաղելու համար: Եղուքեան առաւ ձեռքը պարտիզպանին ժողված կանանչեղէնները: Քանթոս ստակը տալու առնելը, պարտիզպանը աս խօսքս ըսաց: Կաղաչեմ, մեկ բան մը պիտի հարցընեմ, ինծի պատասխանուր: Ի՞նչ է տարակոյսդ հարցուր ըսաց: Ջեմ հասկընար՝ կըսէր, ինչո՞ւ համար բանջարեղէն բոյսերն որ այնչափ հոգ տանելով կը տնկեմ, կը ջրեմ, ու ասանկ ուշ և դժուարաւ առած կուգան. և ընդհակառակին՝ ինքնիրմէ բուսած խոտերն առանց փորելու և ջրելու շուտ առած կուգան. ինչ է պատճառը:

Ան խօսքս Թէպէտ փիլիսոփայական իրնդիր է, բայց Քանթոս չկրցաւ լուծելու. այլ մեկ ընդհանուր պատասխան մը տուաւ Թէ այ նախախնամութեան գործքն է, որ ամէն բան կը կարգաւորէ (1):

(1) Նախախնամութիւնը կըսուի պետութիւն, փնտեսութիւն. հին փիլիսոփաներն ասով կիմանային աշխարհին կառավարութիւնն որ ամէն բան իր կամքին անանկ կը կարգադրէ՝ որ իրենց վախճանին կը հասնին: Կառավարչա փիլիսոփաները չկրցան արդանալ աշխարհ

Եզովբոս լսելով սկսաւ ան պատասխանիս վրայ խնամալ: Չես ծանր կընես, ըսաց փիլիսոփան, թէ կը ծիծաղիս: Պատասխան ալաւ Եզովբոս թէ երբաւ ծանր կընեմ, չէ թէ հրամանքդ, հապա քեզի տրվեցընողը. վո՛ զի անանկ մէկ հատարակ պատասխան մը տուիր որ գիտուններն ամէն հարցմունքի կրնան տալ. որոնք բաւական կը կարծեն ըսել թէ ամէն բան ալ նախախնամութիւնը կը կառավարէ: Ինծի հրաման տուր ես պատասխանեմ պարտիզպանին. տեսնես թէ ինչպէս կը հանգչի սիրտը: Ան առնը ըսանութա դարձաւ պարտիզպանին ըսաց թէ վայելուչ բան չէ որ ես երևելի դպրատունները մէջ փիլիսոփայութիւն ըսած եմ, հիմա կենամ պարտէզի մէջ բան վարդապետեմ. ահա իմ ծառաս ալ կրնայ քու հարցմունքդ քակել թէ որ իրեն զուրցես, վո՛ զի հմուտ է ասանկ բաներու պատասխան տալու:

Կրկնեց պարտիզպանը թէ ըհը կրնայ ըլլալ որ ասանկ անշնորհք, կոշտ մարդը կարդալ բան գիտնայ, ո՛րչափ խեղճ բան է ասանկ տգեղ ըլլալը: Տեսնենք կրնա՞ս իմ տարակուսանքս լուծել, և սիրտս հանգչեցընել աս ըսած բանիս վրայ: Եզովբոս սկսաւ ասանկ պատասխան տալ. երբոր մէկ կին մը երկու անգամ կը կարգուի, ու առջի երկը-

նէն զաւակներ ունի, և առած մարդն ալ առջի կնոջմէն զաւակներ ունի, յայտնի է որ առ կնիկանը հարուստ զաւակները հետը բերածներն են, և էրկանը զաւակները իրեն խորթ են. առ պատճառաւ տարբեր կերպով զանոնք կը նայի, մեծ հոգ կընէ որ լաւ պահէ, սղէկ կերցընէ, և մեծ սիրով խնամէ իր ծնածները: Իսկ էրկանը զաւակները չէ թէ միայն այնպէս չի նայիր, հապա շատ անգամ կատէ, և ոտքի տակ կառնէ. անանկ որ զանոնք կը զրկէ, անոնցմէ կը քաշէ, և իր զաւկներուն կուտայ, և այնպիսի բնական գութ մը կը ցցընէ իրեններուն որ կարծես թէ իր մարմինին կտորտուանքն են. առտու հակառակ, մէկալնք օտարի աչքով նայելով միշտ կը ջեռնէ: Առանկ ալ հոլը մայր կը սեպուի առած բառներուն. բայց քու անկածներդ անոր խորթ զաւակներն են, և իր բուսուցածները քուն հարազատ զաւակ ըլլալով աւելի հոգ կը տանի ու կը մեծցընէ. ուստի քու անկածներդ խորթ ըլլալով՝ քիչ մնաց կուտայ որ շատ չէն կրնար ածիլ, վը զի օտար են:

Ա պատասխանն անանկ հանդիսեցաւ պարոնիզպանին սիրտն որ մէկէն կանչեց Ե. զովբոսին, թէ ես քեզի մեծապէս շնորհակալ եմ, որ մեծ տարակուսանքէս զիս ազատեցիր, և սիրտս հանգիստ ըրիր: Ուստի երթա բարով, որչափ բանջար (պաղպաղ) կուզես՝ առ դնա առանց տալուի, և որ ժամանակ պէտք ըլլայ՝ եկոր առ. տակէ եաև քու պարտէզդ ալ պիտի գաս հոս բան առնես:

Գլ. Թ.

Խոշամանկութիւն Եզովբոսի:

Քանի մը օր անցնելէն ետև Քսանթոս բաղնիք գնաց, հոն մէկ քանի բարեկամներ գտաւ. պատուիրեց Եզովբոսին որ վազելով երթայ տուն՝ լրեն ոտք մը եփէ: Եզովբոս մէկէն տուն գնաց, ու սատանութենէ բանեցընելով մէկ հատ ոտք մը առաւ պոռկին մէջ դրաւ եփեց: Իսկ Քսանթոս բաղնիքէն ետև ալաչէց բարեկամներուն որ կերակուրը տունն ուտեն. և հասկըցուց թէ ես մէկ հարկիք մը չունիմ, միայն թեթև ոտպէ ատուր մը պիտի ուտենք: Ան ալ ըսաց թէ չի վայլեր շատ տեսակ կերակուրներով բարեկամ փորձել, հապա աւելի պէտք է սիրտը նայիլ:

Անոնք ալ Քսանթոսի հարկիքն ընդունեցան, տունն եկան: Տէրը կանչեց Եզովբոսին թէ մեզի մէկ բաղնիքի ջուր մը բեր, որ զովանանք քիչ մը: Վազեց Եզովբոս գնաց բաղնիքին լուացուած ջուրը բերաւ տիրոջը տուաւ. երբոր բերանն առաւ, գարշահոտին չդիմանալով ըսաց, ուսաւ բերիր աս ջուրը: Բաղնիքէն բերի, ըսաց, ինչպէս որ ինծի պատուիրեցիր: Քսանթոս բարեկամներուն առջին բանաց բարկութենին, ու հրամեց Եզովբոսին որ իրեն մէկ կոնք (լէյէն) մը բերէ:

Ան ալ բերաւ, ապքն վրայ կեցաւ: Ձի լուաս, ըսաց տէրը. էհ, ըսաց, վան զի ինծի ինչ որ ըսիր, ան ըրի. Թող ըսէիր, Թէ ջուր լից կոնքը, ապքս լուա, բեր հոդալեցուներս ու բոլոր բաներ: Քանդեաս դարձաւ բարեկամներուն ըսաց, Թէ աս գնած մարդս պերի չէ, հապա վարդապետ է: Երբոր աւետեան նստան Քանդեաս հարցուց Եղովբոսին Թէ եղաւ ապքը: Եղովբոս ալ բերաւ դպրոցի մէկ ապն ալ եփեր էր: Տէրը բռնեց մատովը սկսաւ, ըսաց Թէ լաւ եփած է բեր: Եղովբոս լեցուց ջուրն ու բերաւ ամանով սեղանը: Հարցուց Քանդեաս Թէ ո՞ւր է ապքը: Քեզի տուի, ըսաց: Ի՛նչ, մէկ հաճ մը եփեցիր: Հրամեցեա ըսաց. վո՛ւ զի գուն պոշ ըսիր Թէ ինծի ապ մը եփէ, ապեր եփէ չըսիր: Ա՛ս խօսքովս խիստ տպքցաւ Քանդեաս. մինչև ըսաց բարեկամներուն Թէ Թողուեի՛ք ծառայիս յիմարութիը, որ մարդը խենթ կը դարձընէ:

Հոս եկոր ըսաց Եղովբոսին, անդգամ ծառայ. գնա խոզի ջրոս ապք գնէ, և շուտ մը եփէ որ ուտենք: Եղովբոս գնաց շուտով բերաւ. երբոր ապքերը կեփէին՝ Քանդեաս գնաց ծածուկ ապքին մէկը գողցաւ Եղովբոսին հան չեզած աաենը. որպէս զի պատճառ ընելով լաւ մը ծեծէ զայն:

Քիչ մը կանցնի Եղովբոս ալ կուգայ, կը նայի որ պատուկին մէջ երէք ապք կան. կը հասկընայ խաբեութիը, ուստի վազէ կերթայ տանը պահած խոզին մէկ ապքը կը կորէ՝ բերէ, կը գնէ մէկալնց հետ կեփէ: Քանդեաս կը վախնայ որ Եղովբոս տեսնելով

ոտքին մէկը պակաս՝ չըլլայ թէ վախչի, պահած ոտքը կը բերէ մէկը կը ձգէ : Եփած ոտքերն ու առաջ բերաւ, Քանթոս տեսաւ թէ հինգ են : Ի՞նչ է աս ըսաց Եզովբոսին, ես քեզի չըսի՞ որ չորս ոտք պիտի ես : Հրամեր- ես ըսաւ, բայց երկու խոզին ոտքերը քանի կըլլան, ուրիշ . ահա դուն հինգ հատ տեսար հոս, երեք ալ վարի խոզն ունի, որ կը պահես :

Քանթոս աս խօսքին վրայ սաստիկ բարկանալով կըսէր բարեկամներուն թէ ես ի- րաւունք չունիմ որ կըսեմ, թէ աս ծառան իմ խելքս գլխէս պիտի տանի : Եզովբոս ուզեց պատճառով խօսիլ տիրոջը հետ . Տէր իմ ըսաց, չկրնաս որ Թուսքանուհիէն մէջ որչափ հանուիմ չըլլայ քանակուիննէ, այնչափ ալ յաւելում որ չըլլայ, գումարը միատ չըլլար : Ուստի Քանթոս չկրցաւ պատճառ մը գտնել, որ Եզովբոսին ծեծ մը տայ, ակատ սիրտն իջնէր (1) :

(1) Եզովբոս երկու պատճառաւ աս խօսքը- ներն ըսաւ . նախ ուզեց փերոչը ալէտ վախ- ցընել, և իր ինչպէս մարդ չըլլալն անոր հասկցընել, որ չնորհով երկայ հետը . երկրորդ՝ ուզեց վրէժխնդիր ըլլալ անոր ըրած անարգանաց- և անով հասկնայ որ երկէն նեղուիս պալ ուզէ, մարդու մէջ ինչը ծաղր ընելով պեղը կը հանէ :

ԳԼ. Ժ.

ՎՐԷԺԱՆԴՐՈՒԹԻՒՆ ԵՂՎԷՈՍԻ:

Եղաւ որ Քաղնեթոսի մէկ աշակերտը մեծ հարկիք մ'ըրաւ իր վարպետին և բոլոր ընկերներուն: Քաղնեթոս սեղանին վրայ որջաւ և համով կերակուրներ կար, մէյմէկ քիչ կը վերցընէր Եղուվէոսին կուտար որ եաին կայնած էր: Ատոնք տուն տար կըսէր իմ բարեպատիս տուր: Եղուվէոս առաւ գնաց. բայց Քամբան ինքիրեն մտմըտալով կըսէր թէ ահա խիստ աղէկ տեղն եկաւ, որ վրէժխնդիր ըլլամ մեր Տէրուհիին, որ հասկընայ անանկ իմ վրաս անօրէնի խնամքն ու սիրտ ծակելը՝ երբոր զիս առջի անգամ տեսաւ. ես ալ հիմա փորձեմ, նայինք կը սիրէ սըրտանց մեր տէրը: Երբ տուն հասաւ Եղուվէոս կանչեց Տէրուհին, և Քաղնեթոսի տուած կերակուրները առջին դրաւ՝ ըսաց, ահա ատանք իմ տէրս խրկեց. բայց քեզի չխրկեց, իրեն բարեսիրտ սիրականին խրկեց: Ըսաւ մը կանչեց տիրոջը պզտի շունն որ հոն կը կենար. ամո աղուորիկ կըսէր, կեր, տէրս հրամեց որ քեզի տամ. և այսպէս բոլորը կերցուց չանը: Յետոյ դարձաւ գնաց տիրոջն ըսաց, որ տուի և բոլորն իմ առջևս կերաւ: Ուսուցչապետը բան մը չըսաց, ըսաց

Քանթոս: Ձէ, ըսաց, քայց մարդը շնորհակալ կըլլար տէրութենէդ:

Իսկ Քանթոսի կնիկը սաստիկ նեղացաւ, որ ընկերն իրեն բան մը չեխորհեց հարկին. միաքը դրեր էր թէ աս եղած բանը՝ նշան է թէ զինքն աչքէ ձգեր է, և իր սէրը պաղած է. որովհետև հոգ տարաւ աւելի շանը, քան թէ իրեն. ուստի սոսկալի տրտունջներ կընէր, և վշտանալով բարկանար ու կըսէր թէ ալ չեպիտի նայի երկանն երեսը. և այսպէս իր խցին մէջ փակուած անանկ կուլար ու աչխարհք կը փլցընէր, և ամենևին չէր ուզեր միսիթարուիլ աս ըրած բանին համար:

Քայց հարկիքը լաւ մը չենցաւ գինին խմելով. երբոր զուարճութեան մէջ էին, ականջը միմիկը իրարու հետ հակաճառութիւն ընել զանազան բաներու վրայ: Անոնցմէ մէկը աւելի բարակամիտ և հեռատեսիլը ըլլալով հարցուց՝ թէ ո՞ր աստեն կըլլայ աւելի հակառակութիւն և անկարգութիւն մարդկանց մէջ: Եղովբոս աս հարցընողին եաին ըլլալով պատասխանեց թէ ան աստենը կըլլայ երբոր մեռելները յարութիւն կառնեն. վը զի ամենքը ինչ որ ունէին (1) աշխարհքիս մէջ մէկ

(1) Կոպտագոյն ֆիլիսոֆաներուն ըսածը գիտեն որ մեկ օր մը մեռելները յարութիւն պիտի առնեն. որովհետև կընայէին որ աղէկ մարդերէն հոս նեղութիւն կը քաշեն մարմնով, և գէշ մարդերն լաւ կապրին. հարկաւ ասոնց հաստատում պիտի ըլլայ կըսէին. մանաւանդ Պղատոնի աշկերտները, որոնք Ընթացքը կարգալով շատ բան կոպտացին:

վհկհկ կը պահանջեն: Գանձուն աշակերտները նեղը խնամալով աս խօսքիս վրայ, միաբան խոստովանեցան թէ Եզովբոս խիստ մտաւոր մարդ է:

Մէկ ուրիշն ալ հարցուց թէ ինչո՞ւ համար երբ մագործը կը քաշէ ոչխարը՝ չի պոռար, ու խոզը ստակալի կը պոռայ: Պատասխան տուաւ Եզովբոս թէ ոչխարը սորված է որ կաթը քաշեն, և վրայի բուրդը խուզեն. ուստի ձայն չի հաներ, թող կուտայ որ զինքը բռնեն քաշեն ոտքէն, ինքն ալ լռութեամբ կ'երթայ ետևնուն, անտարակոյս գիտէ թէ իրեն նեղութիւն պիտի տան: Բայց խոզը ոչ կաթ կուտայ, ոչ բուրդ. ոչ կը կալեն, և ոչ ոտքէն կը քաշեն. գիտէ որ մարմինէն 'ի զատ ուրիշ բան մը չունի. ուստի ան պատճառաւ կը պոռայ, կը կանչէ երբոր իրեն կը գայէ մագործը: Սկսան ան պատասխանիս վրան ալ խնամալ Գանձուն աշակերտները, և մեծ գովեստներ տուին Եզովբոսին:

Կերակուրը ըմբնցածնին պէս Գանձուն տուն գարնան. հարցուց թէ ո՞ր է կնիկն որ հետը խօսի, ինչպէս սովորութիւն ունէր: Բայց կնիկը ծուռ ծուռ նայելով անոր ըսաց, հեռու գնա, տուր ինձի իմ բաներս, որ երթամ քու տունդ. ակէ եաքը ես չեմ կրնար քու տունդ մէջ քեզի հետ ծնալ, դուն գնա քու շունդ սիրէ, որուն որ հարկնիքին բաները խրկեցիր: Գանձուն խիստ զարմանալով տանկ անվիտ անտրդանոցը վրայ, չէր գիտեր ինչ ընէ և ինչ պատասխան տայ. կըսէր թէ տանոյ կարծեաց Եզովբոսը

բան մ՝ըրեր է: Դարձաւ կնկանն ըսաց, Թէ Տէրուհի, ես խմեցի՝ դուն գինովցար. ես ան պատուական բաները որո՞ն խրկե՞ցի, քեզի չխրկեցի՞: Ելդուա կըսեմ ըսաց կնիկը Թէ լինձի բան մը չեկաւ, հապա շանը եկաւ: Հոս եկոր ըսաց Եզովբոսին, ո՞րո՞ն տուիր ան կերակուրները: Որո՞ն ալ՝ ան տամ ըսաւ, քու սիրականիդ տուի:

Դարձաւ Քսանթոս կնկանն ըսաց, Թէ դուն բան մը չե՞ս տուած: Ամենևին բան ա՞ուած չեմ ըսաց: Տէր իմ, ըսաց Եզովբոս, դուն սիրականիդ չխրկեցիր: Կանչեց շունն ըսաց. ահա բարեկիրտ սիրականդ, որ ամենէն աւելի քեզ կը սիրէ, և քեզի բարի կուզէ: Վասն զի Թէպէտ կինդ կը վկայէ Թէ քեզ շատ կը սիրէ, բայց ալդուի բանէ մը նեղացածին պէս, քեզի դէմ կելլէ կը խռովի, կը պարսաւէ անարգելով, կը չարանայ որ քեզ ձգէ: Իսկ շունը Թէպէտ ծեծ ուտէ, անօթի մնայ, վռնտուի, ամենևին չի փախչիր. բոլորը կը մոռնայ, քեզ կը սիրէ շորթորիելով, և ամէն երախտապիտութեան նշանները կուտայ:

Ուսաի պէտք էր որ ըսէիր տէր իմ, Թէ կնկանս տուր, չէ Թէ բարեպարտիս: Քսանթոս դարձաւ ըսաց կնկանը, կը տեսնե՞ս Տիրուհի, աս պակասութիւնն իմս չէ, հապա Եզովբոսին է. ուրեմն համբերէ, հանդարտ կեցիր, ես ծեծով անոր վրէժխնդիր կըլլամ: Ա՛ս պատասխանը բաւական չէրաւ անոր սիրտը հանդչեցընելու. նայիս ծածուկ մը անկէ ելաւ գնաց հօրը տունը: Ան առնը դարձաւ Եզովբոս ըսաց սիրտը Թէ ես քե-

ղն ջրսի՛ Թէ քու շունդ կնոջմէդ աւելի քեզ կը սիրէ :

ԳԼ. ԺԱ.

Եղվէսս դարձոցանէ զինքնեան ի փոնն :

Քանի մը օր անցաւ Քաանթոս չնկրցաւ կնիկանը սիրան առնել ոչ աղաչանքով և ոչ շոյտքսլթելով. ուսաի գրաւ իրեն ազգականները խրկեց որ հաշտեցընեն, և մոռնայ սըրտին նեղութիւնը. բայց ամենևին մոխիկ չըրաւ, ալ աւելի կատղեցաւ : Ա՛ս ըրած անզգամութիւնը խնամ ցաւցուց Քաանթոսին սիրտը :

Եղվէսս եկաւ քոյին ըսաց. մի վշտանար տէր իմ, մի տրտմիր սարսափ տեղը. ես քեզի խօսք կուտամ որ կնիկդ վաղը ինքիրեն կուգայ հոս : Քանի մը դրամ առաւ անկէ ընծայ գնելու համար՝ Թռչուններ՝ որսեր և այլ հարկաւոր բաներ մեծ հարկնքի մը համար : Ձատնիք բերելու առեն անկ տուն սրսուելով կուգար, յետոյ եկաւ Տիրուհիին հօրը տանն առջևէն անցաւ, աս մտքով որ տեսնէն առած բաներն առանց խմայընելու, Թէ ինքը գիտէ որուն տունն ըլլալը, և Տիրուհիին հոն ըլլալը :

Յանկարծ հանդիպեցաւ անոնց ծառային, հարցուց Թէ արդեօք ունի՞ն ծախու բաներ հարմնեց հարկնքի համար : Որո՞ն հա-

մայր կուզես ըսայ Ծառան : Պատասխանեց, Թէ Քանթոս փիլիսոփային համար, որ վաղը պիտի կարդուի : Ծառան շուտ մը նեբս վազեց պատմեց կնկանը, որ առանց ուշանալու մէկէն ելաւ գնաց էրկանը տունը : Եւ այնպէս խառնված անհանգիստ էր որ տրանջելով կըսէր Քանթոսին Թէ քեզի կը վայլէ կարդուիլ ուրիշին հետ քանի որ էս կամ : Ահա այսպէս ինաց էրկանը քով Եզովբոսին հնարքովը . ինչպէս որ անոր պատճառովը գացեր էր, անանկ ալ եկաւ :

ԳԼ. ԺԲ.

Սպաս Եզովբոսի :

Քանթոս ուզեց օր մը իր աշակերտանեբուն կերակուր ընել. Եզովբոսին պատուիրեց որ երթայ ոչխարի լաւ պատուականը բան կայ զանոնք գնէ : Եզովբոս երթալուատենը կըսէր Թէ պիտի հասկըցընեմ տիրոջս, որ ուրիշ անգամ ինծի ատանկ անխելք բան չհրամէ : Ոսսոի գնաց մէկ քանի խոզի լեզու առաւ պատրաստեց հարկնիքին համար, և ամենուն առջին դրաւ մէյմէկ լեզու խորված համեմով (պահարը) : Աշակերտները հաձեցան, որ փիլիսոփայի գործք է առջի կերակուրը լեզու բերել. ինչպէս լեզուն ամէն լաւ խորհուրդները կը յայտնէ : Իսկ Եզովբոս երկրորդ կերակուրն ալ նաշած լեզու

բերաւ : Երբոր երրորդ կերակուրն ուզե-
ցին , նայիս լեզու բերաւ : Ա՛ս բանիս վրայ
սրտերնին նեղացաւ . վասն զի լեզու ուտե-
լով ձանձրացեր էին , մինչև բարկանալով
ըսին Եղովբոսին Թէ մենք մինչև իրիկուն
լեզմա պիտի ուտենք : Բայց Եղովբոս առանց
նայելու անոնց տրտունջին նորէն լեզու դը-
րաւ անոնց առջին : Ուսաի Քանթոս բար-
կանալով կանչեց Թէ ուրիշ բան մը չիկայ որ
բերես : Պատասխանեց Եղովբոս հանդիսա
սրտով մը Թէ չիկայ : Ի՞նչ կը խօսիս Թըշ-
առուկան կըսեր , ես քեզի չպատուիրեցի որ
պատուական համով բաներ դանես . սկսաւ
անարգել զինքը փիլիստիացիներուն առջին :

Ընդհակառակ եմ բաւ Եղովբոս՝ ըրած նա-
խատանքիդ վրայ . բայց խնդրեմ՝ լեզուէն ա-
նուշ և պատուական ինչ բան կայ աշխարհ-
քիս մէջ . ահա ամէն ուտում և խմաստուԹիւն
լեզուով կըլլայ , ամէն բան անով կառնենք
կուտանք , ալօԹք , առեներութիւն , մար-
գարէուԹիւն , հարսնախօսուԹիւն , և ամէն ձո-
ռոնուԹիւն լեզուով կըլլայ , քաղաքներ անով
կը շինուին և ամէն մարդ լեզուով կը վճա-
րէ իրեն գործքը : Ուրեմն ես կը հաւատամ
և լաւ գիտեմ Թէ լեզուէն գերազանց բան
չիկայ աշխարհքիս մէջ : Բոլոր նահապետները
հաւնելով աս պատճառներուս միաբան վըճ-
ռեցին Թէ Եղովբոս իրաւունք ունի , և
Քանթոսի բարկուԹիւնն անիրաւ է : Եւ այս-
պէս ամէն մարդ տուն գարձաւ :

ԳԼ. ԺԳ.

ԵՒՐՈՊ ԱՊԱՒ ԵԼՎԷՈՒԻ։

Քանթոսի աշակէրտները քանի մը օրէն եաև երեսը զարկին ըրած հարկինքը։ Ան ալ անպարտ զինքը ցցուց ըսելով թէ ատ բանը մոքէս ալ չէր անցած. իմ ծառայիս չարութենէն անանկ եղաւ, բայց փորձը այսօր ամէն բան կը յայտնէ. ահա ձեր առջին երեսին կը պատուիրեմ։ Ա՛ս խօսքիս վրայ Եղուվբոս ալ հոն եկաւ։ Տէրն ըսաց որ գնա որչափ գէշ բան գտնես, գնէ որ հարկինք ընեմ ատ պարոնիերուն։

Եղուվբոս գնաց նոյնպէս լեզու գնեց, պատրաստեց սեղան բերաւ։ Ամէնքը տրտընջալով սկսան կրծոտու զուրցել թէ ատ ինչպէս բան է. միշտ լեզու սկսոխ ուտինք։ Քիչ մը անցաւ, նորէն լեզու բերաւ։ Երրորդ անգամ ալ լեզու բերաւ սեղանը։ Ա՛լ չկրնցաւ Քանթոս բարկութեամբ կը պոռար. դուն ինչպէս խօսք կը հասկընաս Եղուվբ. երբոր քեզի ըսի պատուական կերակուր գնէ, դուն գացիր լեզու գնեցիր. և երբոր պատուիրեցի անշահ կերակուր գնէ, նոյնպէս գացիր լեզու գնեցիր։

Ճշմարիտ է խօսքդ ըսաց Եղուվբոս. բայց լեզուէն գէշ բան ինչ կրնայ գտնուիլ. լեզուն չէ որ աշխարհք կը կործանէ, և սա-

կալն մարդիկ կը կոտրընդնէ. ինչով կըլլան այնչափ սաեըը, հայհոյութիւններըը, անխրատութիւնեըը, և խաբէութիւնեըը. լեզուով կըլլան: Աոով պատիւներըը կը քակուին, տէրութիւնեը, Թագաւորութիւնեը կը կոտրծանին, և այլ անհամար չարիք միշտ լեզուն կը պատճառէ, տրամութիւն, խեղճութիւն, երդում, բամբասանք, որով մարդուս կեանքը լեցուած է:

Ան սաեՆը նաոտոց մէջէն մէկը կանչեց Քանթոսին Թէ զոյշ կեցիր՝ աս ծառատ քու խելքիդ բան մը կը բերէ. զի կը նայիմ որ հոդին ալ մարմինին նման պլանդակ է: Եղուբոս մէկէն պատասխան տուաւ Թէ պլանդակ անմիտ դուն ես, որ հեռաքըքրութեամբ ուրիշի բանին կը խառնուիս, և չար խօսքերով կը ջանաս անմիաբանութիւն ձգել տիրոջն ու ծառային մէջ:

ԳԼ. ԺԴ.

Հնարագիպութիւն Եղուբոսի:

Քանթոս Եղուբոսին աս խօսքերը լսելով անանկ տաքցաւ, որ պատճառ կը փնտրէր լաւ մը ծեծելու: Գալշելի լսաց, որ լսվհեան դուն իմ բարեկամս պարսաւեցիր Թէ հեռաքրքիր ըլլալով ուրիշի բանին կը խառնուիս, գոնր ինծի մէկն որ հեռաքրքրքիր ջըլլայ: Եղուբոս հասկըցաւ բանը, մէ-

կալ օրն ելաւ գնաց վաճառանոց, բազմու-
թիւն մէջ ուշադրութիւն ամենուն կը նայէր.
տեսաւ որ մէկ մարդ մը երկար ժամանակ
կեցեր է մէկ տեղ մը: Հասկըցաւ որ խիստ
պարզամիտ խեղճ մարդ մ'է. մօտեցաւ իրեն
ըսաց, թէ տէրս կը հրամցընէ որ իր տունը
կերակուր ուտես: Ա՛ս կոչտ մարդը առանց
հարցընելու, թէ ով ես, և ուրտ անէն
եկեր ես, ելաւ գնաց հետը, և աղտոտ
կօշիկներն ոտքը գնաց անանկ սեղանը նըս-
տեցաւ:

Քանթոս հարցուց թէ ո՞վ է աս մար-
դը: Պատասխանեց Եզովբոս, թէ առանց
հետաքրքրութիւն մարդ է, որ ուրիշի գործ-
քին չի խառնուիր: Ան առեն Քանթոս ծա-
ծուկ կնկանն ըսաց որ ես քեզի ինչ բան
ըսեմ նէ՝ հնազանդելով պիտի ընես. տրպէս
զի պատճառ մը գտնեմ, ու լաւ ծեծ մը
տամ Եզովբոսին: Ուսաի ամենուն առջին
ըսաց կնկանն որ գնա ջուր բեր՝ օտարակա-
նին ոտքը լուա. վասն զի կարծէր թէ ան
խեղճ մարդը չիպիտի թող տայ որ Տէրուհին
ոտքը լուայ, պէտք է որ մեծ չնորհակալու-
թիւն ընելով հրաժարի: Եւ սանկ ընելովը
յայտնի կըլլար որ հետաքրքիր մարդ է, ոչ
թէ անհոգ. ինչպէս հասկըցեր էր Եզովբոս.
աս բանն օրինաւոր պատճառ կըլլար Եզով-
բոսը պատժելու: Իսկ կնիկը բերաւ ջուրն
ու պատրաստուեցաւ որ օտարականին ոտքը
լուայ: Բայց ան Թանձրամիտը տեսաւ թէ
Տէրուհին իրեն ծառայութիւն կընէ, ինք-
իրեն կըսէր, թէ ահա զիս կուզէ պա-
տուել, ուրիշին ընել չի տար, ինքը կընէ. և

այսպէս երիկնցուց ոտքերն ու կըսէր՝ լը-
ա Տ՛երուհի. որ լուացուելէն եաև սեղան
նստաւ: Քանթոս հրամեց որ իրեն խմած
գինիէն օտարականին տայ: Դարձեալ կը
մտմըտար գեղջուկը թէ պէտք էր որ առաջ
իրենք խմեն. բայց ոտվհեաև այսպէս հրա-
մեց բարեսիրտը՝ ինծի չկրնար քննել աս քա-
ղաքավարութիւնը. ուսոն առաւ խմեց:

Բերին առջին կերակուր մը, որ շատ կը
սիրէր, ու ախորժանքով կուտէր: Տէրը կան-
չեց խոհարարը (պաշին) երեսը զարկաւ թէ
ինչո՞ւ համար գէշ եփեցիր. և պատուիրեց
որ պատժեն ու ծեծեն: Գեղջուկն անհոգ
կուտէր և կըսէր թէ աս կերակուրս խիստ
պատուական եփած է, մէկ պակասութիւն
մը կունի. բայց թէ որ սէրը իր սիրտը հանդ-
չեցընելու համար կուզէ առանց պատճառի
ծեծել խոհարարը, ինք գիտէ. իմ ինչ վը-
րաս պէտք է, ինչ կուզէ թող ընէ:

Քանթոս աս անհոգ մարդուն վրայ
խիստ կը նեղանար որ ամենևին հետաքըր-
քրութիւն մը, հոգ մը չէր ըներ, և բանի մը
եաևէն չէր ըլլար. բայց կը համբերէր նեղու-
թիւնը չէր ցցըներ: Բերին սեղանը կարկան-
դակ (պողպա) օտարականն ուտելը չէր գի-
տեր, սկսաւ հոգի պէս ուտել: Քանթոսին
սիրտը սխմուելով կանչեց ըսաւ հոգեփոխին.
յիմար, ինչո՞ւ համար կարկանդակին տակը
մեղը ու համեմ չխլեցուցիր, որ քիչ մը հա-
մով ըլլար: Ան ալ պատասխան տուաւ թէ
տէր իմ, թէ որ գէշ եփեցի, վրս պատժէ.
բայց թէ համեմ չէ գրած՝ մեր Տ՛երուհին
սխտոր վրանոյ, իմ բանս չէ, անոնն է: Ե-

Թէ իմ կինս է պատճառը՝ հիմայ ողջ ողջ կերուի՝ կըսէր Քանթոս: Աչք ըրաւ կընկանին որ իրեն հնազանդի. որպէս զի պատճառ ունենայ Եզովբոսը պատժելու:

Ոսոխի բերել աուտու փայտի կտորուանք. որ երբ վառեցան՝ Քանթոսի Տիրուհին բերին կրակին մօտ, և ձեացուցին որ մէկը պիտի ձգեն, նայելով թէ ի՛նչ կընէ օտարականին աս բանիս մէջ. գէթ հոգ տանելով բան մը կը հարցընէ, կամ կարգիլէ որ չերկի կինը: Բայց ան առանց այլայլելու հոգ մը չունէր աս ազատոր բանին վրայ. և իր սովորական անհոգութեամբ կեցեր կըսէր մըթքոլը. Թէ որ պատճառ մը չունի բարկանալ ընկերոջը դէմ, ինչո՞ւ ատանկ տաքցեր է: Ելաւ գնաց Քանթոսին քով ըսաց. Թէ որ պարտք է ատանկ ընել կանանց, քիչ մը համբերէ երթամ իմին ընկերս ալ բերեմ, որ երկուսը միասեղ երես:

Փիլիսոփան լսելով աս մարդուս խօսքը, զարմացաւ Թէ ատանկ առանց հետաքրքրութեան անհոգ և պարզամիտ մարդ կրնայ ըլլալ. այնչափ որ ալ չիդիմացաւ կանչեց Եզովբոսին Թէ երբա՛ւ որ գուն պարապ տեղը մարդ չես ձանչնար. ահա ձիմարիտ անհոգ անհետաքրքիր մարդ, որ ամենևին բան մը հոգը չէ. յաղթեցիր Եզովբ, և վառարկեցար յաղթուելիքը: Ահա ասկէց ետև գոհ եմ քու վրատ, կը մոռնամ ըրած բաներդ, կընդունիմ, և ազատ կընեմ քեզ ծառայութենէդ:

ԳԼ. ԺԵ.

Լսօտ Եզովբօսի ընդ Քաոնեթօսն։

Քաոնեթօս պատուիրեց Եզովբոսին, որ երթայ բաղնիքը նայի թէ բաղմուելիւն շատ կայ. վասն զի կուզէր բաղնիք մտնել։ Եզովբոս երթալու առեն ձամբան հանդիպեցաւ դատաւորին, որ գիտէր թէ Քաոնեթոսին մարդն է. հարցուց թէ ո՞ւր կերթաս։ Ըսաւ եմ ըսաց Եզովբոս, ուր կերթամ։ Դատաւորը կարծեց թէ ղինքը ծաղր կընէ, բարկացաւ ուաւած պատասխանին վրայ. հրամեց որ բանտը դնեն։ Երբոր դարձուցին Եզովբոսը, սկսաւ բարձր ձայնով պօռալ. Տէս կըսէր ոեր իմ, ահա իմ պատասխանս նայէ ինչպէս ճշմարիտ ելաւ. ուրեմն իրաւունք ունէի որ ըսի թէ չեմ յաւէմ ուր կերթամ. ես գիտէի թէ բանտը պիտի երթամ. գիտցուած ըզվ քեզ տեսայ, որ իմ բանտն երթալուս պատճառ եղաւ։

Դատաւորը զարմանալով անոր խելացի պատասխանին վրայ, թողուաւ։ Եզովբոս բաղնիք գնաց տեսաւ որ շատ բաղմուելիւն կայ. ամէն մէկին ուշադրութիւն կընայէր. բաղնիքին դռանը քով մեծ քար մը տեսաւ որ ամէն մտնող եղողին ոտքին գպչելով նեղուելի կուտար, ու մէկը չէր վերցներ անկէ. մէկ մարդ մը ներս մտնելու առեն

վերցուց անկէ ուրիշ տեղ դրաւ : Եզովբոս դարձաւ տուն ըսաց տիրոջն որ խիստ հանգիստ կրնաս լուացուիր . վասն զի ես մինակ մէկ մարդ մը տեսայ հոն :

Քսանթոս գնաց բակնիք . երբոր տեսաւ այնչափ բազմութիւն որ կը լուացուէին , ինչ է սա կանչեց Եզովբոսին , դուն ինծի ջրոյր որ մէկ հոգի մը կայ . ձշմարիտ է ըսաց . բայց տէր իմ տեսայ ան քարը բակնիքին դռանը մէջ դրած , ամէն մանող ելլող անոր զարնելով կանցնէր , այնչափ բազմութեան մէջէն մէկ մարդ մը գտնուեցաւ որ ան քարը վերցնէ անկէ անդին դնէ : Ահա սա պատճառաւ ըսի որ մէկ մարդ մը տեսայ այսչափ բազմութեան մէջ , ամէնէն վեր դնելով զայն : Քսանթոս ծիծաղելով ըսաց թէ Եզովբոսին պատասխանը խելքով լեցուն՝ միշտ պատրաստ է :

ԳԼ . ԺԶ .

Հանճար Եզովբոսի :

Երբեմն Քսանթոս իր աշակերտներուն երևելի հարկ մը գնաց . երբոր գիներն համեցին հարբեցան , սկսան իրարու հարցմունքներ ընել կերպ կերպ բաներու վրայ : Քսանթոս տաքնալով կը խօսէր գինիին ուժովը . Եզովբոս քունը ըլլալով ըսաց . Ամէնայ քեզի

կուզեմ հասկըցընել թէ Բաքոս (1) իրենք յատկութեն կամ իրենք գանազան ատիճան ունի. առաչինն է գուարճութեն. երկրորդն է արբեցութեն. երրորդը կուռ, թշնամանք. դուն ուզածիդ չափ խմեցիր լաւ մը գուարճացար, ուրեմն գոհ կեցիր առ աստիճանին մէջ, ալ առաջ մ'երթար: Քանթոս որ սկսեր էր գինովնալ, առ խրատս ծուռ մըտքով հասկըցաւ, ու բարկանալով ըսաց. կարէ ձայնդ՝ գնա դժոխքին մէջ եղողներուն խրատ տուր: Պատասխանեց Եվռվբոս թէ կարծեմ դուն պիտի երթաս անոնց քով:

Հոն նատողներուն մէկը տեսաւ որ Քանթոսի գլուխը տաքցեր է. Պարսն, ըսաց, կըրնայ գտուիլ անանկ մարդ, որ բոլոր ծովուն ջուրը խմէ: Պատասխանեց Քանթոս՝ թէ ես միանակ կրնամ խմել: Ան ալ ըսաց. թէ որ չկրնաս նէ ինչ կուտաս: Բոլոր տունդ կուտամ ըսաց: Ա՛ս գաշինքս հաստատելու համար երկուքն ալ հանեցին իրենց մատնին գրին գրաւ (ըռէհին). եւ քը ամէն մարդ տեղը գտրձաւ:

Առաւօտուն Քանթոս ելաւ լուացուեցաւ տեսաւ որ մատնին մատը չէ՝ զարմանա-

(1) Բաքոս Դիոսին որդին էր. որ կռապաշտները խաղողի և գինիի չաստ դրեր էին ու Դիոնիսոս կըսէին, իսկ Հայերն Սպանդարամէտ կանուանէին, որովհետև ասոր պօնին օրը շատ կինդանիներ զոհ կընէին. որուն արչեան էր մանուշակ գոյն: Բայց շատ անգամ գրոց մէջ գինիին տեղը Բաքոս կըդնեն. ինչպէս Եվռվբոս ալ գինին ըսելու տեղը, կըսէ Բաքոս իրեւ յատկութիւն ունի:

լավ հարցուց Եղովբոսին թէ ինչ եղաւ : Պատասխան տուաւ թէ չեմ յուշեմ. բայց այսչափ գիտեմ որ դուն տունդ կործանցուցիր : Ինչո՞ւ համար՝ ըսաց : Երէկ գինովութեան մէջ պարտաւորեցար որ ծովը խմես. ասոր համար մանիդ գրաւ դրիր (1) : Պատասխանեց Քանանթոս թէ ինչ ընելու է որ աս բանէս ազատիմ. երբ որ մարդու կարծոլուի թէ վեր բան է, կաղաչեմ, մէկ խելք մը բանեցուր ու բոլոր իմաստութիւդ և փորձովդ ետ առ իմ խօսքս, աս փորձանքէն զիս ազատէ, որպէս զի իմ տուած գրաւս ետ առնեմ առանց անարգանաց : Երբ որ անկարելի է ըսաց Եղովբոս, որ կարենամ քու խօսքդ ետ առնել, բայց կրնամ գաղինքդ աւրել :

Երբոր աւօր ամէնքդ մէկտեղ կուգաք՝ դուն խօսքիդ վրայ կեցիր հաստատակ, ամենևին մի վախնար : Արբեցութիւնէ մէջ ինչ որ ըսիր, հոն ալ ըսէ բազմութիւնէ մէջ. հրամայէ որ ծովուն քով սեղան դնեն. պատուիրէ ծառաներուդ որ աման մը ծովու ջուր բերեն քեզի խմելու համար : Կը տեսնես որ բոլոր ժողովուրդը հոն ժողուած էն, հրամայէ քովի եղողներուդ որ գաւաթը ծովու ջուր լեցընեն՝ տան. ձեռքդ առ, բարձր ձայնով հարցուր գաղինք ընողին թէ ինչ էր մեր պայմանը. ան ալ պիտի ըսէ թէ բոլոր

(1) Որովհետև հին էլլիսոֆաները ժողովրդեան մէջ շատ մեծ յարգութիւն և գերապանցութիւն ունէին, անոր համար գինովութիւնէ մէջ եղած խօսքն ալ ընդունելի էր, ու էտ առնելն անկարելի :

ծովը խմել: Ան աւետը դարձիր նատոլնեւուն ըսէ. Սատոսայնք, դուք գիտէք թէ ոչչափ գետեր կը լեցուին աս ծովուն մէջ. իրաւ ես պարտաւոր եմ միայն ծովուն ջուրը խմելու, չէ թէ գետերուն. ուրեմն պէտք է որ աս մարդս նախ գետերը կտրէ, որ ծովը չլեթին, հապա թէ ես ալ խմեմ ծովը:

Քանթոս տեսաւ թէ աս հնարքս անտարակոյս կրնայ դաշինքն աւրել, և մտածին ետ տալ, մեծ յուսով սկսաւ ուրախանալ: Ուստի երբոր ժողովուրդը ծովուն մօտ դիզուեցաւ, բոլոր քաղաքը հոն լեցուեցաւ որ աս չխլուած բանը տեսնեն, թէ ինչպէս Քանթոս գինքը պիտի աս բանէն փրցընէ: Բայց Քանթոս ինչ խրատ որ առաւ Եզով բոսէն՝ կատարեց ըրաւ ժողովրդեան առջին: Սատոսացիք զարմացան Եզովբոսին խելքին հնարքին վրայ, և մեծապէս գովեցին: Իսկ դաշինք ընողը Քանթոսին ոտքն ընկաւ, խոստովանեցաւ թէ յաղթուեցայ, և ապաչէց որ դաշինքն աւրէ: Քանթոս ժողովրդեան աղաչանքովը յօժարեցաւ աւրել դաշինքն, ու հաշտուեցաւ անոր հետ:

ԳԼ. ԺԷ.

Ապերախտութիւն Քսանթոսի ընդդէմ Եղբօր։

Երբոր տուն դարձան, Եզովբոս ըսաց Քսանթոսին. տէր իմ, քեզի ըրած աս աղէկութեանս գէմ արժան չէ որ ես ինչպէս քեզ ազատեցի, դուն ալ զիս ազատես գերութենէս։ Տէրը խաւսութենէ վրնտեց ըսելով կարծես թէ ես չեմ ուզեր քեզ ազատելու. եւ իր դուռը նայէ, թէ որ երկու ագռաւ միատեղ կեցած են, բարի նշան է. հապա թէ մէկ ագռաւ մը կայ, գէշ նշան է (1)։ Եզովբոս երկուսը միասին տեսաւ կեցած ծառին վրայ, եկաւ պատմեց Քսանթոսին. բայց երբոր Քսանթոս ելաւ նայեցաւ, մէկը կար, մէկալը չորեր էր։ Թշուառական, ըսաց Ե-

(1) Հին ապէնը հաւերուն ու ըռլաններէրուն կէնդուածէն ու յայնէ գէպէլով խախարդուիլ կընէին, չէզած բաներէրը կը գուշակէին կէրպ կէրպ խաբէութիւնէմբ որ կըսուի Հաւասմայութիւն. որ հաւերուն յայնէն ու ջրճմռանէն կը գուշակէին լաւ պէտք ըլլայ ըսէ գէշ։ Ու երբեմն ֆորը բանալով ապէնէրուն ջրուածէն ու լէրդին գուռնէն գուշակութիւն կընէին։ Ահա Քսանթոս ալ ագռաւը նշան դնելով գէշ սեպէց ապաց ընել Եզովբոսը. որ է խաբէութիւն։

զովբոսին, զոն ինձի երկուք են ըսիր, մըր է. պատասխանեց Թէ ես Հշմարիտն ըսի, բայց մէկը Թառաւ: Անանկ չէ, հապա գարշելի, զոն զիս ծաղր ըրիր: Բարկութիւն պատուիրեց ծառաներուն որ հանուեցընեն Եզովբոսն ու ձեձեն: Երբոր կը զարնէին խեղձին, տեղէ մը կանչեցին Քսանթոս որ կերտակրի երթայ: Սկսաւ Եզովբոս կանչելվայ անբաղդ ոլորմելուս, ես որ երկու ապառաւ տեսայ, ձեձի արժանի եղայ. զոն որ մէկ ապառաւ մը տեսար՝ հարկիւք ուտելու կերթաս, ահա իմ փորձս յայտնի ըրաւ որ ըրած կախարդութիւդ ստուտ է: Քսանթոս զարմանալով անոր բարեկամացը վրայ դարբեցուց ձեձը:

ԳԼ. ԺԸ.

Փոյէ Եզովբոս պգիպնակաւս:

Եղաւ որ Քսանթոս կերտակրի հրամցուց շատ փիլիսոփաները և Հարուստաններ. Եզովբոսին պատուիրեց որ գուռը կենայ, և պատիւ ըլլալու համար միայն իմաստուն մարդիկ ներս առնէ. իսկ Եզովբոս գուռը գոցեց ու ներսը կեցաւ. նայիս հրամցուցած մարդուն մէկին եկաւ գուռը զարկաւ: Եզովբոս առանց գուռը բանալու ներսէն հարցուց Թէ շունն ինչ կըշարժէ: Ան ալ դըրսէն կարծեց Թէ իրեն շուն կըսէ, բարկա-

նալով ձգեց գնաց : Ողջախոհ մարդիկ որ եկան, ասանկ բարկանալով ետ դարձան, կարծէին թէ գնրեւնք կը նախատէ. վե՛ր կը նայէր ու ամենուն ալ աս հարցմունքը կընէր : Յետոյ մէկն ալ եկաւ դուռը զարկաւ. անոր ալ հարցուց Եզովբոս թէ շունն ինչ կը շարժէ : Ան ալ դրսէն պատասխան տուաւ թէ պոչն ու անկաճ՛նելը : Եզովբոս տեսաւ որ յարմար պատասխան տուաւ, բացաւ դուռն ու տարաւ ներս ախրոջը քով, ըսաց թէ մէկ փիլիսոփայ մը չեկաւ քու հարկիդ տակէ՛ն զատ :

Քանթոս սաստիկ բարկացաւ՝ կարծելով թէ մէկալնք զինքը ծաղր ընելու համար չեն եկած : Մէկալ օրը բարեկամներն եկան դպրոցը, և երեսը զարկին Քանթոսին որ գնրեւնք անանկ անարգելով դունէն ետ ձամբեց. ինչու՞ համար, կըսէին, ան սաստիկանը մեզ անարգեցկը. դրիր դռանը քով այլանդակ գերիդ որ մեզ թշնամանելով ետ դարձուց : Հարցուց Քանթոս թէ քո՞ն էք ինչ էք. երա՞ է ըսածնիդ : Պատասխանեցին ամէնքը մէկ ձայնով. Ճշմարիտ է քեզի ըսածնիս : Շուտ մը կանչեց Եզովբոսն հարցուց բարկանալով թէ ինչու՞ համար ասանկ անարգելով ետ դարձուցիր բարեկամներս : Պատասխանեց Եզովբոս թէ դուն չխոհարուեստութիւնը որ յիմար մարդիկ թող չիտան ներս մտնելու, որ միայն գիտուն խնամուն մարդիկ նատին հարկիդ : Իրաւ այդպէս է ըսաց Քանթոս. բայց ատոնք ամէնքը գիտուն չե՞ն : Պատասխանեց Եզովբոս թէ ես աս գիտեմ որ դուռը զարկած

առնը, ես իրենց կը հարցընէի թէ ջուն
բինչ կը շարժէ. մէկը չկրցաւ հասկընալ, կ
հարցմունքիս պատասխան տալ. ուստի կը
նայէի որ տգէտ մարդիկ են, դուռը չէի բա-
նար. միայն անոր բացի դուռն որ լաւ պա-
տասխան տուաւ:

Եզովբոս խօսքը լմընցուց, բայց մէկը
չկրցաւ դէմ խօսիլ. և ամէնքը խոստովան
եղան թէ ճշմարիտ է ըսածը:

ԳԼ. ԺԹ.

ՀՆԱՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԵԶՈՎԲՈՍԻ:

Քանթոս օր մը Եզովբոսին հետ պերե-
ժանոցը գնաց, որ պերեզմաններուն վրայի
գովեստները կարդալով կը զուարճանար:
Եզովբոս տեսաւ որ մէկ պերեզմանի մը վրայ
գրած էին Յունաց առ գրեր. α Ա՛լֆա.
β Վ՛էթա. δ Տ՛էլթա. ο Օ՛միգրօն, ε Է՛փսիլըն.
Ջ Թ՛էթա. χ Խ՛ի: Եզովբոս առ գրերը ցցուց
Քանթոսին, հարցուց թէ ասոնք ինչ կը
նշանակէին: Քանթոս ուշադրութեան նայեցաւ
քննեց մտմտաց, չեմ հասկընար ըսաց ինչ
ըսել կուզէ: Ան առնը զարձաւ Եզովբոս
ըսաց. Ամիրայ, եթէ առ գրերուն ուժովը
հոս գանձ գտնեմ, ինչ կուտաս ինձի: Ան
ալ սիրտ առնով ըսաց թէ կէսը կուտամ և
քեզ ալ կազատեմ: Եզովբոս առ խոստումն
քու ընդունելով չորս քայլ (ոտք) հեռացաւ ան-

կէ փորեց գանձ գտաւ. տարաւ Քառնեծո-
սին ըսաց թէ կառարէ խոստմունքդ, զիս
ալ ազատ ըրէ: Պատասխան տուաւ թէ քեզ
չեմ ազատեր, մինչև որ ան գրերուն զօրու-
թիւնը չխմհկնես ինծի. ան ալ սկսաւ կռակում
անոնց իմաստը հասկընալ, բան թէ սակին
ժառանգել:

Եզովբոս ալ ըսաց թէ ով որ սա գանձը
հոս թաղեր է, իմաստուն մարդ ըլլալով սա
գրերը փորել տուեր է. որ կը նշանակին՝
α Աբօվն գնացեալ. β վէմատ քարէ. ց Ոչ-
սէր ջուր. ο Օձէտաս փորելով. ε Ւ-ըէսի
գացեալ. ծ Թէսաւրծն գանձ. χ Խհրէսէտա ա-
կաւ: Քառնեծոս ալ ըսաց, որովհետև այս-
պէս հնարագէտ բան գիտցող ես դուն, յի-
մար կըլլամ ես թէ որ քեզ ազատեմ՝
կրկնեց Եզովբոս. թէ որ չգիտես՝ սա գան-
ձը չես կրնար ժառանգել. վն գի կերթամ
բիւզանդացւոց (1) Թագաւորին կխնայել
նեմ, որ անոր հանար պահած էր: Ասոնք
գիտես ըսաց Քառնեծոս: Ահա գրերը յայտ-
նի կը ցցըննեն ըսաց. α Աբօվս տուր. β վ ա-
ռէք Թագաւորին. ց Տէօնէսէս Վհանեսու-
ան. ο Օն զոր. ε Ւ-ըէս գտէր. ծ Թէսաւրծն
գանձ. χ Խհրէսէտա ոսկւոյ: Քառնեծոս սա
բանը լսելով հասկըցաւ որ ձեռքին սխոխ

(1) Բիւզանդիան կըսուի Սթամպօլ ևիպես ի-
նանին անուանքը. որ նախ ընդ պարի փոպոփ ՚ի
Աղոզանին պատգամը. յետոյ Կոսթանդիանոս
Նորոգեց ջնջուաց: Հին ատենը հոս նստող Թա-
գաւորը կը հրամայէր ծով եղած կալնիերուն: Ինչ-
Եզովբոս ալ կը յայտնի:

երթայ, ան ըսաց կէտն ու ձայն մի հանել: Դուն չես ինծի տուողն ըսաց Եզովբոս, հապա ոսկին Թաղողը տուեր է: Մանկ դիր նայէ ինչ կը նշանակեն գրերը. α Անէծքն զառեաքն. β Վաթխանպէս գնացեալ. δ Տէէէսնէ բաժանեցէք. ο Օն գոր. ε Է՛-ըէէ գալք. Ժ Թխաւ-ծօն գանձ. χ Խհրէսէա ոսկւոյ:

Եկոր աուն երթանք ըսաց Քսանթոս որ բաժնենք ոսկինները, և քեզ ալ ազատ ընեմ: Բայց երբոր եկան՝ վախցաւ Քսանթոս, ըսելոյ թէ բանը գուրս հանէ Եզովբոս, ուստի բանտը գնել հրամեց խեղճը: Երբոր բանտը կը տանէին Եզովբոս կըսեր թէ վիկտոտիներն աստնկ կը պահեն երեսնց ըլած խոտոնելը: Ձէ թէ միայն չազատեցնր զնս, որ խոտոտցեր էին, հապա բանտն ալ գնել կուտաս: Ան խօսքուն սիրտը շարժեցաւ Քսանթոսին, շուտ մը պատուիրեց որ Թող տան, ըսելով անտարակոյս երբոր դուն ազատես զնս չարաչար սիրտ բամբասես և ամբաստանես:

Պատասխանեց Եզովբոս. Հիմա սրչափ դէշ ալ ինծի կուգես ընծի ըրէ. բայց գիտես որ օր մը զնս ակամայ սիրտ ազատես:

ԳԼ. Ի.

Անպտուղ ենկեղեսի:

Ա. Ժամանակս Սամոս կղզին զարմանալի դիպուած մը պատահեցաւ. երբոր մէկ ընդհանուր երեսէն ոճն մը կընէին, յանկարծ ալիքս մը ընկաւ բարձրէն խլեց տէրութենէ մաանին, տարաւ ծառայի մը ծոցը ձգեց: Բոլոր ժողովուրդը զարմանալով աս պատահարէն վրայ, եկան միաբան աղաչեցին Քաանթոսին, որ իրենց մէջ խիստ երեսէն իշխան և մեծ փիլիսոփայ էր, թէկնէ անոնց, թէ ինչ կը նշանակէ աս հրաշալի դիպուածս:

Քաանթոս չէր գիտեր ինչ պատասխան տայ, ժամանակ ուզեց որ մտածէ: Երբոր տունդարձաւ միշտ անհանգիստ տրտմութենէ մէջ ինալով սկսաւ մաղձոտիլ: Եզովբոս տեսաւ թէ իր տէրը տրտմութենէ կը մաշի՝ հարցուց թէ ինչո՞ւ համար ասանկ տրտում էս. աս բանս ինծի ձգէ, և տրտմութենդ մէկ դի դիր որ քեզ կը տանջէ: Գնա վազէ զուրցէ սամոսացիներուն թէ իմ բանս չէ հրաշք մեկնել և գուշակութիւն ընել. սակայն էս մէկ ծառայ մը ունիմ տունս որ ասանկ բաներու լաւ տեղեակ է, ան կրնայ տալ ձեզի դիպուածին մեկնութիւնը, և ձեր տարակուսանքը քակել: Տէր իմ, թէ որ էս ա-

նոց տարակոյսը վերջնեմ, բոլոր պատիւը քեզի կըլլայ որ առանց բան գիտցող ծառայ ունիս. Թէ որ չեկրնամ, միայն ինձի կըլլայ պարտաւանքը:

Գանձուս մեծապէս ուրախանալով դնաց միւս օրը քաղաքացւոց ժողովքը, և անոնց պատմեց Եզովբոսին խօսքերը: Անոնք ալ պատչեցին որ շուտով բերել ատոր: Երբոր Եզովբոս եկաւ մուտ առնուացւոց ժողովքին մէջ, կերտարանքին նայելով սկսան ամէնքը ծիծաղիլ, մինչև ծաղր ընելով ըսին Թէ կրնայ ըլլալ որ առանց ալլակերտ կոչտ մարդը աս հրաշքին մեկնութիւնը տայ. առանց ցուցանքաւոր բերնին ինչպէս պիտի բարի բան ելնէր: Ոեսոն նորին սկսան կատակելով խնդալ Եզովբոսին վրայ:

Իսկ Եզովբոս ձեռքը շարժելով կանչէր ժողովքին որ լուռ կենան. Ով ատենացիք կըսէր, ինչո՞ւ զիս կանարգէք կերտարանքիս տակէն ըլլալուն համար. հոգին պէտք է նայիլ չէ Թէ կերտարանքը. բնութիւնը շատ անգամ գեղեցիկ հոգին տգեղ մարմնոյ մէջ կը դնէ. դուք ատանին ձևին կը նայիք Թէ մէջն եղած պատուական գիներին: Բոլոր ժողովքին մարդիկն ատ խօսքերս լսելով ըսին որ Եթէ դուն ունիս մէջի օգտակար բան մը խօսելու որ կարենայ ամէնուս սիրտը հանդչեցնել՝ խօսէ: Ան ատենը մեծ համարձակութիւն մը տեսնելէ յետոյ Եզովբոս. Ով ատենացիք, որովհետև երբոր Բաղդը կը տրուի երկպառակուելու և խռովելու ցանկալ, կը դնէ մէկ տեսիլ մը փառաւորութեան տիրոջն ու ծառային մէջ. Եթէ պատահի որ ծառան

Էյնի էշխանութիէ տակը, վիշա կը քաշէ. և
Թէ տիրոջմէն վեր ըլլայ, նոյնպէս վիշա կը
քաշէ ծեծ կուտէ, անանկ որ բանը որ դնես
դառնայ, ծառան նէղութիւն պիտի քաշէ:
Դուք միտչև որ վես ազատ ըլնիք, իմ տիրոջս
էշխանութիէը տակէն չհանիք, ես համար-
ձակ ձեզի չեմ կրնար յայտնել առանց վախ-
զայն՝ որուն կը վտիտիք: Ան կեսին բո-
լոր Ժողովուրդը մէկ ձայնով կանչեց Գաո-
Թոսին Թէ ազատ ըրէ Եզեկիան, կատարէ
առնուացոց կամքը, սակ բոլոր քաղաքը
ազատ կրնաս:

Գաոնէոս պատասխան չուտաւ: Դա-
տաւորը մէկէն կանչեց Գաոնէոսին. Թէ որ
դուն Ժողովրդեան մտիկ չընես ազատ չը-
նես քու կամքովդ, հիմա ես ազատ կրնամ
իմ էշխանութիէս, որ քեզի հատատար կը-
ծայ:

Ան չկրցաւ դէմ կենալ Գաոնէոս՝ ա-
կանց կամքով ազատ ըրաւ. որ վտիրով
(պօռուէրով) քաղքին մէջ կը կանչէին Թէ
Գաոնէոս փիլիսոփան ազատ ըրաւ Եզե-
կիան առնուացոց ապրանքին համար: Ե-
պատկա կատարեցաւ Եզեկիան մարգա-
րէութիւնը որ Գաոնէոսին ըսեր էր՝ Թէ ա-
կանց վես պիտի ազատ ընես: Եզեկիա
ազատ ըլլալէն ետև սկսաւ առանկ խօսիլ
Ժողովրդեան:

Ով առնուացիք՝ ինչպէս պիտի, արծիւն
(1) է Թռչուններուն Թագաւորը, որ իշ-

(1) Արծիւ (խորտակ) Թռչունը կըսուի
Թռչուններուս Թագաւոր, որովհետև ամէնէն զօր-

խանական մասնին վերցուց տարաւ ծառայեին ծոցը ձգեց. ասոր բանս կը նշանակէ՝ որ հիմակուան թագաւորներէն մէկը կը մտածէ որ ձեր ձեռքովը ձեր նշխանութիւնը կործանէ, և ձեզ դերի ընէ՝ եղծանելով ձեր օրէնքը: Ա խօսքս ահի դողի մէջ ձգեց բոլոր ամուսնիքը:

Քանի մը օրէն եաև ամուսնիք թուղթ առին Կրեաս (1) Լիւդիայի թագաւորէն՝ որով երեսից կը պատուիրէր որ ամէն տարի երեսն տուրք տան, եթէ չիտան՝ պատերազմով վրանին ալիտի ելլէ, պատրաստ կենան: Ա բանիս վրայ ժողովք ըրին որ մտածեն Համբայ մը գտնեն. վր ալ եթէ հնազանդէին, աղատուելը կը կորսուէր. և կը վախ-

(1) Կրեսոս Լիդիայի թագաւորն էր 550 տարի առաջ Քրիստոսէն. որ Ասիայի մէջ շատ տէրութիւն փերելով բոլոր Յոյները հարկատու ըրաւ. այնչափ գանձ ունէր դիզեց, որ շատ մեծ եղաւ հարստութիւնք: Ուսումնականները հետ խօսիլ շատ կը սիրէր. օր մը մեծութիւնը վրայ պատմելով ըսաւ Սոլոն փիլիսոփային ինչ ինձի պես ֆառատոր տարտ տեսած է ու: Ան ալ ըսաւ ինչպէ՞ս տակ պէտք է որ տարտ երեսն երանի պայ: Յետոյ Կիրոս թագաւորէն յաղթուելով փաղափն առին. երբոր մեծ պատերազմ կը էիգիպտալով առրը վերցուց պիտի պարներ Կրեսոսին, իր պատն տալը գտնելու, որ լեզուն կապուած էր էր խօսեր, սրտին կոիծուն լեզուն բացուեցաւ. Ի պարներ, ըսաց պէ-

նայեն Կրեսոսին իշխանութեանը տակին էյնիլ. մինչև հարկ եղաւ խորհուրդ հարցընել Ե-զովբոսին, և անոր տուած խորհրդին հետևիլ ամէն բանի մէջ: Ան ալ պատասխան տուաւ թէ Պարոններ, ձեր իշխաններուը խորհուրդ կուտան թէ տուրք տանք Կրեսոսին. և օգտակար է հնազանդիլ անոր, ու պատերազմին թշուառութէն ազատիլ. ուստի իմ ձեզի տալու խորհուրդս պարապ է. սակայն բաւական է ձեղի մէկ բան մը պատմել՝ որ հասկընաք թէ ինչ պէտք է ընել առ բանիս մէջ: Ա աշխարքիս մէջ բազդը երկու ձամբայ յայտներ է մէկմէկու հակառակ. մէկին է ազատութէ ձամբան, որուն սկիզբն է գժուար և խիստ, և վերջը դիւրին ու զուարձալի: Մէկալն է ծառայութեան, որուն սկիզբն է դիւրին և հանդիստ, բայց եռքը գժուար և խիստ: Ա բանս որ լսեցին, ամենքը մէկ ձայնով պօռացին թէ մենք ազատ ենք, ծառայութէ տակ չենք կրնար: Եւ այսպէս Թագաւորին խրկած դեսպանը ետ ձամբեցին առանց տուրք տալու: Կրեսոս երբոր բանը հասկըցաւ՝ ուզեց սամոսացւոց վրայ պատերազմ բանալ. բայց դեսպանն իրեն ըսաց թէ տէր իմ, չեմ կարծեր թէ կարենաս անոնց յաղթելով վրայ ել-

նուորին, ինչ հայրս կրնասան է: Զինուորը իրեն պարտս կիրսս նագաւորին տալին, որ հրամէց իրաւ վառելն ոչ ոչ երբեն. իրանին փոխ որ իրբին՝ ինչ ընկաս Սոլոնին խօսքն ու սկսաս պօռալ. Սոլոն Սոլոն: Թագաւորը պատճառը հարցուց. երբոր իմացաս Սոլոնին խօսքը, ուղարկեց:

ևս ոչչափ որ Եղովբոս իրենց քսիլ է. վն զև անոր խորհրդին կը հետևին, որ ամէն բա- նի տակէն կելլէ. ուսոի իմ խորհուրդս աս է որ ամէն բանէն լաւ կըլլայ, գեսպան իրը- կէ՝ սամոսացւոցմէ Եղովբոսն ուզէ, և խօսք տուր իրենց հետ հաշտութիւն ընելու. պար- գևներ ալ խոստացիր տանից յիշելու տուր- քը, ձգէ հիմա պատերազմը. երբոր Եղովբո- սը ձեռք ձգես, ան ատենն տանից աշխատա- նաց կը յաղթես անոնց: Կրեաս հաւանեցաւ աս հնարքիս, և գեսպան իրկեց ուղեց Ե- զովբոսը: Անոնք ալ հաւանեցան իրկելու:

Եղովբոս հասկընալով անոնց միտքը եկաւ ժողովքին մէջ այսպէս խօսեցաւ. Ով սա- մոսացիք, ինծի մեծ պատիւ է որ թագաւո- րին երթամ ոտքն լինիմ, պատուեմ. սա- կայն երթալէս առաջ կուզեմ ձեզի տուակ մը զուրցել: Հին տանը երբոր կենդանի- ները համաձայն էին, գայլերը պատերազմ բացին ոչխարներուն դէմ որ շներուն հետ միաբան ըլլալով անոնց տանէն կերթային. իսկ շներն առաջնորդ ըլլալով կը ձեծկռէ- ին, անանկ որ գայլերը չէին կրնար մօտե- նալ ոչխարներուն: Ուսոի գայլերը գես- պան իրկեցին ոչխարներուն որ հաշտուին. բայց երաշտ հետ սկսով վարուելու համար ուզեցին որ շները պատանդ (ահէն) իրկեն: Ոչխարները յիմարութեք հաւանեցան, և իրկեցին անոնց իրենց շները. գայլերը մէ- կէն պատուեցին շները՝ եկան ոչխարներն ալ կերան:

Սամոսացիք լաւ հասկըցան առակին միտքն ու ջուգեցին որ Եղովբոս երթայ իրենց քս-

վէն. բայց Եղովբոս չուզէց կենալ, եւս դեսպանին հետ գնաց Թագաւորին:

ԳԼ. ԻԸ.

Եղվբոս հաշտեցուցանէ զԹագաւորն:

Երբոր Լիւդիա քաղաքը հասաւ Եղովբոս, եւս Թագաւորին առջին. բայց Թագաւորն ան որ տեսաւ, աւելի բարկացաւ: Մեծ ա՜մօթ է ինձի՝ կըսէր, որ սանկ այլանդակ մարդը վրս արգիլէ, և անանկ մեծ կղզին ձեռքէս հանէ: Պատասխանեց Եղովբոս. Ով մեծ Թագաւոր, ես ոչ բանութեամբ և՜ կայ Ֆոս, և ոչ վախնալուս. այլ իմ կամքովս եմ եկեր. ներէ ինձի որ քիչ մը խօսիմ. սակայն մեր բանին վրայ չխոսած՝ մէկ առակ մը պատմեմ, Թողութիւն ըրէ: Մէկ մարդ մը մարախ (էֆէրէնէ) ժողվեր կը մեռցընէր. դիպուածով բանեց Ճպուռ (ճըռ-ճըռ պէօճէէ) մը. կենդանին սեսաւ Թէ զինքն ալ պիտի մեռցընէ, սկսաւ աղաչել Թէ զիս մի մեռցըներ պարտապ սեղը. վն զի ես ոչ ցորեն վնաս ունիմ, և ոչ մէկ ուրիշ զէն մը կրնամ տալ, այլ միայն շարժելով (1) իմ մանուլրակ

(1) Ա՛ս պէսակ կենդանիներուն ձայնը օդէն կը առպիանայ. վասն զի երկայն ծակէն օդը կը ցրնէն

մաշկերս որ ունիմ վրաս՝ քալդը ձայն կը հանեմ, որ անցնողները ու բանուորները զուարճանան. ուստի ձայնէս ՚ի զատ բան մը չունիմ, և ուրիշ բան չեմ կրնար վրաս գտնել: Ա՛ս բանս որ լսեց, Թոդուց որ երթայ:

Ով մեծ Թագաւոր, ահա ես ալ ոսքդ ընկած կաղաչեմ, զիս փուճ տեղը մի մեռցըներ. ես մարդու գէշութիւն ըրած չեմ. մէկ յանցանք մը ունիմ որ համարձակ կը խօսիմ, և մարդու երեսպաշտութիւն չեմ ըներ. թէպէտ մարմինս է անշնորհք, որ դրսէն անարդ կերևնամ, բայց խօսքն անարդ չէ: Թագաւորն ա՛ս խօսքիս վրայ անանկ զարմացաւ որ մեռցընելու մեղքը ցաւ. ուստի կանչեց. Եզովբոս, ես չէ, հապա Ճակատիսը (1) կեանքդ քեզի բաշխեց. խնդրէ ինծմէ ինչ կուզես, քեզի կը շնորհեմ: Ով մեծ Թագաւոր, ըսաց Եզովբոս, կը խնդրեմ որ սամոսացւոց հետ հաշտութիւն ընես: Ա՛ս բարի, ըսաց Կրեսոս, կը հաշտուիմ: Ան առեն Եզովբոս ընկաւ Թագաւորին ոտքն

տաշկերքին ներքուն. և ան տաշկերքուն ըրկռտալէն՝ օդը կը շարժի և աստիճ յայն կը հանէ. շատ տանը կենդանիները ասանկ շատ յայն կը հանեն:

(1) Ճակատագիրը ըսելով հեղհեղուս փիլիսոփանէրը կիմանային ճակտի վրայ գրած այն տարտուն գալիթը. և գրուածը հարկաւ պիտի ըլլար, ինչ որ ընես՝ շահ չինայ կըսէին: Ա՛ս գիրը դիտայ ապուշացնելը կինային հարցալ, բայց չէին կրնար ասել. անոր համար կըսէին, թէ Դիւս Ակիւղասին տահուանը վրայ կ՚ուլար, որ ճակատագրած էր: Բայց ասոր

ու խոնարհութիւբ չնորհակալ լալա ըրած բարերարութեանը համար :

ԳԼ. ԻԲ.

Եղվբոս գրէ պատասխան :

Եղվբոս իր առաքինեբն ան առնելը պրնց երբոր Կրետա Թագաւորին քոյրն էր, որ մինչև մեր օրը ծնացին : Ան առաքինեբն ընծայ ըրաւ Թագաւորին. ան ալ մեծ չնորհակալութիբ ընդունեց, և Եղվբոսին մեծութիբ տալով դեսպան ըրաւ, ու Թագաւորական Թղթերով խրկեց որ երթայ առնու աղջկան հետ հաշտութիբ խօսի Թագաւորին կողմանե, և հասկըցնէ որ իրեն աղջկան քով Կրետա անոնց հետ բարեկամ պիտի ձնայ : Ասկէ ’ի զատ Թագաւորը շատ պարգևներ ընծայ ըրաւ Եղվբոսին, և ձամբուն առնէն բանը հոգայ : Երբոր Սամոս հասաւ, քաղաքացիք անպատմելի ուրախութիբ լեցուած, Թագ պատկ տարին իրեն, և քաղաքական հանդէսներ ըրին՝ որ մեծ պատիւ ըլլայ Եղվբոսին :

Իսկ Եղվբոս Թագաւորին Թղթերը կարդայ լալը Ժողովրդեան առջև. հասկըցնելով թէ անոնք ինչպէս որ իրեն պատաս-

վերջապէս էրը հիմանան ամբոխին նախանամոլին որ հը հասկըրե պիտի :

թե ընդհեցին, ինքն ալ անոր դէմ աս քա-
նով հաւուցում ըրաւ. ուսաի Թագաւորին
միտքը յայտնեց անոնց և հաշտուելի ըրաւ:
Ցետոյ ելաւ աս կղզիէն գնաց զանազան քա-
ղաքներ իմաստուն մարդիկ փնտրելով, որ
հետերնին հակաճառուելի ընէ: Մինչև ե-
լաւ Բաբելոն (1) գնաց. հոն ալ իր իմաս-
տութիւնը յայտնեց, և Ներոս Թագաւորին
պալատը մտաւ:

Ան ժամանակի Թագաւորները իմաստու-
թեամբ վարուելով կուիւ չունէին, միշտ խա-
ղաղութեան մէջ էին. և տով շատ անգամ ի-
րարու առաքիներ և խրատին բաներ կը գրէին,
հարցմունք կընէին աս պայմանով որ երբոր
մէկը չէր կրնար պատասխան տալ, կը պար-
տաւորէր տուրք տալու մէկալին, ինչ կերպ
որ գաշինք կընէին (2):

Եղիպտոս ամէն հարցմունքին և առակնե-
րուն դիւրին պատասխան կուտար, որ Ներ-
պեռոս Թագաւորին կը գրէին, և տով մեծ
համբաւ ունեցաւ Թագաւորը: Բայց որով-
հետև մէկալ Թագաւորները չէին կրնար Ներ-
պեռոսին խնդիրներուն պատասխան տալ,
կը պարտաւորէին գաշնադրութեան համար
տուրքեր տալ Թագաւորին:

(1) Բաբիլոն (Պաղտատ) ան ժամանակը ծաղ-
կած ըլլալով գիտուններու յարգուելիան կը, մա-
նաւանդ Ներոս Թագաւորին օրը. անոր համար
եղիպտոս հոն գնաց:

(2) Ան կերպ հարցմունքս ինչ հինա կայ արա-
բացոց մէջ. որ երկի փաղափները շատ անգամ
(Էնիգմները) և (Տրովիշնները) կերևան ձեռագիր

ԳԼ. ԻԳ.

Եղովբոս ուղեգրէ ինքեան պէնոս:

Եղովբոս տեսաւ որ զաւակ չունի, մէկ աղնուականի մը զաւակ Էնոս անունով ի-րեն որդի ըրաւ, տարաւ Թագաւորին յանձ-նեց ինքը իր հարազատ զաւակը. բայց աս ա-պերախտը շատ չանցաւ մեծ անկարգուԹի-ներ ըրաւ Եղովբոսին տանը մէջ: Եղովբոս հասկըցածին պէս՝ անէն դուրս ըրաւ: Իսկ Էնոս ոխ պահեց, ու Եղովբոսին վրէժխնդի-րը ընալով ԹուղԹ մը չինեց անոր բեր-նէն, որ կը գրէ իշխաններուն, որոնք խրԹին առաջնեը կը խրկէին Լիգերոսին. և անոնց կը հասկըցնէ Թէ ասկէ ետև ձեզի հետ մէկ պիտի ըլլամ Թագաւորին դէմ: Ան ԹուղԹը Եղովբոսին մատնիովը կինքեց տարաւ Թա-գաւորին ցցուց:

Թագաւորն որ տեսաւ Եղովբոսին կնիքը (ջօհէ-ըը), կարծեց Թէ անտարակոյս Եղով-բոսն է գրեր ան ԹուղԹը իրեն դէմ. ուս-տի բարկուԹիը հեռևելով անանկ տաքցաւ որ մէկէն հրամեց Հերմիբբոսին (1), որ ա-

նէրուն բան կը հարցընէր. ելնէ լինգիպոս, կը պա-պաուրէին անոնց բան պալո:

(1) Հերմիբբոս էր Թագաւորին մէկ հաւատարիմ

ռանց քննելու մեղքին եղելքան նըր մատ-
նիչ: Հերմիբբոս ձշմարիտ բարեկամ ըլլա-
լով Եղովբոսին՝ իրեն բարեկամութիւնը յայտ-
նի ըրաւ ատ կերպով: Առաւ Եղովբոսը տա-
րաւ մէկ գերեզմանի մը մէջ սահեց ամե-
նևին ծածուկ. և ինքն զգուշութեամբ բան
կը տանէր անոր մարդ չիմանալով: Իսկ են-
նոս՝ Թագաւորին հրամանովը Եղովբոսին
ամէն բանը յափշտակեց:

Ժամանակ անցնելէն եաև Նէքպենաբոս
եգիպտացւոց Թագաւորը լսեց որ սպաննե-
ն Եղովբոսը, Թուղթ մը գրեց Ալիբերոս
Թագաւորին՝ կոդաչէր որ իրեն մէկ քանի
օրամիտ Ձարտարապետ (գալֆա) իրկէ. որ-
պէս զի շինեն անանկ մէկ աշտարակ (խոռէ)
մը, որ ոչ երկընքին գալէն և ոչ գետնին: Նաև
իրկէ իրեն անանկ մէկ խեղացի բարակ մարդ
մը որ կարենայ պատասխան տալ իրմէն
առակներուն: Թէ որ ըսաց աս բանս կարե-
նաս ընել, ես տուլք կուտամ քեզի. Թէ չի-
կրնաս, դուն ինձի պիտի տաս: Ա Թուղթն
որ կարդաց Թագաւորը, արտմուԹէ պա-
շարուեցաւ. վա՛ղ մէկը չուներ քովն որ
կարենայ աշտարակին առակը մեկնել. ուս-
ոն առանիկ յաւելով Եղովբոսին մահուանը
վրայ՝ կըսէր Թէ անոր մեռնելով իմ աէրու-
Թիս գլխաւոր սիւնը կործանեցաւ:

Հերմիբբոս առաւ Թէ Թագաւորին կամ-
ծը արտանց է, եկաւ աւետիս տուաւ Թէ Ե-
ղովբոս կենդանի է. վասն զի Թագաւորիս

պաշտօնապէրն էր (հաստա գլուխը). անոր համար
իրեն պատուիրեց որ գտնէ Եղովբոսը:

օգտին համար չիմեռցուցի. լաւ գիտէի որ շատ պիտի զղջաս տուած վճռիդ վրայ: Ա բարի լուրը լսածին պէս Թագաւորը՝ մեծա- պէս ուրախացաւ: Ոսատի շուտով Եզովբո- ը գերեզմանէն դուրս հանեցին, խեղճին վրան գլուխը աղտոտ հոդով՝ մէկէն Թագա- ւորին դէմը հանեցին. որ զինքն անանկ խեղճ տեսնելով այնպէս սիրտը ցաւեցաւ որ սկսաւ լալ: Հրամեց որ շուտով լուան հագ- ցընեն և ամէն պակասութիւնը հոգան: Եզով- բոս Ենինոսին ըրած անօրէնութիւնը տուտ հա- նեց, և իր մեծատուութիւնը յայտնի ընելու համար՝ նեռում խնդրեց Թագաւորէն, որ չիմեռցընէ Ենինոսը:

Ալիգերոս Թագաւորը հանեց եգիպտա- ցւոց Թագաւորին Թուղթը ցցուց Եզովբո- սին որ հասկընալով առակին միտքը, սկսաւ ծիծաղիլ. ետքը Թագաւորին ըսաց, որ ա- սանկ պատասխան տայ: Երբոր ձմեռն անցնի՝ քեզի բանուորներ կը խրկեմ որ շինեն ըսած աշտարակդ: Նաև կը խրկեմ մէկ գիտուն մարդ մը որ ամէն բանի պատասխան տայ ինչ որ իրեն առարկեն: Ան առեղը Ալիգերոս Եգիպտոսի Թագաւորին գեղ- պանները, և նորէն տուաւ Եզովբոսին ամէն մեծութիւնը, իրեն ծառայ տուաւ Ենինոսն ամէն ունեցած բարկքովը:

ԳԼ. ԻԳ.

ԱնիւալարուԹիւն և խրատ Եղվբոսի։

Եղվբոս նորէն տուն առաւ Էնոսը. ա-
մենևին անցած բաները չմոռնալով իր զաւկին
սէս կը նայէր, և շատ գեղեցիկ խրատներ
կուտար որ բարի ըլլայ։ Որդեակ, կըսէր,
ամէն բանէն առելի զՅԱծ պաշտէ, Թագաւո-
րին հնազանդ եղիր, Թշնամիներուդ առջին
երևելի եղիր որ քեզ չմոռնան. իսկ
բարեկամներուդ՝ հեզ և խոնարհ, որ միշտ
զքեզ առնլի սիրեն։ Ալօթք ըրէ Թշնամի-
ներուդ երբոր խեղճ կըլլան ողքառուԹիւն
և հիւանդուԹիւն, որ ետքը քեզի տրտմուԹիւն
չբերեն։ Շատ անգամ ալ բարեկամներուդ
առողջուԹեանը համար ալօթք ըրէ։ Միշտ
նայէ որ ընկերոջդ հետ ազէկ սիրով եր-
Թաս, որ չըլլայ Թէ ցանկուԹիւն ուրիշ մար-
դու եանէն ըլլայ, որովհետև կանայք քնա-
սէս վսխոխական և ԹեԹևամիտ են. երբոր
կը շոլոքորԹին, չար բան չեն մոռածեր։ Ան-
խոհեմուԹեամբ ամէն բանի մէկէն մի հա-
ւատար, քիչ խօսէ, և միշտ քու լեզուդ աէր
եղիր. մի նախանձիր ուրիշներուն բաղդին.
առաւել ուրախացիր ուրիշին յաջողուԹիւնը
վրայ, Էն զի նախանձը առելի Էնսս կը բերէ

քու անձիդ, քան թէ ուրիշին (1): Հոպա-
բարձութիւն ըրէ տանդ. արիւնն կեցիր ծա-
ռանեբուդ վրայ, որ քեզմէ վախնան իբրև
իրենց մեծէն, և քեզ սիրեն իբրև իրենց բա-
րեբար: Մի ամբչնար միշտ ալէկ բաներ սոր-
վելու. մի յայտներ կինոջդ քու ծածուկ բա-
ներդ, վասն զի անդադար կը ջանայ պատ-
ճառ գտնել, որ վրատ ելլէ, և քեզի հրամ-
մէ: Ամէն օր բան ժողվէ քեզի վաղուան հա-
մար. զի շատ ալէկ է ունեցած բարիդ թշնա-
մուդ ձգել մեռնելէդ եառև, քան թէ ողջու-
թիե առենդ բարեկամի կարօտ ըլլալ:

Ուրուն որ հանդիսիս բարևէ պատուով և
քաղաքավարութիբ. շունը պոչը շարժելով
իբը կը շողոքորթէ տէրը, պարտական կընէ
որ իրեն հաց տայ: Մի զղջար բարեպաշտ
ըլլալու. բամբասող մարդը տուն դի հան-
դիսպըներ, վասն զի դուրս կը հանէ տանդ
բանը և ամէն զուրցածներդ: Անանկ բան
չընես որ քեզ անարգանք և արտմութի բե-
րէ: Մի խուովիր աշխարքիս պատահմունք-
ներուն վրայ: Ուրիշին չար խորհուրդ չէ-
տաս, և անօրէն մարդկանց չար վարքին չի-
հեռևիս:

Աս իրատներս անանկ դպան Եննոսին,
որ նեաի (օգի) ալէս սիրտը խոցեցին. մինչև
խղճմտանքին խայթելովը, և Եղուբոսին

(1) Եղուբոսին աս խրատն ասելի յարմար հո-
գայ մեր ըէպուին սպուգաբանութիւնը. իբր պի նա-
խանյ բառն ասանկ ըսպուգաբանի նախ անձին
ըսած. վասն պի սիրտը մաշելով նախ իրեն ըսա-
հոպայ:

աւելի խրատներըը մոմբատալով շատ չանցաւ մեռաւ :

ԳԼ. ԻԵ.

Եպեվբոս ինչե պէտգ արծուոյ :

Եպովբոս կանչեց բոլոր հաւորանեբն ու պատուիրեց որ ջրա հատ արծիւի ձագ բերե նեն իրեն բերեն : Առաւ զանոնք զարմանալի կերպով անանկ կրճեց, որ մարդու հատակը չի գար (1) : Ւման չի կը պատմեն Թէ Թռչուններուն տրվեցուց որ երբ ալիսի Թռչէին՝ վիզերէն կախեց չուանով մէյմէկ զամբիւղ (պէմպիւ) , մէջը դրաւ պղտի տղաք. անանկ տրվեցուցեր էր ձագերուն որ տղաքը ուր ուզեն, հոն երթան. վեր վար կը Թռչէին տղոցը ուզածին պէս : Երբոր ձմեռն անցաւ, գարնան աւետը Եպովբոս ամէն հարկաւոր պատրաստութիւնը տեսաւ Ճամբայ ելաւ. արծիւներն ալ տղաքներով հետն առաւ Եգիպտոս գնաց : Անանկ զարմանալի բաներ ըրաւ եգիպտացւոց առջին, որ տեսնողին խելքը կերթար :

(1) Բլանոպ կը փարախոսի աս պատմութեանս վրայ, վասն զի դժուար բան է. բայց հինայ Եւրոպա կենդանիներուն անանկ կրնուրնի հոպան որ մարդ կը զարմանայ, ինչպէս հաւպալիի չի գար, ընդպէս աս պատմութիւնս ալ շատ դժուար բան է :

Բայց Նէքդենաբոս Թագաւորն երբոր լսեց Եզովբոսին գալը մէկ բարեկամէն, ըսաց թէ զիս կը խաբես. ես լսեր եմ թէ շատոնց մեռած է: Միւս օրը պատուիրեց իր պալատի մեծամեծներուն որ ամէնքն ալ ձերմակ հագնին. ինքը կարմիրներ հագաւ, գլուխն ալ գրաւ թագ մը անգին քարերով զարդարած, և այսպէս մեծութեամբ փառքով նստած իր աթոռը՝ հրամեց որ Եզովբոսը բերեն. որ ներս մտած ին պէս՝ յանկարծ հարցուց Թագաւորը թէ զիս ինչ բանի կրնաս նմանցընել, և քովիններս ինչ բանի: Պատասխանեց Եզովբոս. քեզ կը նմանցընեմ գարնան արևուս, և քովի էշխաններդ հասած ցորեկի: Թագաւորը զուարճանալով ասոնց պատասխանիս վրայ մեծամեծ պարգևներ տուաւ Եզովբոսին:

Միւսօր Թագաւորը հարցուց ձերմակ լաթեր, և իշխաններուն ալ պատուիրեց որ կարմիր հագնին. բերել տուաւ Եզովբոսն ու մէկէն հարցուց: Ան ալ պատասխան տուաւ թէ դուն կը նմանիս արեգական, և իշխաններդ՝ ճառագայթին: Յետոյ ըսաց Նէքդենաբոս թէ իմ աչքուս առջև Լիգերոս Թագաւորը բան մը չեմ սեպեր: Եզովբոս խնամալով պատասխանեց. ով մեծ Թագաւոր, սանկ դիւրին դատաստան մի կորնչեր Լիգերոսին վրայ. եթէ դուն քեզ քու ժողովրդեանդ հետ բաղդատես՝ կրնաս արև ըսուիլ. բայց թէ որ Լիգերոս Թագաւորին հետ բաղդատես՝ քու լոյդ անոր առջին խաւար կըլլայ:

Նէքդենաբոս զարմանալով սոր հաւար-

ձակ պատասխանին վրայ, հարցուց Թէ բնակիչը մեզի Հարստահարողներն որ ուզէին աշտարակ շինելու համար: Պատրաստ էն բան Եղովբոս. միայն պէտք է տեղը ցոյց տան որ սկսինք շինել: Ան տեղը Թագաւորը քաղքէն դուրս եկաւ տարաւ մէկ մեծ դաշտի մը մէջ՝ ցոյց տալն որ պատրաստեր էր աշտարակին համար:

Եղովբոս հոն տարաւ արծիւները, և ջրաղացքը դրաւ զամբիւղներուն մէջ գործիքներն ալ միասին, Թուց Թռչուններըն. երբոր ան տղաքը վեր բարձրացան, սկսան միաբերան պոռալ Թէ բերէք մեզի քար ու կիր և փայտ որ շինենք աշտարակը:

Նէքդենաբոս երբ տեսաւ որ տղաքներն օդին մէջ կը պոռան, արծիւներն անոնց հնազանդ՝ ուր ուզեն տղաքը հան կերթան, հարցուց Եղովբոսին Թէ ո՞ր աշխարհքէն ան Թևաւոր տղաքը բերին: Պատասխանեց Եղովբոս. Նիսերոս շատ ունի ասանկ տղաք. հապա դուն գիտես ինչպէս բաղդատեցիր անոր որ ձմեռուն հաւասար մարդ է:

ՅաղԹուեցայ ըսաւ Նէքդենաբոս, ուսանելիքան չունիմ ընելու, բայց եԹէ մէկ քանի տարի զբօսնեմ, նայինք կրնամ շատով քակել: Ես մէկ զարմանալի էդ ձի մը ունիմ, որ երբ կը լսէ Բաբելոնին արու ձիերուն ձայնը, հոս կըսկսի շատով յղանալ. Թէ որ ան կարկէ դուրս դիպուածին պատճառը կարենամ տալ, խնամուելիդ մեզի կը յայտնես: Ով մեծ Թագաւոր, ըսաց Եղովբոս, մինչև վաղն ինծի ժամանակ տուր, պատասխան կուտամ հարցմունքիդ: Երբոր տեղը

դարձաւ Եզովբոս, բանեց մէկ կաւոս մը տուաւ ծառաներուն որ բոլոր քաղքին մէջ ձեծելով կը պտըտցընէին: Բայց եգիպտացիք որովհետեւ սահմանի կենդանիները կը պաշտէին (1), տեսան որ կաւոսն կը ծեծեն՝ վրանին Թափեցան բազմութիւ քաշեցին առին կաւոսն ձեռքերնուն որ չծեծեն, և դացին Թագաւորին յայտնեցին սա տոկալի մեղքը: Թագաւորը կանչեց Եզովբոսն ըսաց Թէ չէ յաչքիս որ մենք աստուծոյ պէս կը պատուենք կաւոսն. ինչո՞ւ համար սա բանս ըրիր: Պատասխանեց Եզովբոս Թէ եա անոր համար ըրի, վասն զի անիրաւութիւն ըրաւ Ղիպերոս Թագաւորին ու սա գիշեր խղդեց անոր աքաղաղը, որուն ձայնովը գիշերուան ժամանակը յայտնի կըլլար. և խիստ արթուն կարիճ աքաղաղ էր: Կրկնեց Թագաւորը. ինչ կըսէս Եզովբոս. չէս ամչնար չինած ատերդ, ինչպէս կրնայ ըլլալ որ կաւոսն մէկ գիշերուան մէջ Եգիպտոսէն Բաբելոն երթայ:

Եզովբոս ծիծաղելով ըսաց. եթէ քու ձիերդ Բաբելոնին ձիերուն ձայնը առնելով կը յղանան, սա բանս ինչո՞ւ ըլլայ անհնարին: Թագաւորը բանը հասկընալով շատ գարմացաւ Եզովբոսին գիւտին և խելքին վրայ:

(1) Ամէն լուծոպանի կենդանիները հաւատացուցեր էին ձեզ պապե- ունէին Եգիպտոսի մէջ, մանաւանդ կովը, ոչխարը, կապուտն, և այլն. անոր համար եգիպտացիք ծիմռանք կոտրէին, և սոնց դիմը չէին կրնար ուտել:

ԳԼ. ԻԶ.

Իմաստութիւն Եզովբոսի:

Քիչ մը ժամանակէն եւս Թագաւորը բե-
րել տուաւ Արեգ (1) քաղաքէն շատ իմաս-
տուններ, և վիճաբանել գիտուններ, որ
Եզովբոսին հետ հակաճառութի ընեն. ուստի
ամէնքը միասեղ Եզովբոսն ալ հետերնին
կերակրի հրամցուց: Երբոր սեղան նստան,
ան գիտուններուն մէկը դարձաւ Եզովբո-
սին ըսաց. ով օտարական՝ ձեն որ ես կը պաշ-
տեմ, գիս խրկեց որ մէկ հնդիկը մը գտնեմ որ
քակեա: Պատասխանեց Եզովբոս Թէ դուն
դէշ կը խօսիս. վասն զի ձեզ ամէն բան գիտէ
և երբէք ծածուկ բան չկայ. ուստի մարդէ
բան առնելու կարօտ չէ, զքեզ ինչո՞ւ պի-
տի խրկէ. ան խօսքով չէ Թէ միայն դուն
քեզ կանարգես, այլև ձեզ ալ յիմար կը-
նէս:

Մէկ ուրիշն ալ ըսաց Թէ մէկ մեծ տաճար
մը կար, մէջը մէկ պուն մը տատուերկու քա-

(1) Արեգ քաղաք՝ այսինքն արեգական քաղա-
քը յունարէն կըսուի Հելիուպօլիս. հին ատեն
արեգական պաշտօնը հոն կըլլար, անոր համար ա-
նանկ կոչուեցաւ: Ա՛ս քաղաքը նեղոս գետին ո-
Արաբիային մէջն է, որուն բնակիչները բոլոր գոր-
ծերն ու գիտուններն էին. որ Իսրայէլացւոց ընծեղն
Փարաւոնին հրամանովը:

ալքով. ամէն մէկն ելաւն գերան (փէչէկ) ուներ, և երկու կնիկ կը պաշտէին ջրոս գին: Պատահանեց Եզովբոս թէ ա՛ս ինչ գեղեցիկ լանգիր է, որ մեր տղաքն ալ գիտեն մեկնել: Ա՛ս տաճարն աշխարհքս է, սիւնը տարի է, քարաքներն ամիսներն են, գերաններն ամառն օրերն են, երկու կնիկներն ալ որ սիւնին ջրոս գին կը պաշտէին, գիշեր ցորեկն է որ փոփոխ կը գաւնան:

Միւս օրը Նէքդէնաբոս պատուիրեց որ իրեն իշխաններըը հոն գան. ես շատ կը վախնամ կըսէր, չըլլայ թէ պարտաւորինք տուրք տալու Ալիպերոսին Եզովբոսին պատճառաւը: Խորհուրդ ըրին, մէկը իշխաններէն ըսաց թէ պէտք է մենք ալ պարտաւորենք Եզովբոսն որ մեզի անանկ լանգիր մը առաջարկէ որ ոչ պատճառ ունենայ և ոչ ցուցմունք, մինչև մոքերնէս անցած չըլլայ ուրիշ ալ չըլլանք (1): Եզովբոս խօսք տուաւ որ վաղը հարցմունք կընեմ: Ելաւ տունն գնաց մէկ թուղթ մը չինեց, որուն մէջ գրած էր որ Նէքդենաբոս խօսք կուտայ թէ հազար տալանդ Ալիպերոսի տալիք եմ (2): Հետև-

(1) Ուրիշէրն կարգն էիաւ որ Եզովբոս ալէրընոյ խնդիրը հարցընէ, և գիրքին որ անոր խնդիրը էիկնան պիտի հասկընալ, անանկ խնդիրը մը ուզէր որ էիկնայ հասկըցուէր, և ուրիշ բաներնին չըլլայ: Ասով ինչ խնդիրը որ ըլլար, պիտի ըսէին ըն մինչ ապ բանը լսած էնք և գիրքնէ, անպատճառ բան չէ. ահա ատ ճամբով պիտի յաղթէին Եզովբոսին:

(2) Եզովբոս ալ անոնց դիտքը հասկընալով անանկ

եաւ օրը բերաւ Թուղթը Թագաւորին. իշխանները և խորհրդականներն ուրիշ բան կարծելով Թուղթը չբացած միաբերան կանչեցին Թէ մենք գիտենք, և շատոնց հասկցած ենք, աս բանը մեզի նոր չէ: Որով հետև գիտենք կըսէք, ըսաց Եղովբոս, ես ալ ձեզի մեծապէս շնորհակալ կըլլամ և խնամարհութեամբ զիս պարտական կը համարիմ ձեզի:

Բայց Նէքդենաբոս երբոր կարդաց Թուղթը, շատ նեղացաւ սիրտը պարտքին համար որ գրած էր. մինչև չհամբերելով կանչեց Թէ ես Կիպերոսին պարտք մը չունիմ. վըկայեցէք ամէնքնիդ ես անոր պարտականն եմ: Ան առնը փոխեցին երեսից միւքն ուրիշ բան մենք առանկ բան ոչ լսած ենք և ոչ գիտենք: Կրկնեց Եղովբոս Թէ ահա աս էր իմ խնդիրս, որ մեկնեցիք:

Խնդիր մը կրաս որ հարկաւ պիտի պարպաւորին. Քանի պէ երկիր ըսեն իրաւ է, ու չիգնեն, պիտի պարպաւորին. երկ վկայութիւ առաք հանեն Թուղթը, դարձեալ կը պարպաւորին, որովհետև իրենց բերնից վը վկայեցին ըն աս բանը չէնք լսած: Ան կերպ յետնարկութիւնը *երկայնպրաբանութիւն* կըսուի. ինչպէս հին ապենը Տանուկ մը ճարպասանի մը փոխ աշխարհ Տպաս, ու շատ բան խոստացաւ ըն որ անանկ տուվի, Տինչև կարենայ յաղթել առջի պատերազմին մէջն որ խօսի: Անկէն բան տուվէլէն ետև լուզեց վարձքին բան մը պալ. ու ան դին գարձաւ նէ վասրկեցաւ. վե պէ երկիր յաղթէր վարձքին՝ կը վասրկէր. երկիր յաղթուէր, նոյնպէս գաղիոփին ուզովը կը վասրկէր: Ասոր նման է Եղովբոսին առարկութիւն ալ:

Ներքեւնալոս անանկ զարմացաւ Եղովբոամին ատ ըլած բանին վրայ որ չկրնացաւ, կանչեց թէ պէտք է խոտովանինք որ երկնիկ է Աիպերոս որ այսպիսի իմաստուն մարդ ունի իր տէրութեանը մէջ, որ է նէ՛ր անհատնում աղբիւր մը գիտութեան: Ան խօսքէս ետև հանեց ատաւ հազար տալանդը Եղովբոամին որ դաշինք ըրեր էին, և մեծ բարեկամական սիրով Բաբելոն խրկեց: Եղովբոամ Բաբելոն հասաւ պատմեց Աիպերոս թագաւորին ամէն բանն որ ըրաւ Եգիպտոս, և ատաւ ոսկիներն որ Ներքեւնալոսէն առեր էր: Աիպերոս ատ ըրած երախտեացը համար մէկ ոսկիէ արձան մը կանգնել տուաւ Ի պատիւ Եղովբոամին (1):

(1) Հին ապեղը շատ մեծ պապէ՛ր էր երէ մեկին անուանը արձան մը կանգնէին. իսկ ոսկիէ արձան կանգնելը շատ գերագանց պապէ՛ր էր: Մինչդէպ ջրապէսն աշխատութեան փերուզին ապագէց, բայց ոսկիէ արձան չիտրին ատով կիմացուի Եղովբոամին մեծ համարուհին որ ունէր Բաբելոն:

ԳԼ. ԻԵ.

Եղովբոս գնայ ի Յոյնս և ի Դելոս:

Եղովբոս Բաբելոն գառնալէն ետև շատ չանցաւ մտքը դրաւ որ յունաստան երթայ ժուռ գայ Թագաւորին հրամանովը. բայց մինչև որ երգում չըրաւ նորէն ետ գառնալու՝ Թագաւորը հրաման չիտուաւ. ուստի խոսք տուաւ Եղովբոս Թէ կը գառնամ, մինչև ի մահ Բաբելոն կը մնամ: Գնաց շատ երևելի քաղաքներ յունաստանին մէջ քաղեց, և ամէն տեղ լուեն իմաստուն փորձերուն ըրաւ. յետոյ ուզեց երթալ Դելոս կըլլին (1): Ա քաղաքացիք երբ անոր իմաստասիրութիւնը կը լսէին, ուրախ կըլլային. սակայն երբեմն անշնորհք ըլլալովը մէկ յայտնութիւն մը չըրին Եղովբոսին:

Իսկ Եղովբոս նայելով անոնց տմարդութիւնը զուրցեց. ով դելոսացիք, ես ձեզ վրայ կը տարի մը կը նամանցընեմ որ ծուռն վրայ կերթայ կուգայ. որոնք որ հետևէն կը տեսնեն, կարծեն Թէ երևելի մեծ բան է. բայց

(1) Դելոս կամ Դելոս կղզին հին ժամանակը շատ երևելի տեղ էր. որ Ապողոն լատուածին ծնած տեղն ըլլալով՝ հոտոռանը հոն շինած էր շատ քահանայ, ամէն աշխարհէ հոն կերթար:

երբեմն ցանկանին կուռքդ կը մօտենայ, կը հանկերցուի ինչ ըլլալը: Ես երբեմն ձեր քաղաքին հետաւ էի, շատ կը զարմանայի ձեր վրան, մինչև իմ համարմանս արժանի գրեր էի գձեզ. բայց երբեմն հոս եկայ, շուտով հանկերցայ Թէ սխալ է եղեր իմ կարծիքս. ուստի ես ալ միտքս փոխեցի, և հիմա ձեզ կը սեպնեմ ամենէն անպիտան մարդիկ:

Դեղատացիք առ խօսքերս լսելով վախցան որ չըլլայ Թէ ամէն գացած քաղաքները պատմէ, ուզեցին զրպարտելով մեղադրել: Ա՛ս բանն տպահով գլուխ տանելու համար Ապողոնին (1) երևելի տաճարին գողցան մէկ ոսկիէ տուան մը և գերին գաղտուկ պահեցին Եզովբոսին բանեցուն մէջ. իսկ Եզովբոս ամենևին բան մը չկրնալով միտքու եկաւ Դելոս կղզին Փօքիդա երթալու: Մէկէն դեղատացիք վրան Թափեցան արդիլեցին, ամբաստանութիւն ընելով Թէ դուն սրբապղծութեն ըրիր: Եզովբոս զինքն արդարացընելով համարձակ, կըսէր Թէ այդպիսի բան չէմ ըրած: Անոնք ալ բանտութէ փլեան ուզեցին բանեցուն մէջ դտան ոսկիէ տուանը, որ իրենք գրեր էին հոն: Ամէն տմանը ձեռքերնին, մեծ աղաղակով տարին բոլոր ժողովրդեան ցցուցին: Եզովբոս հանկերցաւ

(1) Ապողոն Դիոսին որդին էր, լատինաց երաժշտութեան և բանաստեղծութեան. որ այնչափ յարգելի էր հեթանոսաց, ինչև ամէնէն աւոր փառքը հերքային, որ խիստ ֆառաւոր շինած էր Դեղոս կղզին. փաղփոյխ աս փառքով հը պարծէին, և իրենք անպիտան մարդիկ էին:

անոնց անօրէնութիւնը և յայտնելով նրանց անմեղութիւնն աղաչեց որ Թոլ տան նրանց ետ Թող: Իսկ անօրէն ժողովուրդը բանտը դընել տուաւ զինքը, և դատաւորները վճռեցին որ դատապարտութիւն մեռնի Եղովբոս նոր օրինադանց: Եղովբոս տեսաւ որ տեղէ մը ձար չկայ, անանկ վտանգի մէջ ընկեր էր որ ազատում չունէր ան Թշուառութենէն, սկսաւ իր անբաղդութիւնը լալ բանտին մէջ:

Դամաս անունով մէկ բարեկամը բանտը գնաց. տեսնելով Եղովբոսին խեղճութիւնը սիրտը ցաւեցաւ, և հարցուց Թէ ինչո՞ւ համար կը վշտանաս կուլաս: Պատասխան տուաւ Եղովբոս Թէ մէկ կին մը նոր Թաղեր էր երկիրը, գնաց գերեզմանին վրայ բոլոր օրը լաց կընէր. հոն մօտ տեղը երկրագործ մը կաշխատէր, որ տեսնելով աստր լացը Թողուց եղնեքն ու եկաւ ինքն ալ գերեզմանին քով կուլար: Կինը հարցուց Թէ ինչո՞ւ համար կուլաս. ան ալ ըսաց Թէ ես ալ իմ կինս Թաղեցի, եկայ որ լալով սիրտս պարպեմ: Ինծի ալ, ըսաց կինիկը, սա խեղճութիւնը պատահեցաւ: Կրկնեց երկրագործը. ուրեմն երբոր երկուքիս պատահածն ալ նոյն է՝ ինչո՞ւ համար մէկզմէկ չենք առներ, որ երկուքիս կսկիծն ալ անցնի. ես ինչ սէր ունէի ընկերոջս վրայ՝ քեզի կը դարձընեմ, դուն ալ անանկ ըրէ՝ կը լմննայ կերթայ: Երբոր մէկմէկու հաւանութենէ տալով առնել կը խօսէին, գոյ մը եկաւ եղները գողցաւ. երկրագործը տրտմ որ դարձաւ, տեսաւ Թէ եղները չկան. սկսաւ անանկ դառն լալ

որ չի կրնար ըլլալ: Խակ կնիկը գերեզմանը նույնն գարձաւ արտը՝ նայեցաւ որ մարդը կուլայ. ահ ըսաց՝ հիմա ալ կուլաս: Պատասխանեց մարդը թէ ահա հիմա ձշմարիտ պատճառ ունիմ լալու:

Ատոր նման է, կըսէր Եզովբոս, իմ խնդճութիւնս և վիճակս. վասն զի շատ վտանգներէ ազատեցայ եւս եկայ հոս ընկայ. հիմա ձար մը չեմ կրնար գտնել որ մեռնեցայս ազատիմ, որով դատապարտեցին զիս. ահա այս է պատճառն որ կուլամ:

ԳԼ. ԻԸ.

ՄԱՀ ԵԶՎԲՈՍԻ:

Գերատացիք բազմութիւն եկան բանտը մտան բանտարեամբ քաշեցին դուրս հանեցին Եզովբոսն որ տանին մէկ բարձր ապառաժ լեռան մը վրայ հանեն, և անկէ վար նետեն: Եզովբոս սկսաւ առակներ զուրցել այսպէս: Երբոր կենդանիները իրարու հետ կը խօսէին, մուկը գորտին հետ բարեկամ եղաւ. ալիքէ որ երթայ հետը կերակուր ուտէ. ուսոի առաւ տարաւ մեծատան մը տուն, ուր լեցուն բարիք ըլլալով համբարանոցը (ԽՆԴԸ), կըսէր թէ ով բարեկամ գորտ՝ հրամէ: Գորտը լաւ մը կշտանալէն ետև հրամցուց մուկն որ անոր հարկիքն երթայ. բայց ճամբան չնհոգնելու համար ուղեց որ տոքը թելով մը անոր տոքին կա-

ալէ. որպէս զի գորտին հետ լողալով անցնի ջրէն երթայ հոն: Ասանկ կասկէնէն եաև, գորտը ցաթկէց ջրին մէջ սկսաւ լողալ. իսկ մուկը ջրին մէջ խղդուեցաւ. որ մեռնելու առենը կըսէր գորտին Թէ դուն եղար իմ մահուանս պատճառը, բայց դուն ալ օր մը պիտի գանես քեզմէ մեծէն: Ա խօսքս շատ չանցաւ կատարուեցաւ. վն զի մէկ արծիւ մը տեսաւ որ ջրին երեսը սատկած մուկ մը կայ, վրան ինջաւ խլեց. բայց գորտն ալ ա՝նոր հետ կապած ըլլալով միատեղ յափըշտակեց երկուսն ալ կերաւ:

Այսպէս դուք որ զիս անկրաւուԹ կը մեղցընէք՝ ասանկ ոտքի տակ առնելով, օր կուգայ որ կը գանէք, և ձեզմէ իմ վրէժս առնող մը կըլլայ. Բաբելոն և բոլոր յու՝նաստան իմ արիւնիս վրէժը ձեզմէ պիտի հանեն: Այշափ խօսքերն ամենևին անոնց սիրտը չխշարժեց որ ուղղուին երԹեն:

Տեսաւ որ ան չար չկրկչեց, վախաւ Ապողոնին (1) տաճարը. բայց քանուԹէն անկէ ալ հանեցին, և կատաղուԹեամբ կը տանէին

(1) Ամէն ազգի ե հրօռէի մէջ փառաբին պատրաստուելու համար, հոն ֆախըրը կպատրէր հին ապեռնէն՝ ի վեր. ինչպէս սպարտացի հայրենեաց մատնելը փառաբէն չինըցան հանել, դուռը ջեցուցին: Ապագայ ազգն որ ծառ կը պաշպէ, ան ծառին պակը ֆախըրդ գերբին ազատ կը սեպէ: Բայց դեղացոյի որովհետև Ընդվզողը արքապիղծ համարբեցան որ փառաբին անիրաւութիւն ըրաւ կըսէին, անոր համար բանուելեամբ հրցան դուրս հանել:

բարձր լեռան ծայրը: Երթալու առեն կը-սէր Եզովբոս. մոխք ըրէք ինծի, ով ժողովուրդ Դելոսի: Մէկ նապաստակ մը արծիւէն վախչելով չկրցաւ թէ ուր պահուի որ թշնամւոյն ձեռքը չիյնի. դնաց բզէզին ծակը մտաւ, աղաչեց որ իրեն տեղ տայ. բզէզն ալ աղաչեց արծիւին որ նախ խեղճ նապաստակին՝ չխմեացընէ. երդուամ ըրաւ Դիոսին անուանը վրայ որ իր վտքը մարմնին չինայէ, աղաչանքն ընդունի: Ինչ արծիւն անոր իսօքը բանի մը տեղ չհասկրնալով, թևովը զարկաւ բզէզին ու յափշտակեց նապաստակը կերաւ:

Բզէզը բարկանալով անոր անարգանացը վրայ՝ թռաւ հասկն գնաց գտաւ արծիւին բունը, մտաւ մէջն ու ծակ մը բացաւ, ուր արծիւին հաւկիթները վար թափեց կոտրտեց: Արծիւը տագնապով ան յանդերգնուհիը վրայ՝ ուզեց աւելի բարձր տեղ մը չինել իր բունը: Բզէզը հոն ալ եկաւ, և առջինին պէս ջնաս տուաւ: Արծիւը չկրցաւ թէ ինչ ընէ որ ան անծանօթ թշնամւոյն ձեռքէն ազատի, դնաց Դիոսին (1), որովհետև ան թագուհին անոր նուիրած ըլլալով կրնէն պաշտպանուելը տակն է. ուստի դրաւ Դիոսին գոգը իր հաւկիթները, և անոր յանձնելով աղաչեց որ հոգ տանի:

(1) Որովհետև Դիոս էր չաճնէրուս Թագաւորը, և արծիւն է Թռչուններուն Թագաւորը, ասոր հեԹանոսները կըսէին Ըե արծիւը Դիոսին նուիրած է. անոր համար Դիոսին արձանին գլուխը արծիւ մը կը դնէին:

Բայց բզեզն աղբ առաւ կլորակներ չինեց, ու Թռաւ երկինքը տարաւ Դիտոսին գողը ձգեց: Դիտս երբոր հոտն առաւ նեղանալով վեր ելաւ որ վար ձգէ. բայց Թոթռուելովը հաւկիթներն ալ վար Թափեցան կոտոր կոտոր եղան:

Իսկ Դիտս հասկըցաւ բզեզին Թէ առ բանս արծիւէն վրէժ առնելու համար կընէր. որ ոչ միայն բզեզին ըրաւ անկրաւուԹիւն, այլ և Դիտսին, որ երդումը չընդունեցաւ երբոր բզեզն ըրաւ Դիտսին անուանը վայ:

Արծիւն որ գարձաւ եկաւ, Դիտս անարգելով զայն երեսը զարկաւ Թէ ահա բզեզը վրէժխնդիր ըլլալով քեզ կը տրամեցընէ. և իրաւունք ունի քեզի այսպէս վրէժխնդիր ըլլալու: Սակայն Դիտս չիկամեցաւ որ արծիւին ցեղը կորսուի. համոզեց իսկ հասկըցուց բզեզին որ հեռը հաշտուի: Բզեզը չուզեց ամենևին հաշտուիլ: Ուստի Դիտս խելք բանեցընելով փոխեց ժամանակը. որ երբ բզեզը չէ ելած դուրս, ան առեղը հաւկիթ կածէ արծիւը:

Ով ժողովուրդ Դելոսի, մի անարգէք տաճարը, ուր ես ապաւինեցայ. Թէպէտ և անոր մեծուԹիը նայելով ես ոչինչ եմ, բայց գիտնաք ՁեմարտուԹիը որ հարկաւ կը պատժէ չարագործներուն անօրէնուԹիը: Դեղոսացիք երբոր կատարուԹէն ամենևին ետ չկեցան, այլ միշտ առաջ կը տանէին ընդհատը մեռցընելու աեղն որ պատրաստեր էին:

Եղովբոս սեւաւ Թէ ինչ բան որ խօսեցաւ

ամենևին անոնց անկաճը չնմանաւ, և կարող չեղաւ մոքերնին փոխելու, սկսաւ այսպէս խօսիլ: Մարիկ ըրէք ով անօրէն խաւտանկրտ ժողովուրդ. մէկ երկրագործ գեղացի մը գեղը ծերացեր էր, և ամենևին քաղաքն ոտք չէր կոխած. ալաչեց մարդիկներուն որ զինքը քաղաք տանին տեսնելու համար: Անոնք ալ էշերը սայլին կապեցին, և ծերը վրան դրին, թող տուին որ քաղաք երթայ վինակ: Քիչ մը անցաւ՝ մէկ սատակ փոթորիկ մը եկաւ, որ անանկ օդը մթընցուց հովով անձրևով, մինչև էշերը ճամբան կորսընցուցին մոլորեցան չկրցան թէ ուր կերթան. խեղճ ծերը տարին լեռան ծայրը հանեցին, որ վար ալիտէ ձգէին. ոլորմելին զինքն ան մեծ վտանգին մէջ տեսնելով, վայ ափսոս ինծի, կը կանչէր Աստուծոյ. արդեօք քու մեծութեդ դէմ ինչ ըրած ունէի որ ինծ ասանկ ոլորմելի մահուամբ կը մեռցընես. զօրաւոր ձիերէ և կարճ ջորիներէ չեմ մեռնիր, հապա անարդ էշերէն ահա կը կորսըւիմ, որ ամէն կենդանիներէն ցած են:

Ահա իմ վիճակս ալ աս խեղճ ծերուն նման է. որ շատ կը ցաւիմ իմ անբաղդութես վրայ. վա՛յ զի չէ թէ խմաստուն և երևելի մարդկանցմէ դատապարտուեցայ մեռնելու, այլ անպիտան անարժան չարագործներէն: Երբոր վար ալիտէ նետէին զինքը լեռանը վրայէն, աս եղբ առակս ըսաց: Մէկ մարդ մը ուզեց անկրաւութիւն ընել իր գաւկին. իսկ գաւակը լալով կը կանչէր թէ շատ աւելի կուզէի աս անկրաւութիւնը քաշել ուրիշ մարդիկներէն քան թէ քեզմէ, որ իմ

ծնոլս եա : Ահա եա ալ նոյն բանը կրաւմ ձեզի, ով անօրէններ. շատ աւելի կուզէի իմնիլ խորհուրդը Սկիւլայի (1) կամ Գարիպտիսի, և կամ Ափրիկէին ափառաժը, քան թէ ձեր անօրէն ձեռքովը մեռնիլ : Անիծած ըլլայ ձեր հայրենիքը. վիայ կը կանչեմ ասոնք ծներ որ իմ մահուանս համար վէճ մինդիր ըլլան ձեզի եւ պատուհասեն, որ զիս ասանկ անպարտ կը մեղցնէք :

Խակ դեղասացիք ասանց ուշացընելու ապառաժին ծայրէն վար նետեցին. խելք ե-ղավ ասոնց մեռաւ : Քիչ ատենէն եաև բոլոր քաղաքն անպատ գարձաւ ժանտամահէն. մինչև գացին հարցուցին պատճառը պատգամախօսին (2), որ պատասխան տուաւ թէ ա ապառաժս իրենց անօրէնութեանը համար եղաւ, որ ըրին Եղովբոսին. և ալեաք է ա յանցանքը չնչել, պառաժէն ալ ազատիլ,

(1) Բանասպեղծներըը կըսէին ըէ Սկիլլա էր ըէծ գազան մը Սիկիլիոյ ծովուն ըէր, որ աջ յաւերժահարս էր. երբոր մդա ապտանը լաւ-ցուելու՝ ըարը ըէղաձ ըլլալով, ճոխուելցա գազան եղա, որ իր այլանդակ կերպարանքէն ապրուելով՝ բարձր լեռանը ապրէն գինքը ծովը նետէց. ահա ա է Սկիլլայի խորհուրդը : Այսպէս է Գարիպտիսին խորհուրդը, կամ Ափրիկէին ապառաժը :

(2) Ա պագանախօսն էր Ապողոնին փոր-մը կամ էրմուհին. երբոր գացին կուռքին հարցուցին ժանպատահին պատճառը, փորմը կուռքին բերնէն պատասխան տուաւ, ինչպէս ովորութիւն էր կռապաշտներուն :

որ անոր մահուանը համար կը քաշէին : Ի-
րենց խղճմտանքն ալ տեսեց զիրենք որ
մէկ արձան մը կանգնեցին Եղուկեսին հա-
մար :

Երբոր յունաստանի երեւելի մարդիկ և
մեծամեծ փիլիսոփաները լսեցին աս անօրէ-
նութիւնն որ եղաւ Եղուկեսին՝ շուտ մը դէ-
պ կզին եկան, քննեցին գաան Եղուկես
մեղքնոտները, և բոլորը չարաչար պատու-
հասեցին :



ա. Աքաղաղ և Մարգարիտ: բ. Գայլ և գառն:



գ. Գորտն և Մուկն: դ. Շուն և Մսուկը:



ե. Գայլ և կռունկն: զ. Երեսաստիճ և Օձ:

ԱՌԱԿՓ

ԵԶՈՎԲՈՍԻ

ԱՓՈՂԱՂ ԵՒ ՄԱՐԳԱՐԻՏ

Զանալուգ վաստակ այլ անխմաստ
Յարգոյ գլնէ քան զակերտ խմաստ :

Ով որ բանի արժէք չէյպէ ,
Գէշն ու լաւը ղէկ կը տեսնէ :

ա . Աքաղաղ մը աղբանոցը փորելով՝ յանկարծ կը գտնէ մարգարիտ մը , ղէկդի կը նեաէ ըսելով . Թէ որ մարգարտածաման աս բաղդիս հանդիպէր՝ փառք կուտար այ . բայց իմ առջևս անանուխ ոչինչ է որ աւելի ելլջանիկ կըլլայի եթէ հատ մը գարի գտնէի քան Թէ աս մարգարիտը :

Աքաղաղ կըսուի (խօլօզը) , որ աղբանոցին ղէջ ծուռ գալով դէյ ուսկըլուս բան կը քնաբըռէ . և էրէ գարի մը գտնէ՝ ամէն բանէն աւելի անով կը

պատարճանայ. որ օրինակ է սամիկ մարդիանց, որուն առջև գիպուռիւնը չարգ լուռի, և գիպուռն մարդն ու անխելք մարդը մեկ է. եւ անխելքն ալ մը փնանէն, հապար ինսուպուռի հետ չէն ֆոխեր:

Ահա անխնամատ բերմունք անբանի,
Զ՝այկինեթ՝ի գարուց որոշել չուանի.
Դու մարդ բանական, ընտրեա ըզբարի,
Զաւաքինութիւն նըման մարդպարտի:
Բարին չանարգէ այնչափ տարբերի,
Ոըչափ բանականն յոգւոյ անբանի.
Մարդոյ է ընտրել զնմանատ գանձ բանին,
Իսկ աքատաղին զնուր անարգ գարին:

ԳԱՅԼ ԵՒ ԳԱՌՆ

Յանգութեք դաժան սիրտ գազանին
Ոչինչ ազդէ ձայն անմեղին:

Անէրտա մարդն երբ լար կընէ,
Սուտ մուտ պապճատ ըսպ կըգրնէ:

Ե. Գայլն ու գառը վազած ջուէ մը ջուր կը խմէին. բայց գայլը շատ վերն էր քան զգառը, և պատճառ կը փնտռտէր որ կերտուի մը յափշտակէ զգառը. ուստի սեպհականին սկսա մեղադրել թէ ինչ՞ համար իմ ջուրս պղտորեցուցեր: Պատասխան առաւ գառը դողա-

լոլ. եա ինչպէս քու ջուրդ կրնամ պղտո-
րել՝ որ իմաճ տեղէդ շատ վարէն կը խմեմ.
հաւատացիր, մոքէս ալ չէ անցած որ քեզի
ամենևին մենաս մը տամ: Կրկնեց գայլը թէ
երէկ քու հայրդ տեսայ որ իր ձայնովը կը
յորդորէր շներն որ զիս հալածեն:

Գառն ալ ըսաց թէ ամիսէն աւելի է որ
զիմ հայրս մոլթեց մսաճախը: Ուրեմն ան
քու մայրդ էր, ըսաւ գազանը: Պատասխա-
նեց թէ իմ հայրս զիս ծնած աւէնը մե-
ռաւ: Գայլն ակռաները կրձըտեցով ըսաց.
մեռաւ չխմեռաւ ես պիտեմ դուն և քու
ազգդ ինչպէս կատէք զիս, պէտք է որ ես
ալ վրէժխնդիր ըլլամ: Ա՛ս ըսելով ցաթ-
կեց գառին վրայ, ու պատռեց կերաւ:

Գայլը վայրենի գազան ըլլալով լրագրիչ հայ-
րու պէս հիւր ընդունելեան և հալածանաց ղէչ է,
և անիրաւութեամբ կը ջանայ յոխտպահել անդղ
գառները. ոսոխի օրինակ է ղրկող ղեձապանց, ո-
րոնք ուսա պատճառներով կոխեն ղրկել անդղ-
ները:

Բարք է այս անգութ պատառոդ գայլի,
Պատառել զանմեղն՝ չըլսել ձայնի:
Հզօր չարագործք զարդարն և խոնարհ,
Խոշտանգեալ ճնշեն նման գազանի:
Սակայն հատուցումն՝ ի դատաստանի,
Արդարոց չարաց կշռի և պահի.
Մարդ քաղաքական, մի վերլի ամեհին
Խածատեր զընկերն առեր զբարին:

ԳՈՐՏ ԵՒ ՄՈՒԿՆ

Ըզվէժ քինու կառւսակրաց
Նուածցէն արագ ձեռք Թշնամեաց։

Կոխ- սէրտդ կոռւոռվ հնըրնայ,
Ինչ որ ընէ պայն կը գպնայ։

Զինչ ջահ անգործ նստիլ՝ է տան,
Եւ պարապուկ լինել գիշեռան։

Շատ պզէկ է հոգնիլ ջանալ,
Քան ծուլութեամբ կոչտապն ելլել։

Ձծթ. Եզ մը կը ջանար քաշել զսայլը (արապան) մէկ խնամ քարուտ տեղէ մը. մէկ կով մը տեսնելով անոր ջանքը՝ կը խնամար վրան ու կըսէր. խեղճ ողորմելի, ես չեմ տարակուսիր թէ դուն օրը հարիւր անգամ կը ցանկաս իմ վիճակիս. լաւ գիտեմ որ շատ կուզես ինծի պէս սիրելի ըլլալ և առանց աշխատանքի ուտել։ Երբոր տանիկ կը խօսէր՝ մէկ գոհ ընող մարդ մը հասաւ հոն և սկսաւ տաճարին Համբան տանել զկովն որ սեղանին վրայ իր կուռքին գոհ ընէ։ Ան առեւը եզն ըսաց անոր. ով ամբարտաւան, նայինք հիմա քու վիճակդ ցանկալի կերևնայ քեզի. Ձչմարիտ է թէ ես կը բաղձամ քու վիճակիդ, բայց դուն ալ խոտուան եղիր որ հիմա շատ կը փոփոքէիր զքեզ իմ վիճակիս մէջ տեսնել։

Հելլասէը հարուստ մարդին ուրիշը վար զարնելով կը պարծենար իրենց հանգստութեան վրայ, բայց էնպէն ըլլաք հանգիստ ապրին՝ այնպէս

ըսաւ իրեն կը մօտենայ հիւանդութիւնը և մահը, անոր համար աշխատաւոր մարդին պէս կապրին և ֆաֆուհները ըսաւ կը մեռնին :

Ա յսպէս թուլամորթք ընդ հեշտասիրին
Մերժեն ըղվաստակ, 'ի խընջոյս հրճուին.
Որով մերձենան 'ի սայր մանգալին,
Խաւարին աւուրց կերակուր պահին :
Իսկ դու որ գործել ծընաւ յաշխարհին,
Առաքինանալ 'ի սէր արարչին,
Մի անգործ նաւիր ըստ հեղգասիրին,
Մի պարապտանալ 'ի գարշ հեշտալին :

ԱՂՈՒԷՍ ԵՒ ՉԵՏ ԻՒՐ

Իրարքանչիւր իւրն է ախորժն,
Զոր ինչ ունի՝ հրճուի 'ի նոյն :

Պախատուրն մեզի կը նայէ,
Զուրին էրէն նման ընէ :

Ակ. Աղուէս մը կևին թակարթին մէջ, մինչև որ պոչը չիձգեց՝ չկրցաւ անկէ ազատիլ : Ա պատճառաւ շատ յուսահատեցաւ, վասն զի առանկ անպոչ մկուն չէր կրնար երևնալ, ամէնքը վասն կը խնտային : Ա բանէն ազատելու համար տես ինչ ըրաւ : Մինքը գրաւ որ իրեն պէս ընկերները ունենայ, ժողվեց աղուէսներն ու բարեկամաբար խորհուրդ տուաւ անոնց որ պոչերնին

ձգեն. զի աւելն արգելք կուտայ, կըսէր, քան թէ զարդարանք, որովհետև աւելորդ բեռ մի է. վերջապէս ցցուց թէ աս պոչը ձամբաներն աւլելէն՝ և զատ ուրիշ բանի չի ծառայեր: Փուճ տեղն աս ցուցմունքներն ըրաւ, վասն զի բոլոր ժողովքը վրան կը խնտար: Յետոյ մէկ ծեր աղուէս մը դարձաւ իրեն ըսաց. բարեկամ, չեմ տեսեր թէ ինչ կըլլայ մէկ պոչէն անցնելով, բայց ան գիտեմ ատոնգ որ եթէ դուն ունենայիր քու պոչդ՝ չէիր ըսեր թէ անօգուտ բան է պոչը:

Օրինակ է անոնց որ իրենց պակասութիւնն ու ապիտութիւնը գոյելու համար՝ կուզեն որ ամենքն ալ իրենց պէս ըլլան, բայց ինքն անանկ ճարէն է՝ պա՞ ինչ օգուտ:

Արդ մի յանկանար զարդու օտարին,
Եթէ ոչ ունիս սեպհական յանձին.
Գիտութիւն հանճար հոգեկան մասին
Են բուն վայելչանք իմացականին:
Զինչ շահ բեռնակրի՝ գանձուց աշխարհին,
Զինչ իմաստութիւն գըրաւաճառին.
Արուաքին է այն, ոչ՝ի նա յանկին,
Զի գայ և գընայ ըստ բերման առթին:

ԱՅԳԵԳՈՐԾ ԵՒ ՈՐԴԻՔ ԻՒՐ

Անխոնջ վաստակ հոլապտղծին
Են հանք հօղոյ և գանձ անպին :

Աշխատողին բան է պակսէ,
Շատ կը դիպէ գանձ և ոսկի :

Ձկան. Այգեգործ մը առատ որ մեռնելը մօտ է, կանչէց որդիքներն ըսաց. Որդեակք, առանց ձեզի խնայելուս իմ խորհուրդս չեմ ուզեր մեռնիլ որ պատճառի մը համար մինչև հիմա ձեզմէ պահեր էի : Գիտնաք որ այգիս մէջ գանձ թաղեր եմ, չիմոռնաք երբոր ես մեռնիմ, դուք ալ եաքն պարտքերնիդ ընելէն ետև փորեցէք որ գտնէք հան : Մեռաւ բարի ծերը. որդիքը վազեցին այգին և բոլոր հողը մէկ ծայրէն մէկալ ծայրը դարձուցին տակնուվրայ ըրին. բայց փուճ աեղը հօգնեցան և փորեցին հողերը, բան մը չկտան ինչ որ ըսեր էր իրենց հայրը : Ան աաեղը մաքրունին դրին թէ ծերը խաբեց. բայց մէկէն խելք ըրին որ ձշմարիտ էր անոր ըսածը. վասն զի հոլն այնպէս շըրջելով անանկ պտղաբեր եղաւ որ շատ տարի այգին տուղրականէն եւսապատիկ աւելի բարիք կուտար :

Ոսկեղէն դար կըսուէր հին ապեռը երբոր սիրէր ու հարկաւորութիւն չկար, ամէն մարդ երկիւ-

գուշակութեամբ կապրէր. էրէոր պէպէ ըլլար՝ էրաշ-
ին կը ֆոխէին և անանկ հանգիստ կապրէին. ահա
ատ է գանձը կամ (առջինէն) որ անդէպ մարդին
հողին պահը կը ֆնպըռէն:

Ձինչ այն գանձ հողոյ թաղեալ՝ի ծոցին,
Ձինչ արծաթ ոսկի քիմիականին.
Աշխատանք և քրան ժիր հոդագործին,
Այն գանձ՝ այն ոսկւոյ ծընող էն ինքնին:
Թէ վաստակք ձեռացդ ընդ քեզ կենակցին,
Մըթերին քեզ գանձք մօր ոսկեբերին.
Եւ եթէ անգործ ձեռք քո կաշկանդին,
Անչափ գանձ մըթերք փուխով ըսպառին:

Որք ընդ արտմուտ վայր Թարթափին,
Աղտեղանան՝ի բաց մերժին:

Անվայելուչ պէղէր էրևաս,
Որ գարշելի այծ էըլլաս,

Ձկէ. Երկու շուն տուն մը կը պահէին. օր մը մէկը քոլորովին ուրախանալով ըսաց մէկալին. եղբայր, խնացայ Թէ մեր տէրը գէղին տունը պիտի կարկտէ, դուն գիտես որ առանց հարկեքի հարանիք չըլլար, ուստի Թէ որ ինծի մսիկ կընես՝ երկուքնիս մէկտեղ երթանք մեր բաժինն առնենք. ով գիտէ Թէ ինչ կերակուրներ պիտի ուտենք

հոն: Ա՛ս ըսելով սկսան երթալ մէկ գէշ ձամբայէ մը՝ անանկ որ հարկաւորութեան ալ-տուտ և դարշելի ջրերէ անցնիլ, մինչև բոլոր օխլմ (լամաս) եղան և սանկ հարանիք գացին: Իրենք զիրենք գրին պատուաւոր հարանիւորի տեղ, բայց չարաչար խաբուեցան. վասն զի երբոր երևցան հոն՝ ամմէնքը պռռացին անոնց աղտոտութեանը վրայ և հարկնիքին տեղը չնմօտեցած՝ որը փայտով որը ոտքով զարկին վռընտեցին: Ա՛ս կերպով եօթ դարձան աս երկու աղտոտ շները հոգնած քաղցած և ծեծ կերած:

Օրինակ է որ իրմանները ևս գէշ ճամբայ գացողները որ ամենուն գարշելի երևնան, մինչև տարէ երեսին չի նայիր. ա՛յ երեսին ալ ընկած են՝ տարեա՛ երեսին ալ՝ իրենց լաւ վարմունքը:

Գեղեցիկ կըրատ մանկանց անփորձին
Որ ընդ օխլմ գընան յանվայել տեղին.
Անդէն մոլորեալ՝ի նոյն շաղախին,
Ի մաքուր հոգւոց մերժին հալածին:
Արդ մի տենչանօք վազեր յոռտելին,
Եւ մի ուղեկցիր ընդ հեշտասիրին.
Որք գընան ընդ օխլմ՝ տըղմով աղտեղին,
Եւ ընդ թիւրս թիւրեալ սահին կործանին:

ՃՈՐԻ

Ոհայն պարծանք ոչ ինչ զօրէ,
Բնութիւն անդէն զնահն յայտ առնէ:

Սուտ պարծանիւով մարդ չէ ճոխուի,
Բնութիւնն ինչ է՝ իր յայտնուի:

ՁԿԻՊ. Մէկ գէր և մսուտ ջորի մը միշտ կը պարծենար մանկութեան առեն իր մօրը վրայ թէ ձի է ու ես ձիու զաւակ եմ. բայց ծերութեան առենը երբոր ալուր կը տանէր ջալացքը, լեզուն վոխեց, և միտքը բերելով շիտակ խոստովանեցաւ թէ իմ հայրս էշ է:

Հպարտ մարդն իր ծագումնէանը նայելով ջինջը բան մը կը խարճէ և իր ազգին վրայ կը պարծի, ինչպէս հին ապենք կառապետ նագաւորները յաղթանակեան մէջն ու էին՝ կըսէին նե ամենուն ցեղէն եմ, բայց չախորժուելէ մէջ՝ ինչ եղածնին կը խոստովանէին: Աւելի գեղեցիկ է ապնուական ըլլալը քան ապնուական ծնանիլը, կըսէր Սոլոն:

Ա յսպէս ինքնապանծ՝ ի յաջոյլ ելլին
Իբրու գիւցազուն՝ ի հանդէս բազմին.
Բայց երբ ժամանեն՝ ի ձախողակին,
Չինչութիւն ինքեանց խոստովան լինին:
Մի թեթևութեամբ խաբիր զերծ ջորին,
Կարծելով լինել՝ ի վեհից սակին.
Թէ բալիք քո և գործք չեցեն պանծալի,
Անիրաւ պարծիլն է գործ յիմարի:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԵՒ ԲԱՂԴ

Ոչ նախատես յընթացս աւթին,
Եւ մի ապատ դըներ բաղդին:

Զգոյշ կեցիր գալոյ ժարին,
Եւ ի սուբ ընչ բաղդ լանիմ:

Ձկիպ. Մէկ կարիճ մը պատուէր հօրին բերանը կը քնանար. երբոր բաղդն անկէ անցաւ՝ տեսաւ զայն և հասկըցաւ անոր գալուն իմաստը, մէկէն վազեց եկաւ թևէն քաշեց ու ձայն տալով կըսէր. Ոդեակ, թէ որ հօրին մէջ կ'նայիր՝ յանցանքն իմ վրաս պիտի ձգէին. ուրեմն քեզ կը թողում մտածել՝ յանցանքն ինծինա էր թէ քուկինդ:

Բաղդին առիթները՝ ալէտ բանաս գոյնէս կանչնին՝ ընչ յաղորդ ըլլան ընչ յաջող. պոր օրինակ ընոր առիթ կայ և դուն գալոյ ժամուն նախապէս ըլլաս՝ հարիւր վտանգի մէջ կիյնաս, և ընչ յաջողութիւն առիթին նախապէս ըլլալու, կանոնի առիթը. ալ չէս կրնար գտնել այն յաջողութիւնը: Հին ապերը բաղդը կը յուսնէին կոյր պապանի մը ձեռ ապտով կըմտնէ վրայ կեցած՝ որ ապրին անդին դառնալով կոպայ դիպուածով ձգուելիս, քաշ և այլն:

Այս է նշանակ անխորհուրդ անձին,
Որ ոչ նախատես լինի վտանգին.
Անարդէ զառիթս ալէտ բաղդին,
Ի վտանգիլ անդ մեղ գընէ նըմին:

Դու խնայական վիճակեալ բանին,
Կշռեա ըղվախճան եղևց և մըտին.
Արա ըստ տեղւոյն ըստ ժամանակին,
Զի մի զղջասցիս 'ի փախչել առթին:

ԾԻՆԱՒՆ ԵԻ ՊԱՏԱՆԻ

Մի հաւատար պատիր բանից,
Զի մի ծանակ նըկուն լինցիս:

Ելիք հաւատս ամէն լեզուէ,
Եղուկ հոգւոյ ըստուվ էնչի:

ՀԿԵ. Մէկ ծիծեռնիկ մը վուռթալով անոյաւ ծովերէն, և գարնան օրերէն առաջ եկաւ ան քաղաքը հասաւ ուր տեղէն որ ձմեռուան մօտ գացեր էր. մէկ պատանի մը աղուոր օր մը տեսաւ որ ծիծեռնիկն եկեր է՝ շատ լաւ, ըսաց ինքիրեն, ահա գեղեցիկ եղանակին կարտոֆէտը (ֆ-ֆիլէմէն) եկաւ. ուստի կրնամ լաթերս ձգել, ալ ասկէ ետև ծանրութեի կուտան ինծի: Ա՛ս ըսելով գնաց ծախեց լաթերը և առաին ալ շապկըն թէ կերաւ մախեց. բայց շատ չանցաւ խիստ ցըրտացաւ, վան ալ քանի մը օրէն ետև ցուրտը եա դարձաւ անանկ առատիկ որ՝ պատանին չփոթեցաւ և մերկ ալքատ ըլլալով ծիծեռնիկէն առաջ մեռաւ, որ առ պէշ գուշակութիւնն անոր ըրեր էր:

Օրինակ է ֆոֆոխոտիպ մարդկանց որ ամէն բանէ կը հատպան սէրտպաղտուի՛ն և լարալար կը խաբեն: Ան առակէն մպաճ է որ կըսուի, ըէ Մէկ ծիծեռը գարուն չի բերեր:

Աւանդ խորհրդոց յեռատամիւտ առակին,
Որ գաղի մեծ ինչ քան գուշակողին.
Նա խաբէ ըզնա յերկդիմի բանին,
Սա կարծէ լինել վըճիռ երկնային:
Զինչ քան զայս անբան բան մատացածին,
Զխաղդ՝ի սոյ խակ հեռևեացին.
Գուշակք և քաղդեայք արբանեակք չարին
Կորուստ են ինքեանց և բարեպաշտին:

ԱՍՏՂԱԲԱՇԽ ՄՈԳ

Մի հեռևիր ձայնի մոգին,
Զի մի անկցես՝ի ցանց չարին:

Մի հաւատար կախարդներուն,
Որոնց խօսքն է սըպով լեցուն:

Ակն. Գող մը կը մտնէ աստղաբաշխ կախարդի մը տուն. և երբոր կախարդը բազմութեան մէջ կեցած իբր նրբամիտ մարդարէի պէս գուշակութիւն կընէր գալիքներուն վրայ, և կը պարծենար թէ աստղերուն նայելով անանկ գիտութիւն ստացեր եմ որ ամէն բան կիմանամ՝ որունք հարիւրաւոր տարիէն ետև պիտի ըլլան, հոն կեցողներուն մէկն

որ տեսեր էր տունը մանուկ գողը, կարեց անոր խօսքն ու ըսաց. Ի՞նչ պատճառաւ հաւատամ թէ դուն գիտես գալիքները. ինծի անտարակոյս կերևնայ թէ դուն և ոչ ներկան կրնաս գիտնալ. բարեկամ, թէ որ դուն բան մը գիտնայիր՝ շուտով տուն կը վազէիր գողը փախցընելու համար որ տեսայ տունդ կը մանէր:

Մոգուրիւնը հին Արապներէն ճապոնէ է, որ կըսէին ըէ որևէ աշխարհիս մէջ բան կըլլայ, ապագային պատահելիք և անոնց պէտուքը կը պատճառէ. անոր համար ապագային դէպքը նայելով կարծէին ըէ գալիքները կիմանան, և խաբէուրիւնները ընելով կը խաղապէին ժողովուրդը:

Տես խաբէութիւն բազմապէս մոգին,
Կախարդէ լըզմիտս անհանճար ռամկին.
Ոչինչ տեսանէ որ կան առ ոտին,
Պանծայ գուշակել զապառնիս խորին:
Քանիք կուրացեալ հաւատան նոցին,
Ի կուրաց անտի լոյս առնուլ կըրթին.
Իմաստ ապառնեաց թէ գոյր 'ի նոսին,
Ոչ մերկ և աղքատ մոլեալ չըլլին:

ԴԻՈՍ ԵՒ ՄԱՐԴԻԿ

Այլոց Թելին կայ տառջև,
Իսկ սեպհականն յետուստ քեզի :

Այլոց պիտան ունինք առաջ,
Մերինն ունինք մեր էպետանց :

ՀԿԷ. Մարդիկ ստեղծուելէն ետև Դիոս տեսաւ Թէ անանկ մեծ մեծ պակասութիւններ ունէին ու էնպիտի կրնային համբերել մինչև ու անոնց Ճանաչողութիւնը էնվերցընէր իրենցմէ. սա պատճառաւ կը մտմըտար Դիոս ու զանոնք սա կարծիքէն հեռացընէ. ուստի ժողվեց բոլոր մարդկային պակասութիւնները՝ լեցուց երկու բերնէն շատ պարկերու (հէյպէներու) մէջ, յետոյ բաժնեց՝ ամմէն մէկին իրեն տալով վրան բեռցուց առանկ կերպով՝ որ ուրիշներուն պակասութիւնները կախուած էին տանողներուն առջին, իսկ իրենց պակասութիւնները պարկին մէկալ դին ըլլալով ետևնին կախուած մնացին :

Մարդուս բնութիւն եղեր է որ իր պիտութիւնը չի փեռներ և ուրիշինը միայն կը փեռնէ. անոր համար առաքը կը յետընէ ինչ Դիոս առանչ ըրաւ, ֆոխտանակ ըսելու ինչ ատ լար ուղղութիւնը բնութիւնն եղեր է :

Ա յս անկարգ դասմունք պակասամբոխն,
Որ գինէ հանդէպ վայրոց ըզմեբին,
Սուր խուզէ ըզշնուղ ական ընկերին,
Կոյր է և անտես խրոմ գերանին:
Քանի գեղեցիկ լինէր ըստ կարգին,
Եթէ զննէաք վերիսպանս անձին.
Փութապէս արդեօք զերծ գտանէաք
Ի վերիպանաց բարոյականին:

ՀԱՒ ՊԱՐԱՐՏ

Որ քան ըզչափն ունել կրճի,
Կորուսանէ և զոր ունի:

Եղած բարոյն ալ գոհ չըլլայ,
Ունեցածն ալ չէ՛ փոխէն ինկնայ:

Ձկիը. Մէկ հաւ մը ամէն օր մէյմէկ հաւկիթ կածէր տիրոջը. իսկ տէրը կըսէր որ եթէ երկու չափ գարի տամ, ինծի երկու հաւկիթ կածէ: Եւ ահա ժամէ՛ ի ժամ շատ գարի լեցընելով տուչին՝ անանկ սասսիկ գիրցաւ հաւը շատ ուտելուն պատճառաւ որ՝ շուտ մը սկսաւ քիչ ածել, և յետոյ բոլորովին հաւկիթէն կտրուեցաւ:

Շատ մարդ իրեն բաւական բարիք ունեցընելու համար՝ աչքը մաշելով ունեցածն ալ կորսընցուցեր է, և յետոյ ախոռվախ ընելով գայեր է աշխարհքս: Անոր համար կըսէ մէկ իմաստուն մը՝ ըլէ՛ բնկպէս որ

Ծովը գեփերով ին լեցուի և չի յագենար, ասանկ ալ շահասէր ագահին սիրտը չի կշտանար:

Ասկէց ոչ յագի բաղձանք անյագին,
Զրկոտ հանապազ յանչափից մասին.
Անտահման գոլով իղձ և տենչ սրտին՝
Մինչև ըսպառէ ըզկերան ընդ գոյին:
Մի տենչար չասին մի չափազանցին,
Մի գքեզ մաշեցնէ ցեց տրտմականին.
Ի ձրկոտել յանչափն սրկածք քեզ չափին,
Նանրանան բընաւք և դու ընդ նոսին:

ԴԻՈՍ ԵՒ ԿՐԻԱՅ

Մի կար ընդդէմ կամաց վերին,
Մի կըռնացեա սատիճս յանձին:

Ինչ բանով որ ին մեղանչէս,
Անոր պատիժն պէտք է քաշէս:

Ակն. Որ մը Դիոս կանչեց աղջին բոլոր կենդանիներն որ ամէնը միատեղ տեսնելու և իրենց տարբերութիւնը վայ նայելու զուարճանայ. որունք մէկէն հնազանդելով վազեցին եկան արուգուշը, միայն կրիան ուշացաւ այնչափ որ կարծեցին թէ չիպայ պիտի. բայց ինչ և իցէ եկաւ յետոյ հասաւ, և ինչ բանի վայ որ արտունչ կար՝ պատճառ բերաւ թէ գալու առենը հարկ եղաւ իր տունը տպահով առ մը պահել, ահա

տարը հաւնար կըսէր շատ ժամանակ կորսընցուցի և այլեւս ուշացայ : Բայց առ անմեղադրութիւնս անանկ պատրաստ ընկաւ որ միջոց չունեցաւ զօրութիւն մը ունենալու. վասն զի հազիւ թէ սկսաւ խօսիլ տանը վրայ, Դիոս վերցուց տունը կռնակը դրաւ որ կուզէր թէ առանց ուշանալու հնազանդ ըլլայ իրեն : Ամէն եղաւ որ պահաստութիւնը պատժելու հաւնար մինչև հիմա իր տունը վրան առեր կը տանի :

Ինչ մեղք որ գործէ մէկը՝ անոր պատիժը կը տաշէ, ինչպէս կրնան իր տունը պատճառ բերաւ անհնազանդութիւնը, անոր համար կոնային առաւ պայծառ. այսպէս պերճութիւնը պատճառ կը բերէն ըն պահքի պէր էնք՝ պէպք է շահինք. ՚ծ ալ պատիներն չէնք էրնէն կառնէ և էրբեմն խեղճ պզտիկ կընէ. առանիկ է ամէն բան :

Ա յս կշիռ արդար արդարադատին
Ոչինչ վերէպ կայ ՚ի կըշռոյ նորին.
Յոր ինչ ոք յանցեաւ՝ զծանրութիւն բեռին
Դընէ ՚ի թիկունս այն յանցաւորին :
Ոսխր յառակէս անլուր անբանին
Կոչոլին ձայնի ոչ հեռևողին.
Պատկառ կալ կառոյց վերին կոչոլին,
Գընալ ըզկնի ձայնի անբաւին :

ԵՂԶԵՐՈՒ ԵՒ ԱՅԳՒ

Որկոր անյագ կորուստ բազմաց
Կարապետաէ՛ն չար արկած :

Անհարգ սէրը զաք ուսքելոն ,
Սև օր բերաւ զապին գլխուն :

ՃԿ . Մէկ եղնիկ մը որսորդներուն ձեռքէն վախչելով այգին կը մտնէ և հոն տեսնելուն մէջ կը պահուի անանկ որ որսորդները զայն կորսընցուցին եւ դարձան : Իսկ եղնիկը տեսաւ թէ վտանգէն ազատեցաւ՝ սկսաւ որթը (ասման) կրծել և տերևներն ուտել որ ղինքը պահեր էին . և աս եղաւ իր Թշուառութեը պատճառ : Վո՜ւ զի այնչափ տերևները կերաւ որ բացն եղաւ երևցաւ , մինչև որսորդները եւս դառնալու առեն տեսան զայն , հասան վրան մէկէն բռնեցին մեռցուցին :

Օրինակ է անոնց որ ուսքելէն ՛ի զաք ուրիշ բան չեն տպաչիը , և կարծեն թէ որչափ աւելի ուսքեն ուրախանան՝ այնչափ զաք կապրին , բայց չէյպեն թէ անանկ աւելի պիւրին կը կորսուին : Կըսէր ՌԷ Ի՝ տասպաան մը թէ տարբուս կէսը ուսքելով խռելով կը ՌեռնՌ , կէսն ալ զաք հոգ ընելով :

Գործ է յեսատվիա որկորաժեսին
Ուսել և ըմպել ըստ սենչման սրտին.
Որով վաղվաղէ ըղկորուստ անձին,
Փութայ ժամանէ ժանեաց օրհասին:
Սակայն ողջուիւն գոհար է անգին,
Թէ ոչ խամրեայլ յանկարդ հեշտալին.
Գընաց.ք բարեխառն ըղգաստ յուսելին
Մի միայն անգուստ գիւծ է կեցողին:

ԵՐԿՐԱԳՈՐԾ ԵԻ ԱՂՈՒԷՍ

Որ չար խնդրէ մերձաւորին,
Նոյն չար գառնայ 'ի ծոց նորին:

Ո-ՐԻՇԻԵՐԱՆ ով չար խորհէ,
Չարը խոփայ գլխով կը գտնէ:

ՃՀԱ. Մէկ երկրագործ մը ցանեց իր արտերը և բոլորը զարմանալի լաւ բուսաւ. երբոր կը նայէր որ հնձէ ցորենը, դրացիներն մէկն որ գինքը կատէր՝ բաց մնաքովը. Ես անանկ արդիւնք ցորենիդ ժողվելն որ գուն ալ տեսնես. ուսոի առաւ վառած կերոն մը կապեց աղուէսին պոչն որ բունին մէջ բռներ էր իր արտին քովերէն: Յետոյ տարաւ զայն հետը մէկալին արտին մօտ և հրելով հասած ցորեններուն մէջ ձգեց. կուզէր որ ան կերպով բոլոր ցորենները մոխիր դարձընէ. բայց տես ինչ պատահեցաւ: Աղուէսն առաջ երթալու տեղը՝ ետքայէն

եա դարձաւ որ իր բուն երթայ. և որովհե-
ան էր կրնար երթալ առանց անցնելու իր
սիրոյն արտէն որ չարուեի ուզէր ընել,
ահա վազեց մտաւ անոր արտերուն մէջ ու
կրակը տուաւ. և այսպէս բոլոր չարութիւնը
չարութիւն ուզողին գլխուն եկաւ, որ ա-
սաւ իրեն բոլոր ցորենը մոխիր դարձած իր
խորամանկ չարութենէն:

Նախանձոտ չար մարդին երբեմն պէս մէնը կը գըտ-
նէն ու կը նային որ անուշութիւնն ինչ պան. բայց
ամէն մարդ ըրածը կը գտնէ:

Չարակամ խորհուրդ դաւաճանողին
Գուն գործէ կարճել զօտարաց բարին.
Բառնայր զարեգակն թէ էր ի ձեռին,
Չի մի ծագեացի ի տուն ընկերին:
Մի չարակնութեամբ աստր ըզբարին,
Եւ մի նախանձու վընասեր նմին.
Զոր կինչ սերմանես ըզնոյն հնձեացես,
Թէ չար թէ բարի գըտանես ըզմին:

ՉԻԱՊԱՐՄԱՆ ԵՒ ՉԻ

Վայ որ զայլոց փոքրըն դաստ,
Զիւր մեծ չարիս անտես առնէ:

Քո՜ պախարի՜ւդ ասա՜ղըդ դէր,
Մի՛ ուրիշին ֆոթըը դաբէր:

ՀՆԴ. Պարոնի մը ութաք եղաւ իրեն ձին որ քաղաքը Թողուցեր էր, և հրամեց ձին նայող ստաւաւորին որ իր եղած տեղը բերէ: Ան հրամանն որ լսեց՝ գնաց անոր ձին առաւ մեկնեցաւ անկէ. երբոր երկուքը միասեղ կանցնէին ախրոջը դաշտին մէջէն՝ ծառան տեսաւ որ ձին գլուխը կախեր գաղտուկ խոտ կուտէր. Դող աւազակ, ըսաց զարնելու անոր, չեյտե՞ս որ սա խոտը մեր ախրոջին է, սակէ խոտ ուտելը իրեն դէմ է: Պատասխան տուաւ ձին. Դուն որ ինծի կէս չափէն աւելի գարի չես տար որ ինծի համար գներ է, չեյտե՞ս որ սա գարիին կէսն անոր կինին, և մեկալ կէսը գոնալովդ՝ ինչպէս տալոցուելի ես ըրեր, կը վաստուժնամ աեսքով, դուն մեղքի պատճառ կըլլաս: Եւ ահա սա շատ մեծ չնաս է մեր ախրոջը քան թէ ան որ երեսս կը զարնես: Ուրեմն դադրէ ինծի նեղութեի տալու. եթէ կուզես հաւատարիմ ըլլամ անոր՝ նախ դուն ակրատ ինծի բարի օրինակ տալ:

Օրինակ է անպիտան ծառաները որ ձեկղեկի պես-
կեսով ձեր անբաժանելիները կընեն փերուզիոյը. ի-
նչո՞ւ ձեր չարիքը չեն փնտռեր ու պիտի բանի վրայ
կը գայնակղին։

Ըահասէր ծառայն անհատաստիկ
Այսպէս կենակից ընդ ծառայակցին.
կարձէ հատանէ զապրուստ ընկերին
Լըցուցանել զոյն չկար անյապ փորին։
Սոցա պատասխան ոչ շատ յերկարին,
Որ զըկողութէ շահիլ նկրտին.
Երբ համար խնդրի՝ է գալ դատողին,
Պատանձին յայնժամ տալ պատասխանին։

ԱԳՈՒԱՒ ԵՒ ԹՈՒՉՈՒՆՔ

Պըճնեա բարեօք զէքնալ հոգին՝
Մի զվայրացուկ պատիր մարմին։

Մի զարդարէր մարմինդ ոսկոյն,
Այլ գեղեցիկ հոգիդ ոգոյն։

ՀՆԴ. Ագուաւն օր մը զարդարուեցաւ փետուրներով որ ծովին եզերքը կը զանազան թըռչուններուն բուներէն, և եկաւ անոնց մէջ որ վտռտաւորուի. իսկ թռչուններն առջի բերանը զուարճացան զանազան գունով փետուրներուն վրայ, բայց երբոր մօտանց նայեցան և ճանչցան անոր խորամանկութիւնը՝ ամմինքը բարկացած մէկէնիմէկ վրան վազե-

ցին, և շատ քցբցելով ոչ միայն իւրենց փե-
տուրներն՝ այլ և իրենները ալ փետեցին,
Իսկ ագռաւն առանկ փետեցած ամօթով
մնաց, անանկ որ վազեց պահուեցաւ, ա՛լ
չի համարձակեցաւ անկէ ետև երևնալու
նաև ագռաւներուն առջին:

Օրինակ է անոնց որ ուրիշի բանով կը պարծե-
ցուին և ճշմարիտն կը ծածկեն. Համ ինչ հոգին
կը յգեն, միայն մարմինը կը պարծցնեն, երբոր մահը
գայ ամէնը կանցնի կ'երթայ: Պէտք պարծանք
չերոպի մը ըսայ. ինչո՞ւ համար կը հոգնիք բանդ
պարծցնելո՞ւ:

Զարդ գեղանըկար զարդ բանականին
Ընչքին բարուքիւնք են հոգւոյ մասին.
Կրթուլականօք չափակցեալ բանին
Գերապանծ փայլի իբրև լուսածին:
Դուռ որ Ճոխացար գանձու իմաստին
Մի ցանկար զարդու մի մարմնականին.
Պատկեր քո անդիւտ մտաց անբաւին
Մի նահանջի 'ի զարդ օտարին:

ԱՐՏԱՒԱՐ ԵՒ ԿԱՐԱՊ

Մինչ ձանաչես զքոյսդ քարւոյն,
Մի լքաներ զայն հեշտագոյն:

Երբ լաւ բանին յարգը գիտես,
Նայէ յետոյէդ ըսպա էհանէս:

ՃՀՊ. Արտաւարը կը բռնէ մէկ կարապ մը, կարծէ թէ սագ է. երբոր վիզը սիտի կարէր՝ սկսաւ կարապն երգել. իսկ մարդը ձայնէն հասկըցաւ և շուտով դանակը տեղը դրաւ. Սիրուն կարապ, կըսէր սիրելով, այ հաճոյ չէ որ ես քեզ մեռցընեմ, որովհետև այսպէս գեղեցիկ կերգես:

Կարապը այսինքն (Թոյլ) ընտանը սագի նման է ըէ գոնով և ըէ ոեծուքի, բայց յայնը սխորժելի է, մանաւանդ երբոր ոեռնիլը կը մօտենայ՝ խիստ անուշ կերգէ. որ օրինակ է առաքինի մարդկանց ինչպէս վերն ըսինք:

Կարապ նշանակ է մաքրասիրին,
Որ յոգւոց հանէ՛ի գալ օրհասին.
Անձկայ լքանել զվիճակ մահացին,
Գնալ մտանել յանմահ վիճակին:
Ջանա մաքրակոյր լինել ըստ նմին,
Լծակցիլ սրբոց գրկել զբարին,
Մերժել զձոխսուքին ըզշնորհս բաղդին,
Թէթև թևանալ առ քաղցր անձկալին:

ՀԱՒ ԵՒ ԿԱՏՈՒ

Մի լսեր ձայնի չարաւէրին,
Զի մի չարիք քեզ նիւթեսցին։

Շատ մ՚օգին նէնգաւորքին,
Որ գեղ ըմնէ իրեն բաժքին։

ՀՀԵ. Մէկ հաւ մը անզգուշութէ ուտելով թունաւոր կենդանի մը կը հիւընդնայ. երբոր թևերը վար ձգած կերթար՝ կատուն մօտեցաւ իրեն և քաղցրաւոր ձայնով մը ըսաց. որդեակ, ինչո՞ւ քեզի ձար մը ըրընտնալը։ Հրամերես, ըսաց հաւը, մէկ խիտ ապահով գեղ մը գայ որ գուն միայն կըրնաս ընել։ Գեղդ ինչ է, ըսաց կատուն։ Պատասխանեց հաւը թէ աս գեղն է քու մէկդի քաշուիլդ այնչափ հեռու՝ որչափ կարելի է։

Շատ հէնգաւոր մարդիկ կան որ անուշ ընդունով իր մօտենան, և խորհուրդ տուպան որ հերով մը պարիսն յափշտակեն. բայց անանկներէն հեռու փախչելու է։

Այս կարեկցութէն դաւաճանողին
Զէ վան ընկերին, այլ յօդուտ անձին.
Զի խորհուրդ և կամք նենգամիտ չարայ՝
Ծանօթից անգամ չար առնել յաճին։

Քեզ խորհակից մի թոյլ տար վաղին,
Զի մի խորտակեր մուտ լեցի նմին.
Որչափ հեռի կայ ի քէն թշնամին,
Այնչափ ապահով ինաս ի կային:

ՈՐՍՈՐԴ ԵՒ ՀՈՎԻՒ

Զէ արուեստ ի տան սանձալ,
Ի ժամ մարտի վատթարանալ:

Ի՞նչ ջահ պան մէջ մեծ մեծ խօսիլ,
Բանի ապէն վախով դեղնիլ:

ՃՀՒՂ. Որսորդ մը տաքցած վեր վար կերթար կուգար, երբեմն անտառը, երբեմն դաշտը կը վազեր: Ի՞նչ կը փնտրես, ըսաց նրեն հովիւ մը, որ առանկ խառնված կը տեսնեմ զքեզ: Պատասխանեց՝ Թէ մեկ առիւծ մը անցած օրեր իմ խիստ լաւ շունս կերաւ, կը փնտրեմ որ գտնեմ սորվեցընեմ նրեն Թէ որուն հետ կը խաղայ: Իմ հետս եկո, ըսաց հովիւը, ես քեզի կը ցցընեմ անոր բունը ուր տեղ որ կը գտնուի: Որսորդը գոյնը փոխելով ըսաց. բարեկամ, ժամանակին ուշ է, ես ալ հիմա խիստ հոգնած եմ չեմ կրնար հոն երթալ, բայց վաղը կանուխ կուգամ կաղաչեմ որ տանիս զիս հոն: Հովիւը մեկալ օրը շատ սպասեց, բայց մեկ չենալ երևցաւ որսորդը:

Օրինակ է փիլիսոփայից որ ամէն բանէ վերայ ձեռ ձեռ կը խօսէին, բայց պէտք որ գայ՝ ընդունին կը հապուխ. անոր համար կըսուի ըն ձեռ խօսողին յետոփէն բան չի գար. և ձեռ փար նէպէլը՝ էշ-ղարնելու նշան է:

Այսպէս վատ մարդիկ յորժամ են՝ ի տան,
Առաջի իւրոց լինին բազմաբան.
Բայց երբ՝ ի հանդէս գործոց մերձենան,
Զերթ կինամարդի վատաթարեալ գողան:
Քեզ լինի խրատ այս իմաստ և բան,
Մի՛ առ օտարաց լինիր բազմաբան.
Զի բանք ընդ գործոց երբ ոչ միանան,
Ծանոակ ամենից ճնաս զրաբան:

ԻԸ ԲԵՒՆԱԲԱՐՁ

Միտք յիմարաց որչափ խորհին,
Միշտ ճշտաւս ծանրաբեռնին:

Յիմար մարդուն գործփէն վերայ
Յիմարութեան նշան կըլայ:

ՃՀԷ. Ա էկ էշ մը ալ բեռցուած ջուրը մտաւ և շուտով վրայի աղը հալեցաւ. քանի մը օրէն եաև ապունդ (սէնկեր) բեռցուած երբեմն կանցնէր նոյն ջրին քովէն՝ վազեց ջուրը մտաւ որ բեռան ծանրութիւնը թեթևնայ ինչպէս առջի անգամն եղեր էր, բայց հակառակն եղաւ. վասն զի ապունդը ջուրը

ծծեց և բոլորն ուռեցաւ. ուստի իշուն բեռն անանկ ծանրըցաւ որ չկրցաւ դիմանալ, ջուրն ընկաւ ու խղդուեցաւ:

Անխելք մարդը որչափ ասելի ջանայ խելք բանեցընել՝ այնչափ անշնորհք բան կընէ. ջոփ ազէկ է որ իրեն ընկածն ընէ, ասելի բան չէմպածէ: Անոր համար կըսուի ըն ջոփ լաւ է խելացի մարդուն հետ փաը կրել, քան ըն անխելքին հետ աղէկ նոփիլ:

Այս բերմունք մտաց անիմաստ ասմկին,
Որ կարծէ խորհիլ զօգտակարն անձին.
Իմաստնոց է այն խորհիլ ըղբարւոյն,
Առնել ըստ տեղւոյն և՛ ի գէպ ժամուն:
Ջանա վաւ պահել զնմաստ բընաձին,
Եւ մի՛ ամբաղձել ըստ յաւանակին,
Որ ոչինչ ունի կշռել զառնելին՝
Առնել կամ թողուլ ըստ բերման առթին:



ճՂԸ· Արծիւ նէ տահար: ճՃԱ· Աւիւծ, կինճ և Անգղ:



ճՃԵ· Կին և Ոչխար: ճՃԶ· Հովիւ և Այծ:



ճՂԱ· Հովիւ և Ոչխար: ճՂԲ· Արծիւ և կաչաղակ:

ԱՐԾԻՒ ՆԵՏԱՀԱՐ

Ոչ ոք յանկարծ դիպի չարեաց,
Երբ նախատես է ապառնեաց:

Թէ մխմբպաս այնպէս գուրծէս,
Շապ ճեասէ փէղ խոլպաբէս:

ՃՀՇ, **Ա**րծիւը մէկ քանի փեասուր կը փեթռտէ իր վրայէն վար կը ձգէ. ուրսորդ մը կը ժողվէ զանոնք, յետոյ նեռին ծայրը կանցնէ և անով նոյն արծիւը կը զարնէ: Մեռնելուատեն կը կանչէր արծիւը. վայ ինծի, ես ասանկ խեղճ ողորմելի կը մեռնիմ թէ որ անխոհեմութիւնէ իմ մեռնելուս պատճառ չըլլայի:

Անխոհեմութիւն պիտի ըսես որ ըրած բանին վերջը բմպաձելով մահը յետոփովը կը կանչէ: Շապ անգամ մէկ անխոհեմ գուրծ մը անանկ բան կընէ որ ազխարհս մէկիկէղ գար չէր կրնար ընել: Ուրիշ պէպ է նախ ամէն բանին վերջը մխաձել որ ճեասուելէն էսկ անխելքութենէ չիպզայ պարապ փեղը:

Ահա տեսարան անխորհուրդ մուսց
Ըզվախճան գործոց ոչ մտաւորեաց.
Որով և ինքնին ըզկեանս կենաց
Կարէ հատանել 'ի սայր մանգաղաց:

Քանի՛ անխոհեմք դնին յայս արկած,
Վաղվաղեն ըզմահ հանդիպիլ անձանց.
Որ ոչ նախատես լինին ապառնեաց,
Մաշեալ զբրաւի՛ն նոյն ապառնեաց:

ՈՒՐՈՒՒ

Որ զիւրին առէ, այլոց ցանկայ,
Եւ յերկոցունց վրէպ մնայ:

Այսու բանին դուն մի ցանկար,
Նայէ փուխինդ ըլլայ յարմար:

ՃՀԹ. Կըսուի թէ ուրուրն առաջ հինա-
կուան ձայնէն շատ լաւ ձայն ունէր, բայց
թէ ինչ դիպուածով անանկ անուշութենէն
ատանկ խիստ անհամ ձայն ելեր է՝ ահա
պատճառն ատ թռչունին անխոհեմութին է
կըսեն: Օր մը կը տեսնէ որ ձին խխընջալով
ձայն կը հանէ, միտքը կը դնէ ուրուրն որ
ինքն ալ անոր պէս ընէ. բայց օրշափ աշխա-
տեցաւ անոր ձայնը հանելու չկրցաւ: Դէշն
ան եղաւ որ ուժ տալով նմանցընելու համար
ձիուն ձայնին՝ իրեն ձայնն ալ սերեց, և
անանկ խառնուեցաւ որ միտակ մէկ զարհու-
րելի աղաղակ մը կը լսուի:

Օրինակ է անոնց որ իրենց ունեցածին չեն
հաւնիր՝ կուզեն ուրիշին նմանիլ, և անով ան-

ցաճնին ալ կը կրօնընկնէն և անպիտան կըլլան։
Շատ լաւ է իր ուռենցածը կոպտելտգործել քան
ըն ուրիշին եփնէն իյնել։

Ա՛յս անմտութենէ բերնէ են տկարին
Որ այլոց ցանկայ նմանիլ յաւակին.
Թողու զյաւակութիւն պատշաճեալ անձին,
Ուզել նկրտի որ՝ ի չար բերին։
Չանա կատարել զքոյդ յատուկ նեղքին
Չանազան ձրիւք իշխանականին.
Մի ցանկար այլոց, այլք քեզ ցանկացին
Նմանիլ բարուց վսեմագունին։

ԱՌԻՒԾ ԵՒ ՈՐՍՈՐԴՔ

Խնատու հանճար մատուրին
Յաղթէ ուժոյ վեհ առիւծին։

Մարդուս պէնթը իրեն խելքն է,
Անով իրնայ ալխարհ յաղթէ։

ԽԱ. Առիւծը մեկ քանի կենդանիներու պըռնկ եղաւ և անոնց հետ միատեղ որսորդներու դէմ եղաւ որ ծեծկուռի։ Երբոր մօտ գնացք, որսորդները նետեցին իրենց նետերն առիւծին վրայ վիրաւորեցին։ Առիւծը հասկըցաւ որ վէրքը խորունկ է, բարեկամներ՝ ըսաց, հետ գառնանք. եթէ մեր թշնամիները հետեւէն սատնկ կը զարնեն, հապա աւելի որ մտեննանք ինչ չեն ըներ մեզի։

Ոչ ոք էր ջրոսկեր ապտակելով օրհնածը բանէ
Փէշ չէ դներ, առիւծին պէս խայտառակ կըլլայ.
անոր համար կըսեն՝ Թշնամիդ օրլուէ փիսը ըլլայ,
դուն պինդը խիտոպ ջրաւորի փէշ դէր:

Տես զիարդ ընկճի հզօր ամեհին
Յանզէն հանճարոյ իմացականին.
Չի միտք և ոչ զէնք տիրեն աշխարհի,
Թէ իմաստութիւն զինեալ է բանին:
Մի վստահանար 'ի քո ոյժ բազկին,
Մի 'ի վէգ բերկր ընդ գիտնականին.
Գանզն իմաստուն թէ և փոքրագի
Փշրեն հանճարով զեղջիւր գոռոզին:

ԱՌԻՒԾ, ԿԻՆՃ ԵՒ ԱՆԳՂ

Կինճ և առիւծ երբ մաքառին,
Անգեղք խնդան յուսեալ զնոսին:

Երիս հոգի օրլուէ կոտոն,
Շահ կը բերեն մէկ օրիշին:

ՃՃԱ. Առիւծն ու խոզն անանկ իրարու վրայ կատղած էին որ կծուելով մէկմէկ կը սպառտէին. իսկ անգղ թռչուններն ուշադրութիւն կը դիտէին անոնց կռիւը, և իրենց մէջ կըսէին. թէ որ շիտակը նայինք՝ աս յաղթութիւնը մեզի համար պիտի ըլլայ. վը զի սանդք իրար չեպիտի թողուն մինչև որ մէկը գետինը չիյնի, ուստի կամ առիւծը և

կամ խոզը հարկաւ մեզի կերակուր կըլլան։ Ա՛ս խօսքը պարապ չէլաւ, վասն զի յիրաւի ստացան աւելի մեծ ուռ մը որչափ որ չէին կարծեր, որովհետեւ առիւծը մեկէն պատռեց զխոզը, խոզն ալ զինքը պաշտպանելու համար վիրաւորեր էր զայն. ուստի խոզը մեռնելէն մեկ քանի օրէն հետեւ առիւծն ալ մեռաւ իր խոցէն. և այսպէս անգղները յափշտակեցին երկուսան ալ կերան։

Օրինակ է ոխակալ և կռռաւոտ մարդիկոց որ իրար խածնելով կոտրեն գլուխնին, և անոնց կռծանելը խաղաղասէրները կը ջահին՝ անգղին (ախտապային) պէս։

Ահա անհամբոյր կիրք գազանային
Ածէ զառեալս ժանեաց օրհասին.
Որով և անգեղք բընակք յերիներին,
Հանել կեր ինքեանց կան՝ի տես մարտին։
Այս է առեալց գեղեցիկ բաժին,
Խածատեն զնրեարս, ինքեանց կոտորին.
Մերժեն հալածեն ըզսեր ընկերին,
Մերժին տեսանել ըզսէր արեգին։

ԻՐ ԿՈՒԱԲԱՐՁ

Զինչ շահ տանել գանձ և բագին,
Մընալ վատթար ծագումը մերկին:

Մի պարծենար ընչ ունիս գանձ,
Ան ըլար կերևայ իր մընաս բաց:

ՃԱՓ. Մեկ էշ մը վրան կուռք մը բեռցած կանցնէր բազմութենէ մէջէն, և ժողովուրդն երեսի վրայ ընկած մեծ յարգութենէ երկրպագութիւն կընէին կուռքին: Իսկ էշն ատ պատիւն իրեն սեպելով սկսաւ հպարտ քալել ծանր ծանր և գլուխը բարձրացընելով անկընծներըը վեր տնկել: Ատոր ըրածը մեկը տեսաւ կանչեց իրեն. ապուռն աւանակ, դուն կը կարծես թէ մեր յարգութենանը արժանի ես եղեր. քիչ մը տպաւ մինչև որ տարած կուռքդ վրայէդ վար ինկնի, դաւազանն ան առեներ քեզի կը հասկըցընէ թէ յարգութիւնն որ մենք կընենք՝ քուկինն է թէ անուն է:

Օրինակ է խառասէր հպարտ մարդու որ երկեն պարիս փեսանելով՝ ինքզինքը բան մը կը կարծէ. բայց ապրանքը վրայեն վերցուցածիդ պէս՝ կը ճանչնի զինք որ է: Փիլիսոփաները կըսեն՝ արտաքին բարիք ըսին որ կուգայ կերթայ. վայ անոր որ ուրիշներէ կը հպարտանայ:

Անբան ցանկութիւն կայր փառասիրին
Կարծես տայ լինել՝ի վեհից սակին.
Այլ չէ մեծութիւն այն բեռն արտաքին,
Բոլն նեղքին օժիտք են յոգւոյ մասին:
Մի ցանկար փառաց այն անցաւորին,
Որ գայ և գնայ իբրև բեռնակրին.
Այնպէս զարդարեա ըղնշոյլ բանին՝
Զի վեհ ճեռացես՝ի գլնալ բաղդին:

ԳԱՅԼՔ ԵՒ ՈՉԽԱՐՔ

Չէ պարտ անառալ խրատատուին,
Երբ խրատուս է Թշնամին:
Զոր խորհրդով անընդհատին
Ծառա չինայիս բարեխառին:

ՀՀԵ. Որ մը պայլերն ըսին ոչխարներուն. Բարեկամք, իրաւ որ չենք կրնար հասկընալ թէ ինչպէս դուք կրնաք համբերել այնարգանացն որ ձեր շնեըն ամէն անգամ ձեզի կընեն. շնասակն որ նայինք՝ ինչ ծառայութիւն կընեն ձեզի աս անզգամները ձեր խումբին եռևէն գալով, բայց եթէ վտարցընել միշտ և խածնել հազար նեղութիւն տալով: Մեր խօսքը մտիկ ընէք և շուտով պատնէնք վրնտռտեցէք. ինչ կը վախնաք միթէ դուք բաւական քաջութիւն չունիք որ ձեզ մինակ պաշտպանէք և ձեզի միտս տուողը հալածէք: Ան խօսքս վրայ ոչխարներն ի-

բենք զերենք խիստ զօրաւոր կարծեցին ու շուտ մը վազեցին ըներուն ճամբայ տուին, բայց շուտով զղջացան, վասն զի գայլերը տեսան որ ըները հեռացան՝ մեկէն վազեցին ոչխարներուն վրայ բոլորը պատռեցին:

Ով որ ընչասէրն լօտքին կը հաւատայ և բարեկամին կը հեռանայ՝ աս ոչխարներուն պէս կըլլայ. վասն զի մեկին որ բնութիւնէն լաւ է, աւրիշին ալ բաւական կրնայ ընել և ալ բարի խրատ կրնայ տալ:

Այսպէս չարք պատրեն ըզմիտս անմեղաց,
Իբրև բարեկամ ձայնեն լսելեաց.
Կարեկից լինին իրատուու բարեաց.
Մինչև ձգեացեն 'ի թակարճ խըրեանց:
Մի լսեր ձայնի մարդեղոյզ չարին,
Մի քեզ մերձեսցի գազան թշնամին.
Գանգն չարակամք միշտ չարիս կամին,
Մի ակնկալցիս 'ի նոցունց բարին:

ԳԵՏ ԵՒ ԱՂԲԻՒՐ

Մի՛ սպերախտ լինիր քարեաց,
Զի մի հասցեն քեզ տոյժք չարեաց։

Աղէքսանդրիա բարբառիէ՝
Գրած պահէ ջէջը սրտիէ։

Ձէ՛ր. Գետը դէմ ելաւ իր գլխուն կամ աղբիւրին և անարգելով կըսէր՝ Թէ երբոր կը մուածեմ իմ լայնութիս ու խորութիս և կը տեսնեմ Թէ իմ ջուրս աղբիւրներուն ջուէն մրչափ մեծ և մրչափ շատ է՝ միտքս կուտամ որ ես գետ եմ. բայց դուն ողորմելի աղբիւր մ՚ես՝ միայն Թէ մէկ բարակ ջուէ Թել մը որ արեգակին մէկ ճառագայթը կրնար ցամքեցընել Թէ որ ապառաժներն ուր տեղից որ կը վազես՝ քեզ չկպահէին արևէն։ Պատասխանեց աղբիւրը. լսիր, իմ բաւի քեզ շատ կը վայլէ զիս անարգել, դուն որ առանց ինծի ոչինչ կըլլայիր. ես Թող ըլլամ՝ նայինք քու մեծութիւնդ և ձկներդ ինչ կըլլան։

Անպերախտն ինչ բարի որ պետնէ, լուծէր ճանչնալ՝ կարծելով Թէ իրմէն է. անոր համար եղած բարիքին ալ շահը չէ պետնէր, և պատճառ կըլլայ որ մարդ մարդու բարերարութիւն չընէ։

Դժնդակ դառնանք ապերախտ վասին
Անգութներ բերի իւր բարերարին,
Որով և ըզյան լսէ զարժանին,
Թէ ես եմ պատճառ քեզ ապերասին:
Արդ մի մոռանար ըստ օրինակին
Ջերախտիս այլոց որ քեզ արարին.
Գրեա քանդակեա յարձան քո սրտին,
Զի աշխարհ համայն զայն միշտ ընթերցցին:

ԿԻՆ ԵՒ ՈՉԽԱՐ

Մի ոտնակոխ լինիր հեզին,
Որ հպատակ կայ քոյդ ձեռին:

Եթէ էշխան ես ուրիշին,
Վիշտ ներքուն էիպես խեղճին:

ՃՃԵ. Ա՛ԷԿ ԿԻՆ ՄԸ ԿԸ խուզէր ԻՐ ոչխարին բուրդը, և անանկ գէշ ԿԸ կտրէր որ կաշին ալ միասեղ ԿԸ քերթէր: Իսկ ոչխարը կաղաղակէր Թէ կսպաննեմ, եԹէ իմ կաշիս կուզես՝ զիս մսածախին խրիկէ, և Թէ բուրդս կուզես՝ խուզողը բերել սուր որ կտրէ:

Օրինակ է անոզորմ մարդկանց որ անանկ պանջելով հաշխատողներն ծառաներէն որ հոգինին կը հանեն. Բայց Ըէ և պահապուրըլլայ ծառան, պէտք է մխմբպալ Ըէնց ալ պէր ուռինց, արդեօք Ընչպէս պէտք է ԿԸ ծառայենց մեր պէրուԸը:

Ա յսպէս են վարմունք դաժան տիրուհեայ,
Կռփեն կեղեքեն զաղախինս իւրեանց.
Մոռանան թէ պոյ և տիրոջ ինքեանց,
Մորթեզերծ առնեն այսպէս չարաստանչ:
Արդ մի խոշտանգիչ լինիր անմեղաց,
Մի՛ ի քեզ տեսցի գործ գառըն գաճճայ.
Ոչ մարդոյ է այն, այլ բարք գազանաց
Ընկճել և մաշել զենթարկեալս անձանց:

ՀՈՎԻՒ ԵՒ ԱՅԾ

Մի բարկութեամբ հարկաներ զոք,
Զի ոչ հարուած բառնի վիրօք:
Լեզի խօսքով մարդ է շտիէր,
Ե՛ւ ՚ի՛ր ՚ի՛ր ի է ծծըմէր:

ՃՃՁ. Հովիւ մը բարկանալով գարկաւ այծին գլխուն անանկ տասակ որ՝ մէկ եղջիւրը կոտրեցաւ. բայց շուտով զղջացաւ ըրածին վրայ ու կապաչէր այծին որ տիրոջը բան չըսէ: Պատասխանեց այծը. ով Թշուառական յիմար, ես Թող անանկ բարի ըլլամ որ մեր տիրոջը բան չըսեմ, իսկ ան աչք չունի՛ չի տեսներ Թէ մէկ եղջիւրս պակաս է:

Բարկասէրը մարդն ինչ որ ընէ՝ վէրքը չի մտածէր, անոր համար շուտով կը զղջայ ըրածին վրայ. մար-

դու կը վայլէ որ բարկութիւնդ մէջ անանկ բան ընէ որ եպիսը վիշտը լինի։ Շատ իշխան է որ իրեն վրայ վէճ կը նայի, շատ իշխանութիւնի ընելու կուգէ Սողոմ։

Տարապարտ գաւազան բարկասիրտ անձին
Իջրև բոց հրոյ վառի ի սրտին.
Զղջումն ապաշաւ հեռևակ նըմին
Խայթեն խլռավեն փուքիվ զայն հոգին։
Արդ մի բարկութիւնդ գործեր զանբարին,
Յորժամ մաղձ արեան եռայ ի լերդին.
Բարեխաւան եղեալ ի բարկանալին,
Չի մի զղջացիս ի սարսղիլ բանին։

ՆԱԻԱՊԵՏ

Այր նախաւեր ոչինչ զղջայ
Երբ յեղյուսկ յայլոզ զարկէն խիթայ։

Արիւնն մարդկի ինչպ պաճրասպ կան,
Վրանգն որ գայ պղտիպ կըլլան։

ՃՃՀ. Երբոր հովը յայլոզ և ծովը հանդարտ էր, նաւապետ մը գնաց իր նաւը նայելու. խարխիսը (էնկէրը) տեղը հաստատեց, ջուաններըը պատրաստեց և վեր վար կերթար կուգար առաջատներուն քովերն ու ամէն բանին զգուշութիւն ընելով կը նայէր։ Ճամբորդներէն մէկը զարմանալով ըսաց. տէր, ինչ պատճառաւ ատանկ շատ կը հոգաս, աս ըրած հոգդ ով որ տես-

նէ կարծէ թէ մօտ ենք վտանգին. ահա ծովին ու հովը մեր վրայ կը ծիծաղին, դուն ինչո՞ւ համար կը վախնաս: Հիմա բանէ մը չեմ վախնար, ըսաց խեղացի նաւապետը, բայց գալիքներուն վրայ միշտ կը վախնամ. վասն զի բան չհամաձած ատեններս կրնայ մէկ ա֊լեկոծութիւն մը ելլել: Կաղաչեմ ըսէ, ե֊թէ յանկարծ փոթորիկ մը հասնի վրանիս՝ մենք անանկ անպատրաստ ո՞ւր կերթանք:

Խոհէմ մարդը պէտք է որ յաջողութեան մէջ չա֊խող դէպքերուն վախնալուն զգուշա֊ւոր կենայ, և չախորժութեան մէջ առանց յուսահատելու յաջողութեան ապաւէն. ինչպէս նաւը կամ (թաւլոս) խաղցողները կընէն, երբ յաջողութեան մէջ շատ բացուին, կամ չախորժութեան մէջ խառնվին՝ դէշ խաղը կը փոխընդունին:

Տես զնաւդ խնթայ միտք խոհականին
Ըզձախտաղակէն՝ ի յաջող ելին.
Քանզի յանկայուն շրջի՝ ի ծովին
Ի կիտէ՝ ի կէտ փոփոխականին:
Ծով է այս աշխարհ ծըփեալ երեքին,
Ալեբեր հոլմունք՝ ի նոյն փոթորկին.
Արթուն կաց ըզգաստ ըստ քոջ նաւուղին:
Զի մի սուզեացի նաւ տիրականին:

ԽԱՂԱԽՈՐԴ ԵՒ ՈՍՏԻԿԱՆ

Ալլոց անդէպ գործոց համբեր
Թէ և լսեն քեզ վշտամբեր :

Ով որ այլոց կը համբերէ,
Լէգիւն էրէն փաղշը համ ըէրէ :

ՃՃԸ. Մէկ խաղախորդ մը դրացի ելաւ ոստիկանի մը որ սէրուեթե մարդ ըլլալով չհամբերեց անոր կաշկանելուն գարշահոտութեանը՝ մինչև դատաստանի կանչեց և կուզէր որ ալարտաւորի դրացիութենէն հեռանալու . իսկ դրացին շատ պատճառներով անանկ լաւ պաշտպանեց զինքն որ դատաստանը հեռու ձգել տուաւ : Սակայն ոստիկանը տրվեցաւ գէշ հոտին , անանկ որ շատ ցաւեցաւ մխած ոսկին վրայ որ փուճ սէրը դատաստանի կանչեց : Ուստի անկէ ետև համբերեց դրացին , ամենևին տրտունջ մը չըրաւ :

Ով որ դրացին կամ ընկերին մէկ նէղութիւն մը կը փեռնէ՝ պէտք է մտքը դնել ինքն ալ չափ պահասութիւն ունի որ ըսուիշը կը նեղէ . և այսպէս իրարու պահասութիւնը գոցելով, կը վայելէ սէրով ապրիլ . վասն՞զի ամէն բան կանցնի՝ բայց էնպէս լաւը լանցնիր կըսեն :

Ա յսպէս կարճամիտք փուճով զայրագնին
Ի վերայ Թեթև բանից ընկերին .
Բայց յետոյ իբրև ՚ի միաբս լինին,
Տեղն տան կըրից սիրով կենակցին :
Արդ մի զայրանար ընդ գործ օտարին,
Մի յարուցաներ կապ ընդ դրացին .
Զի ամէն լեզու սիրով համեմին,
Եւ սուրբ Թեամբ անսովրք դիւրին :

ՃՈՒՆ ՊԱՅՏԱՌԻ

Անգործ հանգիստ և քուն յերկաք,
Ախտից լինին անընդարար :

Գործէ ապէն ծոյն է ըմբռած,
Հոգն որ փեսնէ կենէն ոպաց :

Ճէֆ. Պայտառին (նալպանտին) շուռնը ստվուռթիւն էր ըրեր որ միշտ պատուկեր կը քնանար առվնն (էօրդին) քով. Թէպէտ պայտառը շատ անգամ երկաթ կը ծեծէր առնլին վրայ, բայց շուռնն ամենևին չէր արթընար. և ընդհակառակն երբոր պայտառը գործքը կը ձգէր կերակուր ուտելու կերթար՝ շուտ մը շուռնը սեղանին ձայնէն կարթընար ու վեր կը ցաթկեր մէկէն սեղանին կը վազէր :

Օրինակ է ծուլութիւն. զոր մարդ կայ որ գործէ ապէն ըմբռած կը ձգայ, բայց կերակրէ ապէն ա-

նանկ արևուն է որ ուրիշի բան չի նողոր. ուսոք
էնիչ հանգիստ ու փառը չանն արևուն քնուրիքանը
ի՛չ ֆոխեն անպիտան կընեն, հապա մարդուն ի՞նչ չէն
ըներ որ հանգիստ ի՛չ սիրէ:

Ա յսպէս վատթարեալ յետամիտ ծուլին,
Եղծեալ զարթնուլեն ննջէ քուն խորին.
Որով կարգն ուղիղ խամրեալ բընածին,
Արթուն կայ ըզդատ միայն յուսահլին:
Մի՛ քնաքուրեամբ շնջգի լոյս բանին,
Եւ մի՛ ուսեալոք թըմրանալ յանձին.
Քանզի հեզգ պլնացք ըզբազում արկին
Ի լոյն որովայն կորըստական:

ԲԱԶԻԿ

Կապ և կըռիւ կըռուսախրաց
Յօգուտ կարգին բարեսիրաց:

Անզգաստները երբ ի՛չ ի՛մուին,
Բարի մարդին հանգիստ ունին:

Ձղ. Երբեմն բազէները նրանց մէջ խառ-
վութիւն ունէին որ անդադար կը կռուէին
իրարու հետ, և սուսլ ուրիշ թռչուններըը
հանգիստ էին անոնց ձեռքէն: Իսկ միամիտ
աղաւնիները տեսնելով անոնց թշնամա-
թիւը՝ բարեգործութիւն ընելու համար մէջեր-
նին մտան հաշտեցուցին, բայց շուտով զղջա-
ցան. վասն զի անզգաստները հաշտուածնուն

պէս՝ մէկէն սկսան հալածել ուրիշ թուչուն-
ներն և սղաւնիները՝ անանկ որ ամենևին
անոնց հանդիստ չէին տար. ուստի սղաւ-
նիները ցաւելով կըսէին թէ շատ ալէկ է
աստղց մէջ միշտ պատերազմ ըլլալ քան թէ
խաղաղութիւն:

Ամէն փէղ հաշտուիլն ընելն ալէկ չէ, էր-
բեմն ինչպէս որ հաշտուիլ ընելով՝ աւելի մեծ վնաս
կը ծագի, որովհետև գէշ մարդիկ էրեսնուց մէջ էր-
բոր կուգան՝ բարեպաշտութիւնը փէլ մը հանգիստ
կը ձգան:

Անհանդարտ գըրգռիչք միշտ՝ ի վէգ բերին,
Եթէ ընդ իրեարս թէ ընդ օտարին.
Որժամ խաժատեն զիւրեանց ըզմարմին,
Բարեաբոյք անվէր և հանգիստ նըստին:
Արդ մի կըցորդիր ընդ գործոց նոցին,
Զի մի այն հալուածք քեզ փոխաբերցին.
Դըժնեայ անզգամք երբ միաբանին,
Խըռովեն զարդար զընկեր գըրացին:

ՀՈՎԻՒ ԵՒ ՈՉԽԱՐ

Թէ երախտիք ճանաչէին,
Աւելցած ոչխարիք ոչ զոհէին։

Անիբաւ ու գէշ իշան չընէ,
Մէյ իշարուհիւն պայն կը սիրէ։

Ճղճ. Հովիւ մը պատահանօք առաւիկ կը զարնէր ոչխարին։ Ես քեզ, ըսաց ոչխարը, բուրդ և կաթ կուտամ, բարեւթէ'ւ զատ ո-
րիշ բան չեմ ըրած քեզի. ապերախտ, դուն ինչո՞ւ ատանկ միշտ դէշութեն կրնես ինծի։ Պատասխանեց հովիւը, թէ ապերախտ դուն ես որ զիս չես սեպեր, վասն զի իմ ապէկու-
թիւնս քու կեանքդ քեզի բաշխելն է, ասով-
հետև ամէն վայրկեան կեանքդ իմ ձեռքս է, երբոր ուզեմ կրնամ վերցընել։

Անիբաւ մարդին ինչ ապերախտին որ ուրիշէն
փնտռէ՝ ձեզ՛ զիրենք ատթանի կը հաճարէին, և երբ
իրենց ուրիշին գէշութիւն մը չընեն՝ ձեզ երախ-
տիք կը սպասեն. բայց այ տափտափանն որ բաղ-
ձայ իրենց։

Ախ գործ է և բարք ժանտ ապիրատին,
Կռփիկ հարկանէ երախտաւորին։

Իբրև զաւասուր գառնանայ նըմին,
Թէ քո կեանք և մահ ոչնիմ՝ ի ձեռին:
Բայց գայ ժամինակ քընանել ջերկոսին,
Պըտակ պարծանաց պահի անմեղին.
Աըդարք աստ տանջին և անդէն հըրձուին,
Ձրկոտք աստ հըրձուին և անդէն տանջին:

ԱՐԾԻՒ ԵՒ ԿԱՋԱՂԱԿ

Բանք և գըրոյցք ըզվարս մարդկան
Ծածկեն յայտնեն միանգամայն:

Մարդս խոյր էրէն խօսքն է,
Ինչ ընտրը ան կը յայտնէ:

Ճղէ. Թռչուններըը պարտաւորեցին ար-
ծիւն որ վերենք կառավարելով թագաւորէ.
ան ալ անոնց հասկըցուց թէ իրենցմէ մէկը
պէտք է օգնական ըլլայ որ իրեն աշխատան-
քին մէկ մասն ալ ան ընէ որ ինքը թեթևնայ:
Ա՛ս բանիս համար կաչաղակն ելաւ անոնց
մէջէն եկաւ արծիւին ծառայութիւն ընե-
լու, որուն առջին դրաւ չէ թէ միայն իր մար-
մինն որ թեթև և յարմար է շուտով կառա-
րելու ինչ որ իրեն հրամչ, այլ և ունի մէկ
զարմանալի յիշողութիւն մը և բարակ տես
միտք մը. գալձեալ թէ յաջող է՝ արթուն
և աշխատասէր: Երբոր անհամար ուրիշ
շատ կառավարելութիւններըը ալիսի մանր-
մասն պատմէր, արծիւը մէկէն կտրեց անոր

խօսքն ու ըսաց · այսչափ կատարեալ ըլ-
լալովդ դուն ինծի շատ յարմար ես , բայց
պէշն աս է որ խիստ շատախօս կերևնաս ·
վա՛ զի կատակած եկաւ որ չըլլայ թէ երթաս
ամենուն խմացընես իմ պալատիս մէջի եղած
ծածուկ բաները : Ուստի շնորհակալ ըլլա-
լով անոր՝ շուտ մը ձամբեց :

Շապիկաօս մարդը որչափ աւելի պինդը գովէ ,
այնչափ անհաճոյ կըլլայ մանաւանդ մեծամեծաց առ-
ջին · ասոնք լսած կենալնա է որ ասիլիները գովէն
իր լաւութիւնը չէ ըլլ պինդը : Խելացի մարդը փուշ խօ-
սել կը սիրէ , կըսէ իմաստունը :

Ա յտպէս շատաբանք ՚ի գովեստ անձին
Յերևան ածեն զխուրեանց ըզմիերին ·
կարծեն թէ բանիւ ցանկալի լինին ,
Այնու տալտկալի յաւէտ բոլորին :
Արդ մի ինքնահաճ պանծար առ վեհին ,
Մի զքեզ առարկեր յատուիճան վերին ,
Զի որք վերանան հարկիւ վայրբերին ,
Եւ ինքնահաւանք նանրանան խոտին :

ԿԻՆ ԵՒ ՄԱՀ

Մի հաւատար կանանց ձայնին,
Որ փոյթ կուշէն ըզմահ-ան ձին:

Կանանց ձայնը էպէ չէլսրծէ,
Որ էիւ բանով մահ կը կանչէ:

Ճղէֆ. Ա էկ հիւանդ մը երբոր ալիսն մեռ-նէր, կնիկը յուսահատելով կը պոռար և լա-լով կըսէր. Ով մահ, հասիր ինծի ու կակիծս վերջացուր. մի ուշանար եկո արևս կարձե-ցուր, երանի էր թէ իմ կեանքս վերցընէիր ընկերոջս տակը: Դարձեալ կըսէր. Ով մահ, ինչմ կուշանաս, ես քեզի կըսպասեմ, ես քեզ կը փափաքիմ կուզեմ: Ահա ես՝ ըսաց մահն երևնալով անոր, ինչ կը խնդրես ինձմէ: Կնիկը տեսաւ որ մահն իրեն կը մօտե-նայ, պատասխանեց դողալով. Ո՛հ կաղաչեմ, առանց երկընցընելու ընկերոջս ցաւերը՝ շուտով հոգին առ որ վերջանայ հիւանդու-թիւնը:

Որչափ որ մահը մահկանացու բնութիւնեան ապէրի է, այնչափ ալ մօտ է ամենուն որ ամեն գիպուածով գոգայ կը հասնի. ուրեմն ալ պէտք է մահը կանչել և ալ ալ մահէն ֆոխչիլ:

Զինչ հրեշտակոյն քան զմահ ասացին,
Որ նիւն առնէ զանյաղթ կռուելին.
Լուծանէ ըզսէր անքակ լծակցին,
Մինչ յղել ըզնահ իւր քաղցր անձկալին:
Բուռն է սէր հրեշտ իւր ասպարիզին,
Բայց 'ի մահուանէ լուծանի հեշտին.
Առեալն արկած ըզդայականին,
Վէր 'ի վայր առնէ զարուեստ աշխարհին:

ԳՈՂ ԵՒ ԱՂՔԱՏ

Որ դընէ զաչս յինչս օտարին,
Տոյժ և չարիք լինքեան գիտին:

Ո՛վ որ պայս պըրիւել խոպէ,
Իրեն գըւխուն վայ կը բերէ:

Ծնիլ. Գիներ մը գող կը մտնէ տղքտոի մը խուց. դռանը բացուելուս ձայնէն կարծեցնայ տղքատն ու անանկ տռակալն ձայն կը հանէ որ բոլոր տունը թռունդ կելլէ: Իսկ գողը չի կրնար հոն մնալու, անանկ կը վախնայ որ՝ առանց բան մի նայելու կը ձգէ վրայէն տղեն ու կը փախչի անկէց շուտով: Եւ այսպէս Աստուած եղաւ անոր որ բան առնել կուզէր, և շահն եղաւ անոր որ կարծէր թէ բան պիտի կորսնցընէ:

Անբաւականութեան և գողութեան էսկե եղողնէրը մեզի պէտ արդար վաճառականին կորսնցընելնէ էսկ մո-

խէր դարձեր էն. վան պէ անէրաւորնէը կրակէ պէս
հէրէ ու՞ր որ մնանէ:

Այս է շահ գոլոց աւազակոցին,
Զըրկիլ՝ի շահուց իւր սեպհականին.
Գանգլն անիրաւք աստ և անդ զըրկին,
Ի կրկին վնճակ աղքատ և մերկին:
Ա՛ռ քեզ՝ի խըրատ բան զառաւոցին
Մի՛ յանկար ընչից փոքու և մեծին.
Զի գոլօնք գոլոց ոչնչ շահ բերին,
Եւ զարդար վաստակս յաճխուն դարձուցին:

ՄԱՐԴ ԵՒ ԳԱՆՁ

Արդ մի՛ մերժեր զառիթ բաղդին,
Որ ոչ գառնայ յիւր շըրջանին:

Բարին ծուղնէ բաղդէ որ բացուէ,
Զի եթ չէ գար երբէք կանգնէ:

Ակն. Խնամ հարուստ մարդ մը ձամբուն վրայ գանձ կը գտնէ, բայց անանկ մեծութենէ մէջ էր որ տանելուն չէր երևակայեր թէ օր կուգայ որ կարօտ կըլլայ ան գանձին որ գտեր էր. ան պատճառաւ և ոչ զինքն արժանի սեպեց որ ծախ գեռնէն գանձը վերցընէ, ուստի ձգեց գնաց: Ժամանակ մը անցաւ, ասոր մէկ նաւն ընկղմեցաւ բոլոր բանումն որ շատ ծանրագին ապրանքով բեռցուցեր էր. և մէկ վաճառական մը բացին եկաւ ու ան հարուստին

շատ ապրանքը փճացուց: Յետոյ կրակ ընկաւ տունը, բոլոր բանուկը մոխիր դարձուց: Դատաստանի մը մէջ ալ երաւունքը կորսընցընելով շատ բանէ ելաւ, մինչև աս բանները ալքըտցաւ մարդը: Ան տեղը միտքը բերաւ ձգած գանձն ու վազեց հան որ առնէ, բայց բանը բանէն անցեր էր. վասն զի երբոր առաջ ան տեղէն քանի մը քայլ հեռացեր էր, մէկ ուրկէ կարօտ մարդ մը անկէ անցնելով տեսեր էր գանձն ու առեր շուտով փախեր էր:

Հարուստ մարդուն կարծեն ըլլ ունչ անանկ պէտք ման, էնպես ըլլ ապուերը պէս կը փախչի կերթայ. այսօր ունին, վաղը ունիալին տով կը պարպի. էրկն լուանին հագնուր բարի, անկէ շահ մը չըլլար:

Այսպէս է խորհուրդ անմիտ փարթամին,
Կարծէ միշտ ինքեան դաշնակցիլ բաղդին.
Այլ աւազ փառայ դիւրափոփոխին,
Որ փախչի գընայ նըման առուերին:
Մի վստահանար յանցաւոր ոգւին,
Ըզգանձս իմաստից ժողովեա յանձին.
Զի ՚ի հոլովիլ ձախողակ անուին,
Գանձք իմաստութե ՚ն քեզ ձոխասցին:



ճՀԶ. Նապաստակ և կաքաւ: ՄԵ. Գայլ և Ոչխար:



ՄԶ. Առիւծ և Ձանձ: ՄԹ. Աղուէս և Ոզնի:



ՄՅԲ. Աղուէս և Գայլ: ՄՅԶ. Ոզնի և Օձ:

ՆԱՊԱՍՏԱԿ ԵՒ ԿԱՓԱՒ

Որ ընդ այլոց ալկած խընդայ,
Նովին չարեաք պատժի և նա:

Երբ ուրիշի հը հասնի լար,
Քեզ ալ հոգայ զոտ ի՛ խընդալ:

Ճղէզ. Մէկ նապաստակ մը կը բռնուի որ-
սորդին որոգայթին մէջ. երբոր անօգուտ
տեղն ատգին անդին կը զարնուէր որ ազատի՝
կաքաւը տեսաւ զինքն ու ծաղը ընելով կան-
չեց. Բարեկամ, ուր են ոտքերդ որոնց վրայ
կը պարծենայիր թէ շուտ կը վազեմ. ահա
գեղեցիկ առիթ զանոնք գործածելու, զորոյ
կեցիր որ չիկորսընցընես. վազէ, քալ եղիր,
չանա որ վիս անցնիս առ գաշտիս մէջ ջորս
անգամ չաթիկելով: Երբոր ատանկ կը խըն-
տար նապաստակին վրայ՝ շուտով իրեն ալ
անոր նմանն եղաւ. վասն զի ատանկ անհոգ
ծիծաղելու առեներ մէկալին թշուառութիւնը
վրայ, մէկ բազէ մը տեսաւ զինքն ու վրան
հասաւ յափշտակեց:

Մարդկային բնութիւնը հարեւին ըլլալով պէտք է
իրարու օգնենք և հիւանդութին ալխրճիս պատռնա-
ւիք. ով որ ընչահատուիք ուրիշի չարեաց վրայ հը
խնդայ՝ հապաւին նման հը հրատուի:

Ա՛յս չարաբընդրայց գործ վըխժաուսին
Ըզնոյն պատուհաս պատճառեաց անձին.
Զոր ինչ ոչ ցանկայ լինել օտարին,
Թէ բարի Թէ չար հանգիսիլ նըմին:
Կարեկցիլ այլոց է բանականին,
Մեղմել զդառնութիւն վշտաց ընկերին.
Դու մի՛ ոանականս լինիր Թշուառին,
Չի մի՛ այն ապէտք քեզ վոսաբերցին:

ԾԵՐ ԱՄՈՒՍՆԱՑԵԱԼ

Յորժամ ծեր ոչ զառամանայ,
Մինչ ապրցոց՝ ի նոյն գառնայ:
Ծերը դառնաց համուկ կըլլայ,
Երբ վխայլած բան կը հոգայ:

մլէ. Ա՛ԷԿ մարդ մը չափահաս եղաւ ու ամենևին մոքին չէր անցներ կարդալ: Երբոր աստեղը հասաւ, մեկին չէր հասներ որ ասնէ՝ մինչև տարիքն առաւ: Իսկ ծերութիւնէ ասեղը սեսաւ որ տարիքին չառաջնէն ինչինեղուան ծանրութիւն կըլլայ՝ կամեցաւ անոնցմէ մեկ կին մը առնել: Վերջապէս գրեթէ ալ խոփեր էր, մեկ մանկահասակ (ինձ) կնկան մը հասնեցաւ և զինքն անանկ զօրեղ հարուստ և մեծատուն ցոյց՝ մինչև կինն ալ հաւանութիւն տուաւ առնելու. բայց շատ չանցաւ զրջացաւ մարդը, վասն զի տակին ասեղը ձեռնդրէքն որ

Եղաւ՝ (փէր էմ) ըսածինպէս՝ հասկըցաւ ծերն ըրած սխալմունքը, սկսաւ պոռալ. Վայ գլխուս՝ կըսէր զարմանալով, ինչ պէտք էր ինծի կապուիլ անանկ բանով մը որ հնա ամենևին հարկաւոր չէ ինծի. երբոր կը վայլէր աս քեռը տանել՝ ան առնը չուզեցի, հիմա ինչ խելքով կուզեմ:

Խրատ է անոնց որ ապերով աշխարհք չէն մտնէր, ու երբոր պարիսներն հասնէն հետզհետէ ժողովրդեան մէջ իյնելով երեսնց հասարին չնվայլածը կընէն: Հասուն մարդու ըսած անհարգուածութիւնը խիստ գէշ հնչելայ կըսեն:

Ա յսպէս՝ ի մանուկ վտխի ծերուն[ի]ն,
Գործէ զանպատշաճս իւրում հասակին.
Զի թէ միտք արթուն չկայ ի նմին,
Ալիք ծերութեան ոչ՝ ի շահ բերին:
Ալիք ծերութեան ասի՝ ի գլխին
Ի խնաստութեամբ հասակ բարձին.
Չանա ծերանալ՝ ի տխս խնամին,
Զի մի գոլցեսցես անվայելս անձին:

ԱՒԻԾ ԵՒ ՈՐՍՈՐԴ

Մի հեռևիր անկարգ բերմանդ,
Զի մի նկուն լսցիս խոտանդ:

Անկարգ բանէն հեռու կենաս,
Ոչ լար մահին յեռուէ չէնաս:

Ճղճ. Առիւծ մը կուզէր որսորդին ալ-
ջիկն առնել, ուստի վազեց հօրը տունը
խնդրեց որ տայ իրեն. իսկ որսորդը տեսաւ
Թէ աս առակալն գազանին հետ դլուխ չէլ-
լուիր, և որովհետև կը վախնար անկէ՝ չէ
ալ ընկերցաւ ըսելու, ուզէց խորամանկու-
Թիւն բան տեսնել: Առիւծին ըսաց Թէ դուն
իմ աղջիկս կուզես, խնամ լաւ. ինծի որ
քու բաղձանքիդ չես կրնար հասնիլ, վասն
զի աղջիկս կը վախնայ Թէ կամ ակռաներդ
և կամ եղունգներդ զինքը կը պատառեն. ուս-
ուի պարտն առիւծ, քեզի լաւ կըլլայ՝ եԹէ
կամենաս ակռաներդ հանելէն ետև եղունգ-
ներդ ալ փրցընելէ, ան ատենն ամէն ու-
զածդ շատ լաւ կերպով կը կատարուի: Իսկ
առիւծին միտքը չանկուեԹիւ կուրացած ըլ-
լալով չիհասկըցաւ գլխուն դալիքն որ Թըշ-
նամւոյն ձեռքը պիտի մատնուի, Թողուց որ
զէնքերն իրմէն հանեցին. ատանկ եղածին-
պէս վրան Թափեցան շները, որսորդը և
աղջիկը՝ զարկին մեռուցին:

Խրատ է երիտասարդաց որ անկարգ ցանկութենէ հեռանալով լինուրանան և իրենց պէրճնոց կորսընծանէն : Առանկ եղաւ անյաղթելի Սամսոնը որ փառաւոր աշխարհ գողացուց ամենուն չպղտնէց , բայց չեպոյ կնկան յետոփը մատնուեցաւ ու այնպէս կոյր՝ երկաթներով կապած բանտերուն մէջ մաշեցաւ :

Ախ անկարգք բերմունք մոլեալ առիւծին
Զինաթափ նըկուն արար զամէհին .
Ախն գողացուցիչ ծովու ցամաքին՝
Տես զիարդ ընկճի բանիւ նենգողին :
Ով քանի հզօրք այսպէս մոլեգին
Ի ձեռն կանանց յերկաթ կաշկանդին .
Որոց կեանք արև վայրէր ՚ի գահին
Ապա մաշեցան ՚ի լծախիծ բանտին :

ԳՒՏՈՒՆ ԵՒ ՌԱՄԻԿ

Յայնժամ գիտուն միայնակ կայ՝
Յորժամ ռամիկք գընան առ նա :

Գիպուն մարդը մինակ կըլլայ՝
Երբ անխելք մը փովը կերթայ :

Չլլէ . Փիլիսոփայ մը մինակ նստած խուցին մէջ միշտ կը մտմըտար . օր մը գեղացի ռամիկ մարդ մը տեսաւ զայն մինակ՝ շատ զարմանալով ըսաց իրեն . Իմ խելքս չի հասնիր թէ ինչ պատճառով մինակութիւնը կը սիրես այսչափ . երդում ըլլայ քեզի որ ես

հազար տարի առ քանը չէի ընդունել։ Երեան անդին դարձընելով սատասխան տուաւ վիլհեսոփան. դուն խնատ դիւրին կընդունէիր թէ որ գիտնայիր թէ քուկին հոս ըլլալէ և քեզի պէս մարդկանց համ քովս գալը որչափ ինծի նեղութիւն կուտան, դուն ան առեներ մինակ կը մնայիր։

Օրինակ ե խրատ է գիպնականաց ե փահանայից որոնց պէտ է մեզի փաղաքաժ ընդունիլ գրոց հետ խօսակցիլ. ինչ որ աշխարհական առմիներըը պարմանալով բան ըսեն, մտիկ ընելու չէ։

Արդ խմաստասէրք երբ կան առանձին,
Ընթերցմամբ գրոց քաղցրը կենակցին.
Զի միայն խմաստն է Ճարտակ մտաց,
Ընկեր կենակից բարեկամ անպին։
Փախչը յամբոխ խառնաղանձ ամկին,
Յառանձնատ վայրի խօսիլ ընդ գրքին.
Քանզի աղգակից Աստուծոյ ասին,
Որ լուիկ ’ի բանս խմաստնոց յաւին։

ՆԱԽԱՆՁՈՂ ԵՒ ԱԳԱՀ

Փառք ցանկալի նախանձաւուբին
Պատիժ մեսան է ընկերին:

Նախանձոտին մինակ խնդամ
Է ուրիշին վէշան ու ջըրհամ:

Մ. Նախանձոտութեան ոգին միատեղ Դիոս-
սին ուրբն ընկան ալաչեցին որ իր բարերա-
րութիւնը յայտնելով անոնց ընորհք մը ընէ.
նակ Դիոս կը նայէր որ աւելի զանոնք պատ-
ժէ քան թէ բարիք տայ իրենց. աս կերպով
զիրենք պատուհասեց: Ըսաց նախանձոտին.
նախ գուն քան մը խնդրէ և ապահով եղիր
որ ըրած խնդիրքդ պիտի առնես, բայց աս
ալ դիտուտ որ ես քեզի ինչ որ տամ՝ մե-
կալն անոր կրկնապատիկը պիտի առնէ, ու-
